



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների
խախտման դեպքերի մասին
տարեկան հաշվետվություն

(ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2016թ. հունվար-դեկտեմբեր

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ



Վանաձոր 2017թ.

Հաշվետվությունը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ Հայաստան,

Վանաձոր 2001, Հեռ.՝ (+374 322) 4 22 68

Ֆաքս՝ (+374 322) 4 12 36

Էլ. փոստ՝ hca.v@hca.v.am

www.hca.v.am

ՀՀ օրենքը ՀՀ ռատիկանության կարգապահական կանոնադիրը
Հոդված 10. Ռատիկանության ծառայողի էթիկայի կանոնները

Ռատիկանության ծառայողի էթիկայի կանոնները ռատիկանության ծառայողի համար պարտադիր են ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս:

Ռատիկանության ծառայողը պարտավոր է իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն և քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ:

Մեթոդաբանություն

Սույն տեղեկանքն ամփոփում է 2016 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ-ում ռատիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Ռատիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 14 առցանց լրատվամիջոց և ՀՀ Հատուկ Քննչական Ծառայության ու Ռատիկանության պաշտոնական կայքէջերը¹:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: Մարդու իրավունքի խախտման դեպքերն աղյուսակավորվել են ըստ մի շարք չափանիշների:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երեք պայմանական խմբի՝ անհատական բնույթի դեպքեր, հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր և ահազանգեր (իրավունքի խախտման դեպքեր, որոնցում տեղեկատվությունը խախտման մասին հոդվածում ներկայացվում է երրորդ անձի (անձանց)

¹ Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.arm-lur.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.1in.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.hetq.am, www.alplus.am, www.ccc.am:

կողմից: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

Նշենք, որ տվյալների օբյեկտիվությունն երաշխավորելու համար զերծ ենք մնացել ենթադրությունների անելուց, և անգամ եթե ընդհանուր համատեքստը կապված է եղել հավաքների հետ, եթե հոդվածում գրված չի եղել, որ խախտումը տեղի է ունեցել հավաքի ժամանակ կամ դրան մասնակցելու հետևանքով, դեպքը համարել ենք անհատական:

Տեղեկանքում բացի ապօրինի բերման ենթարկելու դեպքերից անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել նաև այն բոլոր դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվել ոստիկանություն պայմանականորեն օրենքի տարրին համաձայն, սակայն պահվել է ոստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 3 ժամից ավել (հոդված 131¹)²:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված են հետևյալ դասակարգմամբ.

2016 թ.-ի ընթացքում խախտված մարդու իրավունքները³,

1. Ազատ տեղաշարժվելու իրավունք
2. Ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու եւ բնակչի՝ ըստ բնակության վայրի հաշվառվելու իրավունք
3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք
4. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
5. Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք
6. Առևտրային գաղտնիքի իրավունք
7. Առողջության իրավունք
8. Արդար դատաքննության իրավունք
9. Արտահայտվելու ազատության իրավունք
10. Բնակարանի անձեռնմխելիության իրավունք
11. Գույքի և սեփականության անձեռնմխելիության իրավունք
12. Դիտորդություն իրականացնելու իրավունք
13. Ընտրական իրավունք
14. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք
15. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք
16. Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը: Հասանելի է <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=68011>

³ Տե՛ս Աղյուսակ 1

17. Խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունք
18. Խոսքի ազատության իրավունք
19. Խտրականությունից զերծ մնալու իրավունք
20. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք
21. Տեղեկատվություն ստանալու իրավունք
22. Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք

Այս դասակարգումը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան՝ և լրագրողական գործառույթների իրականացնող անձանց մասնագիտական գործունեության խոչընդոտման հետևանքով խախտումները՝ իրավունքների խախտման բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Խախտված իրավունքների վերաբերյալ հաշվարկում ներառված են ինչպես կոնկրետ իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ այլ իրավունքների խախտման հետ զուգորդված դեպքերը:

«Սասնա Շոեր» խմբավորման կողմից ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի տարածքը գրավելուն հաջորդած հանրային միջոցառումները և ոստիկանության գործողությունները ներկայացնելիս հաշվի առնելով, որ ՋԼՄ-ներում բացակայում է ստույգ տեղեկատվություն առ այն, թե քանի հոգի է բերման ենթարկվել 2016 թ.-ի հուլիսի 17-ին, իմի բերելով ՋԼՄ հրապարակված տարբեր տվյալները, որոնք համաձայն այդ օրը միայն ոստիկանության ներքին գործերի գորամասեր բերման են ենթարկվել թիվը 100-200 հոգի, հուլիսի 17-ին ոստիկանության ներքին գործերի գորամաս բերման ենթարկվածների միջին թիվը գնահատել ենք 150 հոգի: Համաձայն ՋԼՄ հրապարակումների, ոստիկանության ներքին գործերի գորամասերում բազմաթիվ անձինք պահվել են 10-ը ժամից ավելի առանց սննդի, ջրի, նրանց չի թույլատրվել զանգ կատարել, ստանալ իրավաբանական օգնություն, պատշաճ բուժօգնություն և նրանք ենթարկվել են խոշտանգումների: Ելնելով նաև այս տվյալներից՝ սույն տեղեկանքում 2016 թ.-ի հուլիսի 17-ին ոստիկանության ներքին գործերի գորամաս բերման ենթարկված անձանց և նրանց ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, իրավաբանական օգնություն ստանալու և արդար դատաքնության իրավունքներից օգտվելու անհնարինության դեպքը համարել ենք մեկ դեպք, իսկ անձանց թիվը, որոնց բացի ապօրինի բերման ենթարկելու հետևանքով ազատության իրավունքից, խախտվել են նաև վերոնշյալ իրավունքները, գնահատել ենք միջինացված 75 հոգի (բերման ենթարկված 150 հոգու միջինացված թիվը):

Առանձին դեպքերով են ներկայացվել այն բոլոր իրավունքի խախտումները, որոնց մասին ՋԼՄ-ներին անձամբ հայտնել են տուժողները կամ ականատեսները:

2016 թ.-ի ընթացքում արձանագրված մարդու իրավունքների խախտման դեպքերի ամփոփ տվյալներ

Նախաբան

2016 թ.-ին ոստիկանությանը ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 40 մլն 823 հազար 825.3 ՀՀ դրամ, ինչը 1 մլն 122 հազարով (կամ 2.8%-ով) գերազանցում է 2015 թ.-ի բյուջետային հատկացումները (39 մլն 701 հազար 161.9 ՀՀ դրամ)⁴: Աճել են նաև աշխատողների աշխատավարձերը և հավելավճարները⁵:

Զուգահեռաբար աճել է 2016 թ.-ին գրանցված հանցագործությունների թիվը: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի, համաձայն ՀՀ ԱՎԾ հաշվարկած տվյալների, 2016 թ.-ի հունվար-հոկտեմբերին գրանցված հանցագործությունների թիվը կազմել է 15 հազար 461, որն անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 1446-ով: Հասկանալի է, որ պաշտոնապես արձանագրվել է պետական իշխանության ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների կրկնակի աճ: Այս տարվա հունվար-հոկտեմբերին գրանցվել է 2284 նման հանցագործություն, որը 1404-ով ավել է անցած տարվա նույն ժամանակահատվածից⁶:

Ոստիկանության կողմից արձանագրված հանցագործությունների թվի աճը ցույց է տալիս, որ 2016 թ.-ին բավականին լարված է եղել քրեական իրավիճակը: Պետք է նկատել, որ հանցագործությունների արձանագրված դեպքերի աճին զուգահեռ մեծացել են նաև քաղաքացիների նկատմամբ ոստիկանության ոտնձգությունները:

Ինչով առանձնացավ 2016 թվականը

2016 թ.-ն աննախադեպ էր ՀՀ ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման տեսակետից:

Օրինակ, 2016 թ.-ի հունիսի 25-ին ՀՀ Հռոմի պապ Ֆրանցիսկոսի պաշտոնական այցի ժամանակ ոստիկանությունը դիմել էր «նախահարձակ» գործողությունների: Մասնավորապես քաղաքացիական հագուստով ոստիկաններն օրվա տարբեր ժամերին առանց հիմքի բերման են ենթարկել «Հիմնադիր խորհրդարան»-ի աջակիցներին և

⁴ Տե՛ս Ամփոփ տեղեկատվություն՝ 2016 թ. պետական բյուջեով ՀՀ ոստիկանությանը ըստ տնճակագրական հասկարգման հոդվածների կատարվող հատկացումների վերաբերյալ: Հասանելի է

<http://www.police.am/news/view/tx2601.html> և Ամփոփ տեղեկատվություն՝ ՀՀ ոստիկանության 2016-2017թթ. բյուջետային հատկացումների վերաբերյալ: Հասանելի է <http://www.police.am/news/view/f23012017.html>

⁵ Տե՛ս Ամփոփ տեղեկատվություն՝ 2016 թ. պետական բյուջեով ՀՀ ոստիկանությանը ըստ տնճակագրական հասկարգման հոդվածների կատարվող հատկացումների վերաբերյալ: Հասանելի է

<http://www.police.am/news/view/tx2601.html> և Ամփոփ տեղեկատվություն՝ ՀՀ ոստիկանության 2016-2017թթ. բյուջետային հատկացումների վերաբերյալ: Հասանելի է <http://www.police.am/news/view/f23012017.html>

⁶ Տե՛ս ՀՀ Ոստիկանությունը, որպես այդպիսին, չի գործում (Տե՛ս անյուժ): Հասանելի է <http://arm.lur.am/622661/>

համախոհներին, ինչպես նաև լրագրողներին՝ կիրառելով նրանց նկատմամբ բռնություններ: Այդ օրը ոստիկանները բացահայտ խտրական վերաբերմունք են դրսևորել նաև որոշ ակտիվիստների նկատմամբ՝ թույլ չտալով նրանց մասնակցել Հռոմի պապի և կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից Երևանի Հանրապետության Հրապարակում մատուցվող էկումենիկ արարողությանը՝ իշխանության գործունեությունը քննադատող տարբեր արտահայտություններով վերնաշապիկներ կրելու պատճառով:

2016 թ.-ի հունիսի 25-ի կարելի է գնահատել որպես հուլիսյան դեպքերի «նախերգանք»: Մասնավորապես, 2016 թ.-ի հուլիսի 17-ից 30-ն ընկած ժամանակահատվածում, երբ «Սասնա Շոեր» զինված խմբավորման անդամները գրավել էին ՊՊԾ գնդի տարածքը՝ պահանջելով Սերժ Սարգսյանի հրաժարականը և քաղաքական բանտարկյալների ազատ արձակումը, ոստիկանությունը «ձեռնամուխ եղավ» ՀՀ քաղաքացիների իրավունքների համատարած խախտմանը: Առանց որևէ բացատրության կամ հիմնավորման բերման էին ենթարկվում ակտիվիստներ, քաղաքացիներ, արվեստագետներ, նույնիսկ զբոսաշրջիկներ, և ոչ թե հավաքներից, այլ քաղաքի այլ վայրերում զբոսնելիս, սրճարաններից, իրենց անձնական մեքենայով տեղափոխվելիս: Այսինքն ոստիկանությունը կրկին դիմեց նախահարձակ գործողությունների, փորձելով կանխել քաղաքացիների մասնակցությունը ցույցերին: Համատարած խախտվում էր խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու քաղաքացիների իրավունքը, նրանց նկատմամբ կիրառվում էր ֆիզիկական բռնություն, հայհոյանքներ, ստորացումներ, սպառնալիքներ, հետապնդումներ, ոստիկաններն անգամ զենք են ուղղել քաղաքացիների դեմ և անհամաչափ կիրառել հատուկ միջոցներ՝ այդ թվում լուսաձայնային նռնակներ⁷: Այդ օրերին բերման ենթարկվեց Հայաստանում գտնվող կանադահայ հայտնի դերասանուհի Արսինե Խանջյանը: Արձանագրվեցին նույնիսկ առևանգման դեպքեր, երբ ոստիկաններն անձանց տանում էին անհայտ ուղղությամբ և նրանց հարազատները ժամերով կապ չէին կարողանում հաստատել այդ անձանց հետ կամ տեղեկություններ ձշտել նրանց գտնվելու վայրի վերաբերյալ⁸: Ոստիկանության ապօրինի գործողությունների հետևանքով միայն 2016 թ.-ի հուլիսի 17-ից 30-ը բերման ենթարկվեց մոտ 700 անձ (համեմատության համար նշենք, որ ամբողջ 2015 թ.-ին հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում բերման ենթարկվածների թիվն ընդհանուր եղել է 380)⁹, տասնյակ քաղաքացիներ ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ և մարմնական վնասվածքներ, իսկ մեկ անչափահաս տղա անգամ զրկվեց աչքից¹⁰:

⁷ Տե՛ս Ինչ է կատարվել Սարի թաղում. տեսանյութերը վերականգնվել են (տեսանյութ): Հասանելի է <http://www.a1plus.am/1476116.html>, նաև Աղյուսակներ 1, 2 և 3

⁸ Տե՛ս Աղյուսակ 1, 2 և 3

⁹ Տե՛ս Ամեն ինչ խառնել են իրար. ուժայիններից տուժածների քանակը: Հասանելի է http://armtimes.com/hy/article/91273?fb_comment_id=923703391073344_926135557496794#f2d2f7901c89b14

¹⁰ Տես Աղյուսակ 1, 2 և 3

Հարյուրավոր քաղաքացիներ տարվել են ոստիկանության ներքին գործերի գորամաս, մինչդեռ չկա այնպիսի օրենսդրական նորմ, որը թույլատրում է անձին բերման ենթարկել ոստիկանության ներքին գործերի գորամասի տարածք և պահել այնտեղ:

2016 թ.-ի հուլիսի 29-ին ոստիկանները պայթուցիկներ են կիրառել Սարի թաղում ցուցարարների նկատմամբ: Սարի թաղում ցուցարարների, այդ թվում տեղի բնակիչների նկատմամբ մահակներով, երկաթե ձողերով բռնություններ կիրառեցին նաև քաղաքացիական հագուստով անձինք, որոնք ակնհայտորեն հանդես էին գալիս ոստիկանության կողմից: Ոստիկանության բռնությունները շարունակվեցին նաև Սարի թաղի բնակիչների տներում և բնակարաններում:

Հատկանշական է որ այդ օրը ոստիկանները հատուկ թիրախավորել էին լրագրողներին՝ նրանց ուղղությամբ նետելով լուսաձայնային նոնակներ, մարմնական վնասվածքներ պատճառելով և հետապնդելով նրանց, կոտրելով տեսախցիկները, առգրավելով դրանք և ապօրինի ոչնչացնելով նկարահանված նյութերը: Արդյունքում միայն այդ օրը ֆիզիկական բռնության են ենթարկվել և կիրառված պայթուցիկներից տուժել են 16 լրագրողներ և օպերատորներ¹¹: ԶԼՄ-ներով ոստիկանության գործողությունների նկարագրությունները, նաև լրագրողների վկայությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ոստիկաններն ունեցել են ցուցարարների նկատմամբ անհամաչափ և ոչ իրավաչափ ուժի կիրառման նախապես մշակված ծրագիր, այդ պատճառով նաև փորձել են խոչընդոտել իրենց ապօրինի գործողությունները փաստագրող լրագրողների աշխատանքը, որը զուգակցվել է լրագրողական նյութերի ոչնչացմամբ և բռնություններով հենց լրագրողների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ 2016 թ.-ին արձանագրվել է լրագրողների աշխատանքը խոչընդոտելու 30 դեպք (17 դեպք 2015 թ.-ին), որոնք ուղեկցվում էին մասնավորապես նրանց նկատմամբ բռնություն կիրառելով, հրելով, հայհոյելով, նկարահանող սարքերը խլելով և վնասելով¹²:

Ոստիկանության ապօրինի գործողություններից տուժած քաղաքացիների շատ մեծ թիվը նույնիսկ ոստիկանությանը դրդեց ապօրինի բերման ենթարկվածների վերաբերյալ տարբեր թվեր հրատարակել՝ փորձելով թաքցնել իրենց անօրինական գործողությունների ծավալը: Այսպես, համաձայն ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրված պարզաբանման, հուլիսի 21-ի գիշերը իշխանության ներկայացուցչի կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր բռնություն գործադրելու, բռնություն գործադրելու սպառնալիքի կասկածանքով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ են տարվել 136 քաղաքացիներ¹³: Միաժամանակ, Իրազեկ

¹¹ Տե՛ս Աղյուսակ 1

¹² Տե՛ս Աղյուսակ 1

¹³ Տե՛ս Պարզաբանում: Հա սանելի է <http://www.police.am/news/view/պարզաբանում210716.html>

քաղաքացիների միավորման հարցմանն ի պատասխան, ոստիկանությունը հայտնել է, որ 2016 թ.-ի հուլիսի 21-ին բերման է ենթարկվել 18 քաղաքացի¹⁴:

Համաձայն ՁԼՄ հրապարակումների մշտադիտարկման արդյունքների, նշված երկու շաբաթվա ընթացքում ոստիկանության կողմից, ըստ պաշտոնական տվյալների, բերման է ենթարկվել 367 քաղաքացի, իսկ համաձայն ՁԼՄ-ներով տարածված տեղեկատվության և ականատեսների վկայությունների՝ ավելի քան 675 քաղաքացի¹⁵:

2016 թ.-ին ոստիկանները բացահայտ ընտրողական և ոչ կանխատեսելի պահվածք են դրսևորել նույն իրավիճակում: Օրինակ՝ խաղաղ պայմաններում մահացած զինվորների ծնողների հանդեպ: Մասնավորապես արգելել են նրանց կանգնել ՀՀ Նախագահի նստավայրին հարակից Բաղրամյան 26-ի մայթին անգամ այն դեպքում, երբ ծնողները որևէ ակցիա չէին անցկացնում: Հարկ է արձանագրել, որ 2016 թ.-ին ոստիկանությունն երկու անգամ թույլ է տվել նույն ծնողներին պաստառներով կանգնել ՀՀ Նախագահի նստավայրի դիմաց՝ նույն տեղում¹⁶:

Մեկ այլ դեպքում մի դեսպանատան շենքին մոտենալը չէր խոչընդոտում, մեկ այլ դեսպանատանը մոտենալը խոչընդոտվում էր: 2016 թ.-ի հունվարի 25 Մեծ Բրիտանիայի դեսպանության առջև ցուցարարների գործողությունները չեն խոչընդոտվել¹⁷, մինչդեռ 2016 թ.-ի ապրիլի 13 բողոքի ցույց ՌԴ դեսպանության առջև բողոքի ցույց անող քաղաքացիներին թույլ չեն տվել մոտենալ դեսպանատան շենքին: Այսինքն, ոստիկանության գործողությունները չեն եղել կանխատեսելի:

Ուշադրության արժանի է նաև հաշվետու տարում ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի վարքագիծը: 2016 թ.-ի առաջին կիսամյակում նա բավականին ակտիվ էր և աչքի է ընկել յուրահատուկ հաղորդակցման հմտություններով և ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնների խախտմամբ: Մասնավորապես, հունվարի 28-ին Հայոց Բանակի կազմավորման օրվա կապակցությամբ Եռաբլուրի պանթեոն այցելած ՀՀ ոստիկանապետ

¹⁴ Տե՛ս

Մմեն ինչ խառնել են իրար. ուժայիններից տուժածների քանակը: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/91273>

¹⁵ Տե՛ս «Մասնա Շոեր» խմբավորման կողմից ՀՀ Ոստիկանության պարեկապահ կետային ծառայության (ՊՊՄ) գնդի գրավումից հետո իրավապահ մարմինների գործողությունների վերաբերյալ: Հասանելի է <http://hcav.am/publications/03-08-2016-02/>

¹⁶ Տե՛ս Սերժ Սարգսյանի ծննդյան օրը սևագգեստ մայրերին արգելեցին մոտենալ նախագահականի դարպասին: Հասանելի է <http://www.epress.am/2016/06/30/%D5%BD%D5%A5%D6%80%D5%AA-%D5%BD%D5%A1%D6%80%D5%A3%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AE%D5%B6%D5%B6%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%85%D6%80%D5%A8-%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4.html>

¹⁷ Տե՛ս ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանը խավիար չի ուտում, նա բուսակեր է. բողոքի ակցիա դեսպանատան առջև (Ֆոտո): Հասանելի է <https://news.am/arm/news/308095.html>

Վլադիմիրի Գասպարյանը լրագրողների՝ ոստիկանության հետ կապված խնդիրների վերաբերյալ հարցերին, արձագանքեց. «Պրիմիտիվ եք»:

Հաջորդ դեպքը տեղի է ունեցել 2016 թ.-ի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում: Լրագրողների դիտարկմանը, որ ոստիկանությունը չի բարեփոխվում, ՀՀ ոստիկանապետը պատասխանել է. «Դա տեսողության, լսողության եւ հասկանալու խնդիր է. ոստիկանությունը փոխվել է եւ շատ է փոխվել, ուղղակի մարդիկ կան, որ ուզում են դա տեսնել, մարդիկ կան՝ չեն ուզում տեսնել...» և խորհուրդ է տվել լրագրողներին. «...բարեփոխվեք սիրելիներս, դուք շատ հին եք, դուք հին եք մնացել, դուք դեղնում եք, գունաթափվում եք¹⁸»:

Իսկ առաջին լրատվականի լրագրող Սիրանույշ Պապյանի դիտարկմանը, թե մենք չենք տեսնում Ձեր բարեփոխումները, Վ. Գասպարյանը պատասխանել է. «Ես էլ քո մեջ կին չեմ տեսնում»¹⁹:

2016 թ.-ի ապրիլի 25-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի Շտաբը հաղորդագրություն տարածեց, որում մասնավորապես ասվում է, որ ՀՀ ոստիկանապետը նախորդ օրը՝ ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդում «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ Գագիկ Եղիազարյանի հետ խոսել է ոչ միայն սպառնալիքի լեզվով, այլև «բարոյականության սահմաններից դուրս արտահայտություններ է գործածել»²⁰: Հատկանշական է, որ ի տարբերություն 2016 թ.-ի առաջին կիսամյակի, երկրորդ կիսամյակում Վլադիմիր Գասպարյանը գրեթե չի երևացել «բեմահարթակում», ինչն առնվազն տարօրինակ է հուլիսյան դեպքերի և այդ օրերին ոստիկանության գործողությունների համատեքստում:

2016 թ.-ի երկրորդ կիսամյակում առանձնացել է ՀՀ փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը: Նախ, հուլիսի 20-ին Տիգրան Մեծ պողոտայում հավաքված բողոքի ցույց անող ցուցարարներին ցրելիս ՀՀ փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը հայհոյում է բերման ենթարկվող հիվանդ տղային²¹, իսկ մեկ այլ դեպքում փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը սեռական բնույթի հայհոյանքներ էր տեղացել Ժառանգության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի հասցեին²²:

¹⁸ Տե՛ս «Ես քո մեջ կին չեմ տեսնում». ոստիկանապետը՝ Ծիծեռնակաբերդում. a1plus.am
Հասանելի է <http://168.am/2016/04/24/628217.html>

¹⁹ Տե՛ս «Ես քո մեջ կին չեմ տեսնում». ոստիկանապետը՝ Ծիծեռնակաբերդում. a1plus.am
Հասանելի է <http://168.am/2016/04/24/628217.html>

²⁰ Տե՛ս Միջադեպ Ծիծեռնակաբերդում՝ Վլադիմիր Գասպարյանի և «Նոր Հայաստանի» անդամի միջև:
Հասանելի է <http://www.1in.am/1899235.html>


²¹ Տե՛ս ՀՀ փոխոստիկանապետը վիրավորում է բերման ենթարկվող հիվանդ տղային (տեսանյութ):
Հասանելի է <http://www.a1plus.am/1474266.html>

²² Տե՛ս «Լևոն Երանոսյանը հայհոյեց ու ասեց՝ մի նռնակ նետեք լրագրողների վրա, մի նռնակ էլ իմ կողմը նետեցին». Փոստանջյան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/08/724582/>

2016 և 2015 թթ.

ԶԼՄ-ների մշտադիտարկման ընթացքում հաշվետու ժամանակահատվածում՝ 2016թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման 338 դեպք (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը 2015թ. և 2016թ.




Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից, 2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատ մարդու իրավունքների խախտման դեպքերի թիվն աճել է 34-ով (11.18%-ով): Ուշագրավ է, որ այդ դեպքերի 52.7%-ը (178 դեպք), արձանագրվել է 2016 թ.-ի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում:

Մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 338 դեպքերից 163-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով: Այս ցուցանիշը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 38-ով (18.9%-ով), սակայն փաստացի այս նվազումը պայմանական է և ամենևին չի նշանակում, որ ոստիկանները հաշվետու տարում հարգել են քաղաքացիների՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը: Ընդհակառակը, ոստիկանները, հատկապես 2016 թ.-ի հուլիսի 17-ից 30-ն ընկած ժամանակահատվածում աչքի էին ընկնում իրենց ագրեսիվ գործողություններով, կազմակերպել էին «մարդկանց որս» Երևան քաղաքում և հանրապետության ամբողջ տարածքում՝ կանխելով նրանց հավանական մասնակցությունը հանրային միջոցառումներին: Ոստիկանության գործելաճի ագրեսիվության աճի մասին է վկայում նաև անհատական բնույթի դեպքերի ցուցանիշի աճը: Մասնավորապես 2016 թ.-ին գրանցվել է


մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի 168 դեպք: 2015թ. նույն ցուցանիշի համեմատությամբ (103 դեպք) դեպքերի թիվն ավելացել է 65-ով (38.7%-ով):

Միաժամանակ ավելացել է խախտված մարդու իրավունքների թիվը և այն դեպքերի թիվը, որոնց արդյունքում միաժամանակ խախտվել է երկուսից ավելի մարդու իրավունք: Եթե 2015 թ.-ին ոստիկանության գործողությունների հետևանքով խախտվել է 18 մարդու իրավունք²³ (15 մարդու իրավունք խախտվել է անհատական բնույթի դեպքերի ժամանակ և 13 մարդու իրավունք՝ հավաքների ժամանակ), ապա 2016 թ.-ին՝ 22 իրավունք (21 մարդու իրավունք՝ անհատական բնույթի դեպքերի ժամանակ, 15 մարդու իրավունք՝ հավաքների ժամանակ և 9 մարդու իրավունք՝ համաձայն ահազանգերի) (Գծապատկեր 2 և 3, Աղյուսակ 6):

²³ Տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման վիճակը՝ ըստ ԶԼՄ մշտադիտարկման 2015թ. արդյունքների, Տեղեկանք, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: Հասանելի է <http://hcav.am/publications/29-01-2016-03/>



Գծապատկեր 3. 2016 թ.-ին խախտված մարդու իրավունքներն ըստ քանակի



2016 թ.-ին 2015 թ.-ի պես առավել մեծ թվով խախտվել են խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքները, որոնք կտրուկ աճ են արձանագրել:

Մասնավորապես, խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունքը խախտվել է ընդհանուր 121 դեպքերում (96 դեպք 2015 թ.-ին), որոնցից 102 դեպքերում՝ այլ իրավունքների հետ համակցված, ինչի հետևանքով խախտվել է ավելի քան 1500 անձի խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունքը: Խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունքը, որպես կանոն, ուղեկցվել է ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ազատ տեղաշարժվելու իրավունքների խախտումներով²⁴:

Ինչ վերաբերում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքին, ապա 2016 թ.-ին արձանագրվել է այս իրավունքի խախտմանը հանգեցրած 157 դեպք (70 դեպք 2015 թ.-ին), որից 116 դեպքում՝ այլ իրավունքների հետ համակցված: Հատկանշական է, որ միայն 2016 թ.-ի հուլիսի 17-ին բերման է ենթարկվել ավելի քան 150 քաղաքացի, իսկ նույն տարվա հուլիսի 27-ին՝ 100-ից ավելի: Նշենք, որ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտումը նույնպես հիմնականում զուգորդվել է խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքների խախտումներով²⁵:

2016 թ.-ի ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտմանը հանգեցրած 157 դեպքից 77-ն արձանագրվել է հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցության հետևանքով, 77 դեպքերն եղել են անհատական բնույթի, իսկ 3 դեպք էլ արձանագրվել է ահազանգերի տեսքով:

2016 թ.-ին խախտված մարդու իրավունքների թվով երրորդ առավել տարածվածը ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտումներն են: Այն խախտվել է 141 դեպքերում (37 դեպք 2015 թ.-ին), որոնցից 115 դեպքերում այլ իրավունքների հետ համակցված: Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը 78 անգամ խախտվել է հավաքների ընթացքում, 60 անգամ՝ անհատական բնույթի դեպքերի ընթացքում և 3 անգամ՝ ահազանգերի տեսքով:

²⁴ Տես Ադուսակներ 1, 2 և 3

²⁵ Տես Ադուսակ 1, 2 և 3

2016 թ. արձանագրվել է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտմանը հանգեցրած 39 դեպք (2015թ.-ին՝ 37 դեպք)²⁶:

Ինչպես արդեն նշվել է, հաշվետու տարում արձանագրվել է լրագրողների իրավունքների խախտման 30 դեպք, որից 24-ը (80%-ը) հուլիսի 17-ից 30-ն ընկած ժամանակահատվածում:

Արձանագրվել է նաև ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտմանը հանգեցրած 35 դեպք: Կտրուկ ավելացել են արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը հանգեցրած դեպքերի թիվը: Եթե 2015թ.-ին գրանցվել է այդ իրավունքի խախտմանը հանգեցրած 5 դեպք, ապա 2016թ.-ին արձանագրվել է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը հանգեցրած 23 դեպք²⁷:

Աճել է նաև խտրականությունից զերծ մնալու իրավունքի խախտմանը հանգեցրած դեպքերի թիվը: Եթե 2015թ.-ին արձանագրվել է նման միայն 1 դեպք, ապա 2016թ. գրանցվել է այդ իրավունքի խախտմանը հանգեցրած 12 դեպք²⁸:

2016 թ.-ին ոստիկանության կողմից ինչպես առանձին, այնպես էլ այլ իրավունքների հետ զուգորդված խախտվել են նաև գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունքը (37 դեպքում), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (15 դեպքում), առողջության իրավունքը (15 դեպքում), արդար դատաքննության իրավունքը (12 դեպքում), բնակարանի անձեռնմխելիության իրավունքը (10 դեպքում), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (9 դեպքում), տեղեկատվություն ստանալու իրավունքը (6 դեպքում), երկու դեպքում խախտվել է ընտրական իրավունքը և, մեկական դեպքերով խախտվել են անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու և բնակչի՝ ըստ բնակության վայրի հաշվառվելու իրավունքը, առևտրային գաղտնիքի իրավունքը, դիտորդություն իրականացնելու իրավունքը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը²⁹:

2016 թ.-ին մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 338 դեպքերից 132-ի (կամ 39.3%) պարագայում խախտվել է 1 իրավունք, 109-ի (կամ 32.5%) պարագայում՝ միաժամանակ 2 իրավունք, 74 (կամ 21.3%) դեպքում՝ 3 իրավունք, 13 (կամ 3.85%) դեպքում խախտվել է միաժամանակ 4, իսկ 9 դեպքում՝ միաժամանակ 5 իրավունք և մեկ դեպքում՝ միաժամանակ 6

²⁶ Տե՛ս Ադյուսակ 1

²⁷ Տե՛ս Ադյուսակ 1

²⁸ Տե՛ս Ադյուսակ 1

²⁹ Տե՛ս Ադյուսակ 1

իրավունք³⁰: Հասկանալի է, որ 2015 թ.-ին ամբողջ ժամանակահատվածում մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած բոլոր դեպքերում միաժամանակ խախտվել է միայն 2 իրավունք (2015 թ.-ին արձանագրվել է 10 նման դեպք)³¹:

Ինչպես 2015թ.-ին, 2016թ.-ին նույնպես խախտմանը հանգեցրած դեպքերի գերակշիռ մասը գրանցվել է Երևանում (296 դեպք, ընդհանուր խախտումների 87.6%-ը)³²: Նշենք, որ 2015 թ.-ի համեմատությամբ Երևանում դեպքերի թիվն աճել է 68-ով (կամ 29.8%-ով)³³:

2016թ. ԶԼՄ մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է նաև 20 դեպք (2015թ. արձանագրվել էր նման 5 դեպք), երբ հավաքների ժամանակ գործառույթներ են իրականացրել քաղաքացիական հագուստով ոստիկաններ, մինչդեռ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ Հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնագրի նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ:

Ամփոփելով 2016 թ.-ին Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման վերաբերյալ տվյալները՝ կարող ենք արձանագրել, որ

1. 2015 թ.-ի համեմատ 10%-ով աճել են մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի թիվը:
2. Աճել է ոստիկանության կողմից խախտված մարդու իրավունքների տեսակների թիվը՝ 22 տեսակի իրավունք (18 տեսակի իրավունք՝ 2015 թ.-ին):
3. 2015 թ.-ի համեմատ աճել է դեպքերի թիվը, որոնց ընթացքում միաժամանակ խախտվել են 2 և ավելի իրավունք՝ կազմելով ընդհանուր դեպքերի 60.9 %-ը (206 դեպք): 2015 թ.-ին 304 –ից արձանագրվել է 10 դեպք, երբ միաժամանակ խախտվել է 2 իրավունք:
4. 2015 թ.-ի համեմատ կտրուկ աճել են անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքների խախտումների թիվը:
5. Ոստիկանությունը որդեգրել է «նախահարձակ գործողությունների» քաղաքականություն. առանց որևէ պատշաճ հիմնավորման բերման ել ենթարկում ինչպես քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող անձանց,

³⁰ Տե՛ս Աղյուսակ 1

³¹ Տե՛ս Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման վիճակը՝ ըստ ԶԼՄ մշտադիտարկման 2015թ. արդյունքների, Տեղեկանք, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: Հասանելի է <http://hcav.am/publications/29-01-2016-03/>

³² Տե՛ս Աղյուսակ 5

³³ Տե՛ս Աղյուսակ 5

այնպես էլ սովորական քաղաքացիներին, որոնք որևէ հանրային միջոցառման չեն մասնակցում և գտնվում են հանրային միջոցառման վայրերից հեռու:

6. Քաղաքացիներին բերման ենթարկելն ազատությունից զրկելու համար չնախատեսված վայրեր և պահելն այնտեղ:
7. Հատուկ միջոցների անհամաչափ և հանրության համար վտանգավոր եղանակով կիրառում
8. Ոստիկանությունը ցուցաբերում է անկանխատեսելի պահվածք նույն իրավիճակներում: Օրինակ՝ խաղաղ պայմաններում մահացած զինվորների ծնողներին մեկ թույլատրում են կանգնել Նախագահականի դիմաց, մեկ՝ ոչ:
9. Ոստիկանապետը և նրա տեղակալը հրապարակայնորեն խախտում էին ոստիկանության էթիկայի կանոնները, որն ուղեկցվում էր քաղաքացիներին և լրագրողներին ուղղված հայհոյանքներով, ստորացուցիչ արտահայտություններով և ծաղրանքով:
10. Ոստիկանությունը ծրագրավորված թիրախավորում է լրագրողներին՝ նպատակ ունենալով խոչընդոտելով նրանց մասնագիտական գործունեությունը:
11. Ոստիկանության աշխատակիցները հանրային միջոցառումների ժամանակ իրենց ծառայողական պարտականություններն իրականացնում են քաղաքացիական հագուստով: Օրինակ, ինչպես երևում է ՋԼՄ որոշ տեսանյութերում, քաղաքացիական հագուստով անձինք մահակներ են վերցնում ոստիկանության ծառայողներից, հրահանգներ տալիս նրանց³⁴ կամ առանց խոչընդոտի անցնում են ոստիկանական շարքերի միջով³⁵: Մինչդեռ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ:

³⁴ Տե՛ս Ոստիկանների գրոհը Սարի թաղում: Հասանելի է <https://www.youtube.com/watch?v=Risy6Yl3taU>

³⁵ Տե՛ս Ինչ հաբեր են ընդունում քաղաքացիական հագուստով ոստիկանները գրոհից առաջ. Տե՛ս անյութ: Հասանելի է <http://araratnews.am/inc-haber-en-ehndunum-khaghakhacikakan-hagustov-ostikanereh-grohic-araj-tesa-nyuth/>

2016 թ.-ին ռատիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի դեպքերի ամփոփում

2016 թ.-ին արձանագրվել է ռատիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 168 անհատական բնույթի դեպք: Հիմնականում խախտվել են անձնական ազատության և անձեռնմխելիության (77 դեպք), ֆիզիկական բռնությունից զերծ մնալու (34 դեպք), ազատ տեղաշարժվելու (19 դեպք) իրավունքները, ինչպես առանձին, այնպես էլ զուգորդված այլ իրավունքների խախտումներով:

Անհատական բնույթի դեպքերից 139-ը տեղի են ունեցել քաղաք Երևանում, 10-ը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, Երկուական դեպք էջմիածին քաղաքում, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, մեկական դեպք տեղի է ունեցել Աշտարակ-Ապարան ճանապարհին. Արագածոտնի մարզի գ. Ծաղկահովիտում, Թալին քաղաքում, Աշտարակ քաղաքում, Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում, գ. Ագարակում, Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում, գ. Պտղունքում, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում, Հրազդան քաղաքում, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, Կապան քաղաքում, իսկ 3-ի դեպքում խախտման վայրը հայտնի չէ:

Անհատական բնույթի դեպքերից 136-ի պարագայում խախտվել է մոտավորապես 220 անձի իրավունք, իսկ 32 դրվագներում հայտնի չէ, թե քանի անձի իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված անհատական բնույթի դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի և ռատիկանության գործողության տեսակի (անգործության)

Խախտված իրավունքները և դեպքի նկարագրությունը	Դեպքերի թիվը
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
քաղաքացու և առանց հիմքի ռատիկանական բաժանումը տանելը	1
Հունիսի 25-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Գյումրիի կենտրոնական հրապարակի մոտակայքից ռատիկանության աշխատակիցները, անօրինական կերպով և առանց որևէ հիմնավորման, Շահեն Հարությունյանին նստեցրել են մեքենան և տեղափոխել ՀՀ Ռատիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի 6-րդ գլխավոր վարչություն ³⁶ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	5
բերման ենթարկելը	4

³⁶ Տե՛ս ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Շահեն Հարությունյանին առևանգելու վերաբերյալ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/25/708199/>

<p>Դեպք 1. Հուլիսի 27-ին Կարմիր բերետավորները Խորենացի փողոցից շարքային քաղաքացիներին թևանցուկ արած տանում են ոստիկանության արգելափակված հատված: Թե ինչի է համար են տանում, պարզ չէ, ոստիկանները մոտենում են նատարաններին նստած, կամ այդ հատվածում հանգիստ կանգնած մարդկանց ու տանում դեպի գնդի՝ ոստիկանական տարածքը: Ընդ որում, կարմիր բերետավորները տանում են թե ծերերին, թե երիտասարդներին, այսինքն՝ ում տեսնում են փողոցի փոքրիկ կանաչապատ հատվածում, որտեղ նաև լրագրողներն են, առանց բացատրություն տալու, տանում են³⁷:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 27-ին Խորենացի փողոցի արգելափակված հատվածից կարմիրբերետավորները բերման ենթարկեցին 2 տղամարդու: Նրանցից մեկը փորձեց դիմադրել, հարցնելով, թե ինչ հիմքով են իրեն բերման ենթարկում³⁸:</p>	
<p>Դեպք 3. Հուլիսի 27-ին Խորենացի փողոցից բերման են ենթարկել նաև մի երիտասարդ աղջկա, մի ամբողջ ընտանիքի անդամների, նատարաններին նստած, կամ այդ հատվածում հանգիստ կանգնած մարդկանց: Ոստիկանությունը չէր ինչպե՞ս անգամ օտարերկրացիներին, մոտեցան ԱՄՆ-ի քաղաքացիներին, ովքեր պարզապես կանգնած էին, ցանկանում էին բերման ենթարկել, մարդիկ շփոթվել էին, չէին հասկանում ինչ է կատարվում³⁹:</p>	
<p>Դեպք 4. Հուլիսի 27-ին Խորենացի փողոցում ոստիկանները թևանցուկ էին անում յուրաքանչյուր քաղաքացու, ով փորձում է անցնել տարածքով: Բերման ենթարկեցին մի ամբողջ ընտանիքի անդամների: Տարածքում կուտակվել են աննախադեպ թվով ոստիկանական խմբեր, որոնք ժամանում են ավտոբոսներով⁴⁰:</p>	
<p>քաղաքացու և առանց հիմքի ոստիկանական բաժանում նք տանելը</p>	1
<p>Դեպք 1. Ապրիլի 21-ին ՀՀ-ում ռուսական դեսպանատան ցույցի ավարտից հետո Երևանի ոստիկանապետ Ա. Կարապետյանը, առանց որևէ իրավական հիմնավորման, ոստիկանության բաժին է հրավիրել Շահեն Հարությունյանին և սպառնացել վերջինիս, որ բողոքի ցույցերին հետագա մասնակցության դեպքում նա կարող է ենթարկվել քրեական հետապնդման⁴¹:</p>	

³⁷ Տե՛ս Կարմիր բերետավորները քաղաքացիներից «մաքրում են» Խորենացի փողոցը: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720592/>

³⁸ Տե՛ս Կինն ուշագնաց էր լինում կարմիրբերետավորների ձեռքերում (ֆոտոշարք և Տե՛ս անյուրթ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720550/>

³⁹ Տե՛ս Մի աղջիկ ոստիկաններին՝ «Զգվում եմ ձեզնից, ինձ մի՛ կպեք»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720736/>: Խորենացիում հանրահավաքի փոխարեն «տղերք, տարանք» օպերացիան էր, օրվա հերոսներն էլ՝ կարմիր բերետավորները: Հասանելի է <http://hraparak.am/?p=118755&l=am/xorenacium+hanrahavaq+i+poxaren+txerq+taranq+operacian+er+orva+herosnern+el+karmir+beretavernery> Կարմիր բերետավորները քաղաքացիներից «մաքրում են» Խորենացի փողոցը: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720592/> և Խորենացի փողոցից բերման են ենթարկում տասնյակ քաղաքացիների. ոստիկանական ուժեր են կուտակվում./ուղիղ/: Հասանելի է <http://galatv.am/hy/news/158828/>

⁴⁰ Տե՛ս Խորենացի փողոցից բերման են ենթարկում տասնյակ քաղաքացիների. ոստիկանական ուժեր են կուտակվում./ուղիղ/: Հասանելի է <http://galatv.am/hy/news/158828/>

⁴¹ Տե՛ս Ակտիվիստը պնդում է, թե Երևանի ոստիկանապետը սպառնացել է իրեն: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27691166.html>

<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	1
<p>քաղաքացու ազատ տեղաշարժվելը խոչընդոտելը</p>	1
<p>Մայիսի 28-ին ոստիկանության աշխատակիցները Կառավարության 3-րդ շենքի հարակից այգու մոտից ուժով հեռացրել են մի քաղաքացու: Ոստիկանության աշխատակիցները պարբերաբար հետեւել են քաղաքացուն, նրան չեն թողել ազատ տեղաշարժվել, ինչն էլ զայրացրել է քաղաքացուն եւ նա տեսնելով Սերժ Սարգսյանին բղավել է. «Պարոն նախագահ, պարոն նախագահ»: Ոստիկանության աշխատակիցները նրան հեռացրել են տարածքից⁴²:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերման նքից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	2
<p>քաղաքացու նկատմամբ բռնի ուժ կիրառելը և ազատ տեղաշարժը խոչընդոտելը</p>	2
<p>Դեպք 1. Մայիսի 17-ին Իրանի քաղաքացի, միջին տարիքի մի կին Հանրապետության հրապարակի շատրվանների մեջ էր մտել և դուրս չէր գալիս: Ոստիկանները նրա ձեռքերը ձեռնաշղթաներով կապել էին և ձեռքերից ու ոտքերից բռնած՝ նստեցնել շտապօգնության մեքենա⁴³: Նշենք, որ դեպքից մի քանի օր անց պարզվել է, որ շատրվաններ մտած կինը հայտնի իրավապաշտպան, քաղաքագետ, Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտի հիմնադիր Արմինե Առաքելյանն է:</p>	
<p>Դեպք 2. Մայիսի 24-ին Հանրապետության հրապարակի շատրվանների ջրավազանում քաղաքացիական ակտիվիստ Աննա Շահնազարյանը խաղաղ բողոքի ակցիա էր անում: Նա հանելով իր կոշիկները՝ մոտեցել էր ջրավազանին եւ լուռ նստել այնտեղ: 2 ոստիկաններ փորձում էին իրենց դուրս հրավիրել ջրավազանից: Նրանց անհաջող փորձերից հետո մի խումբ ոստիկաններ, բռնելով Շահնազարյանի ոտքերից եւ ձեռքերից, հակառակ իր կամքին, դուրս հանեցին շատրվանների շրջանակաձեւ ավազանից : Ոստիկանները շրջապատել էին ակտիվիստին եւ թույլ չէին տալիս մի քայլ այս կամ այն կողմ անել, չնայած, որ Շահնազարյանը մի քանի անգամ դիմելով ոստիկաններին, խնդրում էր իրեն ազատ թողնել⁴⁴:</p>	

⁴² Տե՛ս «Պարո՛ն նախագահ» գոռալու համար ոստիկաններն այգուց հեռացրել են քաղաքացուն. ՖՈՏՈ, Video: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/86436>

⁴³ Տե՛ս Հրապարակի շատրվանների ջրավազանից կնոջը հանել, ձեռնաշղթաներ են հագրել ու տարել. Ֆոտոներ: Հասանելի է <http://www.a1plus.am/1457621.html>

⁴⁴ Տե՛ս Հորդառատ անձրեւի տակ, հրապարակի շատրվաններում՝ խաղաղ բողոքի ակցիա (Տե՛ս անյուրթ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/05/24/695712/>

<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու և հայ հոյեյը	1
<p>Երևան քաղաքի Զաքյան-Ամիրյան փողոցների հատման մասում ՀՀԿ ԳՄ նիստից մոտ 30 րոպե առաջ ՃՈ աշխատակիցները կարգավորում էին երթևեկությունը, չնայած որ խաչմերուկը կարգավորվում է լուսացույցներով, որոնք բնականոն գործում էին: Տեսուչների գործողությունների նպատակը ՀՀԿ ԳՄ նիստի մեկնող Սերժ Սարգսյանի ճանապարհը ապահովելն էր:</p> <p>Հանրապետության հրապարակից Ամիրյան փողոց ընթացող մեքենաներից մեկը Զաքյան խաչմերուկից փորձեց ձախ թեքվել և առաջանալ փողոցով: Կարգավորող ՃՈ տեսուչներից մեկը վրդովվեց վարորդի քայլից, ձեռքի մահակով հարվածեց մեքենային, ապա հայհոյեց վարորդին, որից հետո վարորդը մի պահ կանգնեց խաչմերուկում՝ չհասկանալով, թե ինչ կատարվեց⁴⁵:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
քաղաքացու հեռախոսի առգրավում	1
<p>Հունիսի 30-ին «Միտք» վերլուծական կենտրոնի գործադիր տնօրեն Վահրամ Միրաքյանը ֆեյսբուքյան իր էջում տեսանյութ էր հրապարակել եւ գրել իր ու ճանապարհային ոստիկանների միջև տեղի ունեցած միջադեպի մասին: «Աշտարակ-Ապարան ճանապարհին ոստիկանները կանգնացրին, թե 70 է սահմանված, դու 85 ես գնացել, քանի որ կասկածում էի, ասի՝ ցույց տվեք: Գնացինք նայելու, չէին ուզում ցույց տային, ասում էին՝ 20 րոպե սպասի, նոր կհասնի քո կադրը: Իսկ ես ուշանում էի: Սկսեցի նկարել, սկզբում ասին՝ նկարի, ինչ ես ուզում, ինչ պտի անես, հետո էլ բա՝ մի նկարի ու ձեռիցս հեռախոսը քաշին, վերցրին, քցին իրենց մեքենան ու մի 15 րոպե չէին տալիս, թե չենք վերցրել, շատ ես անում: Երբ որ գնացի մեքենաս նստեմ գնամ, հեռախոսը բերեց, նստեց կողքս թե ջնջի, ես էլ չջնջեցի, մի 20 րոպե կողքս նստել հրամայում էր, թե ջնջի, վերջը մի կերպ դուրս եկավ, ես էլ գնացի»⁴⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
քաղաքացու գույքն առգրավելը	1
<p>Օգոստոսի 13-ի երեկոյան ժամը 9:30-ի սահմաններում, երբ Ազատության հրապարակում ավարտվել էր «Մասնա ծոեր» զինված խմբավորման աջակիցների հանրահավաքը, ոստիկանությունը հավաքի ժամանակ օգտագործվող ձայնային տեխնիկական տեղափոխող պատահական տաքսին</p>	

⁴⁵ Տե՛ս ՃՈ Տե՛ս ու չընդհարվածում է Սերժ Սարգսյանի կորուստին ընդառաջ գնացող մեքենային, հայհոյում (վիդեո): Հասանելի է <http://armtimes.com/hy/article/98164>

⁴⁶ Տե՛ս Ֆեյսբուքյան գրառման եւ Տե՛ս անյութի հետքերով. ՃՈ ոստիկաններ են ազատվել աշխատանքից: Հասանելի է

<http://hraparak.am/?p=115996&l=am/feysbuqyan+graman+e+tesanyuti+hetqerov+chovostikaner+en+azatvel+ashxatanqic>

տեղափոխել է Երևանի Ճանապարհային ոստիկանության տուգանային հրապարակ: Այս մասին «Ազատությանը» հայտնեց «Հիմնադիր խորհրդարան» (ՀԽ) ընդդիմադիր շարժման անդամ Վահրամ Պետրոսյանը ⁴⁷ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Խտրականություն չից գերծ մնալու իրավունք 	2
քաղաքացիների ազատ տեղաշարժումը խոչընդոտելը	1
Հունվարի 21-ին նախագահականի մոտ ծառայություն իրականացնող ոստիկանները թույլ չէին տալիս գոհված զինծառայողների ծնողներին կանգնել Բաղրամյան 26-ի մայթին ⁴⁸ (տեսանյութ 6:00-9:00): Արձանագրենք, որ ծնողների ձեռքում ոչ մի պաստառ չկար և նրանք վստահեցնում էին, որ իրենք ակցիա չեն անում:	
քաղաքացու նկատմամբ խտրականության դրսևորում	1
Հոկտեմբերի 8-ին Հայաստան-Ռումինիա աշխարհի 2018 թ. առաջնության ընտրական փուլի Հայաստան-Ռումինիա հանդիպումից առաջ ոստիկանները թույլ չեն տվել մարզադաշտի տարածք մտնել Շանթ Հարությունյանի որդուն՝ Շահեն Հարությունյանին, որը Եվրո 2016-ի ընտրական փուլի Պորտուգալիայի դեմ խաղի ընթացքում խաղադաշտ էր ներխուժել: Հետագայում՝ հանդիպման ընթացքում, Շահեն Հարությունյանին թույլ են տվել ներս մտնել ⁴⁹ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Խտրականություն չից գերծ մնալու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
քաղաքացու նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելը	1
Հունիսի 25-ին քաղաքացիական ակտիվիստներին Հանրապետության հրապարակի անցակետից ներս չեն թողել՝ տեսնելու Հռոմի պապին: Պատճառաբանում էին, որ նրանք այլ նպատակներ ունեն: Դավիթ Սանասարյանին ներս չեն թողել վերնաշապիկի պատճառով, որի վրա խոսքեր էին գրված՝ ուղղված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Մեկ այլ աղջկա էլ դուրս են հանել՝ քաղաքանտարկյալ Շանթ Հարությունյանի նկարով վերնաշապիկի պատճառով ⁵⁰ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Խտրականություն չից գերծ մնալու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք 	1
լրագրողի գործունեությունը խոչընդոտելը	1

⁴⁷ Տե՛ս «Հիմնադիր խորհրդարանը» հայտնում է, որ Ոստիկանությունը առգրավել է իր ձայնային տեխնիկան: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27919656.html>

⁴⁸ Տե՛ս Չոհված զինծառայողների ծնողներին թույլ չեն տվել կանգնել Բաղրամյան 26-ի մայթին (Տե՛ս անյութ): Ըստ Տե՛ս անյութի (Տե՛ս անյութ 6⁰⁰-9⁰⁰): Հասանելի է <http://www.a1plus.am/1430433.html>

⁴⁹ Տե՛ս Շահեն Հարությունյանին թույլ չեն տվել մարզադաշտ մտնել Հայաստան-Ռումինիա խաղից առաջ: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/94745>

⁵⁰ Տե՛ս Մարդկանց ներս չէին թողնում վերնաշապիկների գրության պատճառով: Հասանելի է <http://hraparak.am/?p=115533&l=am/mardkanc+ners+chein+to+xnum+vernashapikneri+grutyun+patcharov>

Հունիսի 25-ին ֆոտոլրագրողներից մեկին դուրս են հանել Հանրապետության հրապարակից վերնաշապիկի պատճառով, որի վրա խոսք էր էին գրված՝ ուղղված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ⁵¹ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու և բռնության ենթարկելը	1
Հուլիսի 29-ին Սարի թաղի բնակիչներից մեկը պատմում է, որ տուն գնալիս հինգ ոստիկան հարձակվել են իր վրա և ավտոմատ պահել ⁵² :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու նկատմամբ բռնություն կիրառելը	1
Քաղաքացիները հաղորդումներ են տվել այն մասին, որ 2016 թվականի ապրիլի 4-ին Սևան քաղաքում ոստիկանության աշխատակիցները հայհոյել և բռնություն են գործադրել իրենց նկատմամբ, ապա, իրենց կամքին հակառակ, ստիպողաբար ավտոմեքենայով տեղափոխել են Երևան քաղաք՝ փորձաքննության ենթարկելու համար ⁵³ :	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու ազատ տեղաշարժումը խոչընդոտելը	1
Հունվարի 21-ին նախագահականի մոտ ծառայություն իրականացնող ոստիկանները թույլ չէին տալիս իրավապաշտպան Հայկուհի Հարությունյանին կանգնել Բաղրամյան 26-ի մայթին: Նրանք շղթա էին կազմել և քաշքշում էին իրավապաշտպանին ու ասում, որ նա այս մայթով անցնելու իրավունք չունի ⁵⁴ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու և բերման ենթարկելը	1
Փետրվարի 15-ին ոստիկաններն ինժեներ Վարդգես Գասպարիին դատարանի դահլիճ են բերման ենթարկել ժամը 12:00-ի սահմաններում շտապօգնության մեքենայով: «Ոստիկանները չմեկնաբանեցին ինձ 3 ժամ շուտ բերման ենթարկելու պատճառը: Դա օրենքի խախտում էր, որովհետև ինձ բերման ենթարկելու ժամը նշանակված էր 3-ին: Նրանք	

⁵¹ Տե՛ս Մարդկանց ներս չէին թողնում վերնաշապիկների գրության պատճառով: Հասանելի է <http://hraparak.am/?p=115533&l=am/mardkanc+ners+chein+toxnum+vernashapikneri+grutyana+patcharov>

⁵² Տե՛ս Տուն էի գալիս, հինգ հոգով հասան վրես՝ ավտոմատը պահին. Սարի թաղի բնակիչները ահաբեկված են: Հասանելի է <http://www.1in.am/1969549.html>

⁵³ Տե՛ս Մայր ու դուստր հայտնել են իրենց նկատմամբ կիրառված բռնությունների վերաբերյալ տվյալներ. կատարվում է քննություն: Հասանելի է <http://www.aravot.am/2016/05/10/690125/>

⁵⁴ Տե՛ս Չոհված զինծառայողների ծնողներին թույլ չեն տվել կանգնել Բաղրամյան 26-ի մայթին (Տե՛ս անյութ): Ըստ Տե՛ս անյութի (Տե՛ս անյութ 9⁴⁶-ից): Հասանելի է <http://www.a1plus.am/1430433.html>

չմեկնաբանեցին նաև այն, թե ինչն է են ինձ բերման ենթարկել շտապօգնության մեքենայով – հայտնել է Վ. Գասպարին ⁵⁵ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Իրավաբանական օգնություն և ստանալու իրավունք 	1
քաղաքացու և բերման ենթարկելը և ստորացնելը	1
Հուլիսի 17-ի առավոտյան ժամը 08:00-ին Աշտարակի ոստիկանության բաժին բերման ենթարկված ակտիվիստ Միքայել Նազարյանին ապօրինի կերպով շուրջ 32 ժամպահել են ոստիկանությունում՝ թույլ չտալով անգամ սնվել, պառկել, փաստաբանի հետ հանդիպել ⁵⁶ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացիներին բերման ենթարկելը	1
Միմե Եղևուկյանը պատմեց երկրորդ անգամ ոստիկանությունում հայտնվելու մասին: Երբ 20 քաղաքացիական հագուստով ոստիկանները հարձակվել են իրենց մեքենայի վրա, երբ Խորենացի փողոցից փորձում էին տուն վերադառնալ: Նրանց հետ է եղել իրենց անչափահաս քույրը Գինեվարդ Եղևուկյանը, ոստիկանություն տանելուց հետո աղջկան կեսգիշերին բաց են թողել փողոց ⁵⁷ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արդար դատաքնության իրավունք 	1
քաղաքացու և խաբելը	1
«Սեպտեմբերի 24-ին Հայաստանի քաղաքագետների միության նախագահ, «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի քաղաքական խորհրդի անդամ Հմայակ Հովհաննիսյանին զանգահարել են ոստիկանությունից և առաջարկել հանդիպել պարզելու համար 2015 թվականի սահմանադրական հանրաքվեի ընթացքում ոստիկանություն ներկայացված ընտրակեղծարարության փաստերի վերաբերյալ նրա հաղորդման ինչ-ինչ մանրամասներ: Զանգահարողը Հմայակ Հովհաննիսյանին, ով հանրաքվեի ընթացքում «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության վկայականով Երևանի Կենտրոն-Նորք Մարաշ համայնքում հետևել է քվեարկությանը, հավաստիացրել է, որ Ստեփան Շահումյանի անվան դպրոցում ընտրողներին ահաբեկող հանցագործ բանդային վերջապես հայտնաբերել են և խնդրում են օգնել	

⁵⁵ Տե՛ս Գասպարինի նիստից 3 ժամ առաջ դատարան բերեցին շտապօգնության մեքենայով: Հասանելի է <http://www.epress.am/2016/02/15/%D5%A3%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D6%80%D5%AB%D5%AB%D5%B6-%D5%B6%D5%AB%D5%BD%D5%BF%D5%AB%D6%81-3-%D5%AA%D5%A1%D5%B4-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A5%D6%80.html>

⁵⁶ Տե՛ս Ակտիվիստը պնդում է, որ 32 ժամ իրեն պահել են ոստիկանությունում՝ անհաց, անջուր (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89905>

⁵⁷ Տե՛ս Եղևուկյանների ընտանիքի պայքարը: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/139568>

<p>քննությունն ավարտին հասցնելու գործին: Հանդիպման ժամանակ ոստիկանները ցինիկաբար հայտարարել են, որ իրականում իրենց հանձնարարված է ձեռքակալել և խուզարկության նպատակով ոստիկանություն տանել հենց Հմայակ Հովհաննիսյանին: Պարզաբանելով, որ նրա նկատմամբ հայտարարված է հետախուզում և որ իրենք պետք է ենթարկեն նրան բերման ոստիկաններն ընտրակեղծարարներին ձեռքակալելու մասին իրենց բլեֆը «արդարացրել են» նպատակահարմարությամբ՝ խաբել ենք և լավ ենք արել⁵⁸:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Ազատ տեղաշարժվելու իրավունք 	1
քաղաքացուն բերման ենթարկելը	1
<p>Արթուր Սաքունցը մի դեպք պատմեց, թե ինչպես են Խորենացի փողոցում բնակվող Մելիքսեթ անունով մի տղայի հետ վարվել ոստիկանական բաժանմունքում: Նախ նրան հարցրել են, թե ուր ես գնում, չի հասցրել ասի, որ բնակվում է Խորենացիում, Խորենացի բառը լսել են ու միանգամից տարել բաժին: Այնտեղ որպես վկա են ձևակերպել ու ասել են՝ գոհ եղիր, որ վկա ես. «Բայց ուշագրավ է, որ վկայի ձեռքից վերցրել են դրամապանակն ու հեռախոսը, նա ստիպված է եղել ոտքով կենտրոնի ոստիկանությունից Խորենացի գալ, որովհետև ոչ մի կոպեկ գումար չի ունեցել: Հետո սկսել են համոզել նրա ծնողներին, որ բողոքը հետ վերցնի»⁵⁹:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Դիտորդություն իրականացնելու իրավունք 	1
դիտորդին բերման ենթարկելը	1
<p>Ապրիլի 17-ին ոստիկանները բերման են ենթարկել Թալինի 15/03 ընտրատեղամասում ուրիշի փոխարեն քվեարկելու դեպքի առնչությամբ դժգոհություն հայտնած «Հայկական վերածնունդ» կուսակցության վստահված անձին⁶⁰:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք 	2
լրագրողին բերման ենթարկելը	2
<p>Դեպք 1. Հունիսի 25-ին քաղաքացիական հազուստով ոստիկանության աշխատակիցներն առանց որևէ հիմնավորման բերման են ենթարկել armtimes.com-ի ֆոտոթղթակից Տիգրան Մազմանյանին⁶¹:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 27--ին Խորենացի փողոցում կարմիր բերետավորները բերման են ենթարկել Newspress.am լրատվական կայքի խմբագիր</p>	

⁵⁸ Տե՛ս Հմայակ Հովհաննիսյանին բերման են ենթարկել. հաղորդագրություն: Հասանելի է <http://hraparak.am/?p=124464&l=am/hmayak+hovhanisyanin+berman+en+entarkel+ha+xordagrutyun>

⁵⁹ Տե՛ս Վկայի ձեռքից վերցրել են դրամապանակն ու հեռախոսը, ցուցաբարներին 12 ժամ զուգարան չեն թողել գնալ. Իրավապաշտպաններ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/08/733222/>

⁶⁰ Տե՛ս Լարված իրավիճակ Թալինում. քաղաքացին հայտնաբերել է, որ իր փոխարեն արդեն քվեարկել են, իսկ վստահված անձին ոստիկանները բաժին են տարել (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://arm.lur.am/517715/>

⁶¹ Տե՛ս Քաղաքացիական հազուստով ոստիկանները բերման են ենթարկել Armtimes.com-ի ֆոտոթղթակցին: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/88323>

Ռուզաննա Ստեփանյանին: Լրագրողը վկայական չէր ունեցել: Նրան մի քանի անգամ փորձել էին բերման ենթարկել, հետո, ի վերջո, տարան ⁶² :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անտարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	5
քաղաքացու նկատմամբ բռնություն կիրառելը, ստորացնելը	5
Դեպք 1. Հունվարի 6-ին Վարդգես Գասպարին գրառում է արել իր ֆեյսբուքյան էջում առ այն, որ ինքը նախագահի նստավայր՝ Պռոշյան-Դեմիրճյան խաչմերուկ ապակյա շիշը շարտել է դեպի պահակակետի ապակյա պատուհանը, բայց այն դիպավ պատին և փշրվեց: Համաձայն գրության, դրանից հետո դուրս է եկել պահակախմբի ղեկավարը, սկզբից պահանջեց, որ հեռանա... հետո էլ տվեց վերջին հայեցողություններն ու սպառնալիքները, իսկ քիչ անց փորձել սպառնալիքները ի կատար ածել ... Ոտքերով ու բռունցքներով հարձակվել է Վ. Գասպարիի վրա, սակայն նրա ենթականերն իրեն կանգնեցրին... Այնուհետև Վ. Գասպարիին, բռնության կիրառմամբ, ոստիկանական մեքենայի մեջ են խցկել: Մեքենան մոտ մեկ ժամ և ավելի քշելուց հետո, որի ընթացքում Գասպարի նկատմամբ բռնություն էր կիրառվում (նրա աջ ձեռքը ոլորել էին մեջքին և պարբերաբար ավելի էին սեղմում), Գասպարիին մի խուլ ու ամայի վայրում դուրս են գցում մեքենայից և հեռանում ⁶³ :	
Դեպք 2. Քաղաքացին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2016թ. փետրվարի 7-ին ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցն իրեն բերման ենթարկելու նպատակով ոլորել է ձեռքերը, որի հետևանքով կոտրվել է ձեռքի անրակը, ապա հարվածել՝ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ: Քաղաքացին հայտնել է նաև, որ ինքը ոստիկանության Մալաթիայի բաժնում տնական ժամանակ ապօրինի պահվել է, և իրեն բուժօգնություն չեն ցուցաբերել ⁶⁴ :	
Դեպք 3. Հուլիսի 17-ին Ոստիկանության բաժին են տարվել Ռուզան Թեմուրյանը և Նարինե Պետրոսյանը: Իր հարցին, թե ուր էք գնում, պատասխան ստանալով՝ ընկերներին մոտ, ոստիկանը առանց որևէ բան ճշտելու սպառնացել է, թե «գլուխդ կպոկեմ», և թները ոլորելով տարել են Իսակովի փողոցի վրա գտնվող ոստիկանական ակադեմիա ⁶⁵ :	
Դեպք 4. Հուլիսի 18-ին Էրեբունի վարչական շրջանում տեղակայված պարեկապահակային ծառայության շենքի մոտից ուժի կիրառմամբ բերման են ենթարկվել 10-ից ավելի երիտասարդների: Բերման ենթարկվածների	

⁶² Տե՛ս Կարմիր բերետավորները Վարդգես Գասպարիին էլ տարան «ինքնությունը պարզելու»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720661/>

⁶³ Տե՛ս Վարդգես Գասպարիին ամայի վայրում դուրս են գցել մեքենայից ու հեռացել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/07/645370/>

⁶⁴ Տե՛ս Պաշտոնատար անձանց կողմից լիազորություններն անցնելու և խոշտանգելու դեպքերով հարուցվել է քրեական գործ: Հասանելի է <http://hetq.am/arm/news/66036/pashtona-tar-andzanc-koxmic-liazorutyunner-n-ancnelu-ev-khoshtange-lu-depgerov-harucvel-e-qreakan-gorts.html>

⁶⁵ Տե՛ս Նարինե Պետրոսյանը մինչ այժմ գտնվում է ոստիկանության բաժնում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716262/>

<p>մեջ են ակտիվիստ «Ոչ թալանին» նախաձեռնության անդամ Մաքսիմ Սարգսյանը, «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Կարո Եղնուկյանի դատերը, ՀԽ-ի փոխնախագահ Վարուժան Ավետիսյանի կինը, դուստրը և այլք⁶⁶:</p>	
<p>Դեպք 5. Դերասան, ազատամարտիկ Արայիկ Հովհաննիսյանը Aravot.am-ի հետ գրույցում պատմել է, թե իրեն ինչպես են Օպերայի շրջակայքից բերման ենթարկել ու ինչ ոչ մարդկային պայմաններում է ինքը հայտնվել. «Հուլիսի 17-ին՝ ժամը 09.30-10.45-ի կողմերն ընկերներիցս մեկը զանգեց, ասաց՝ ընտանիքի հետ Սարյանի արձանի մոտի սրճարանում նստած են ու հրավիրեց սուրճ խմելու: Ես էլ 3-րդ մասից գնացի, Թումանյան-Մաշտոցի պողոտա խաչմերուկում՝ դեպի Օպերայի բակ տանող հատվածում, կանգնած էին «հրեշտակների» ստորաբաժանման երկու ոստիկան: Բարևեցին, ասացին բարձրանանք վերև, վերևում այլ ծառայողներ կան, ճշտելու բան կա: Բարձրացանք, երբ Օպերայի ցանկապատները վերջացան, կանգնած տեսա հրեշտակների ստորաբաժանման խմբի անդամներին ու որոշ ղեկավարների: Այդ ժամանակ ինձ հետ վերև բարձրացած ոստիկանը դարձավ ագրեսիվ, ևս չորս-հինգ հոգի վրա տվեցին ինձ, ձեռնաշղթաները հագցրին ձեռքիս ու նստեցրին մեքենա: Երբ հարցրի՝ ինչ հիմքով են ինձ տանում՝ սկսեցին վիրավորել»: Արայիկ Հովհաննիսյանին այդ օրը բերման են ենթարկել Արգավանդի ճանապարհին գտնվող ներքին զորքերի զորամաս: «Ինձ բաց են թողել լուսադեմին ժամը 04.00-ին, այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը, Լարիսա Ալավերդյանը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ բանակցեցին նրանց հետ»: «Քննիչները մեզ հետ բարեխղճորեն էին վերաբերվում, բայց «հրեշտակները», կարմիր բերետավորները՝ բոլորը դիմակներով, մարտական էին տրամադրված և ավտոմատներով կանգնած էին մեր գլխի վերևում⁶⁷:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
<p>քաղաքացուն բռնի ուժի կիրառմամբ բերման ենթարկելը</p>	1
<p>Հուլիսի 17-ին ժամը 11:15-ին չորս ոստիկան ուժով, բանալիները իվելուց հետո, Ազարակից իր մեքենայով Շիրակի մարզային վարչություն բերման են ենթարկել լրագրող Լևոն Բարսեղյանին՝ զենք-զինամթերք ունենալու կասկածանքով: Առգրավել էին նաև լրագրողի հեռախոսը, որը վերադարձրել են 14:02-ին: Լևոն Բարսեղյանին ոստիկանությունում պահել են 3 ժամից ավել⁶⁸:</p>	

⁶⁶ Տե՛ս Մաքսիմ Սարգսյանը բերման ենթարկվելիս ասել է՝ «Մի խփեք, հեսա անջատում եմ հեռախոսս»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716722/>: Ոստիկանները Վարուժան Ավետիսյանի դատերը. «Քո հայրը տեռորիստ աս» (Տե՛ս անյութ). «Ա1+»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/19/717038/>: Ձերբակալություններ, վեճ ոստիկանների և լրագրողների միջև: Հասանելի է <http://www.iragir.am/index/arm/0/videos/view/136093>

⁶⁷ Տե՛ս Ինչպե՞ս են վերաբերվել բերման ենթարկվածների հետ Արգավանդի զորամասում. Պատմում է բերման ենթարկված դերասանը: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/21/718195/>

⁶⁸ Տե՛ս Ինչպե՞ս են բերման ենթարկել Լևոն Բարսեղյանին (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716181/>

<ul style="list-style-type: none"> ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Տեղեկատվություն ստանալու իրավունք 	1
տեղեկատվություն և չտրամադրելը	1
<p>Հուլիսի 28-ին Բանակի օրվա կապակցությամբ Եռաբլուրի պանթեոնում ՀՀ ոստիկանապետ Վլադիմիրի Գասպարյանը լրագրողների հետ զրույցում, երբ լրագրողները փորձեցին ոստիկանության հետ կապված խնդիրներ արծարծել ու պատասխաններ ստանալ, հետաքրքրվեցին ճանապարհային ոստիկանությունից՝ Վլադիմիր Գասպարյանն, ի թիվս այլ որակավորումների, արձագանքեց. «Որիմիտիվ եք»⁶⁹:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Առողջության իրավունք ● Տիգրիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու առողջությանը վնաս պատճառելը	1
<p>Հուլիսի 29-ին Սարի թաղում ոստիկանների կողմից արձակած պայթուցիկների հետևանքով աչքից զրկվել է 16 ամյա Սայաթ Հարությունյանը: Նրա հորեղբայր Կարո Հարությունյանն Aravot.am-ին Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցում պատմել է, որ Սայաթն անգամ չի մասնակցել երթին, պարզապես տուն գալիս է եղել: Ասում է՝ բան-ման զցեցին, պայթեց՝ իմ աչքին կպավ ու ես ընկա: Հետո ուզում էին «դուբինկեքով» ծեծեին, վեր կացա, նորից ուզում էին խփեին, աչքը թափած ուզում էին խփեին, ասում է՝ պառկեցի, որ չխփեն⁷⁰:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Արդար դատաքննության իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
քաղաքացու և առանց հիմքի ոստիկանական բաժանում եք հրավիրելը	1
<p>Փետրվարի 15-ին ոստիկանությունը զանգահարել է քաղաքացի Գոհար Սարոյանին և հայտարարել, որ պատրաստվում են այցելել Գոհար Սարոյանի բնակարան: Գոհար Սարոյանը չի տվել ոչ մի անձնական տվյալ, բնակության վայրի վերաբերյալ: Փետրվարին նա ծանուցում է ստանում ոստիկանությունից, ներկայանալու և բացատրություն տալու պահանջով, սակայն Հայաստանի հեղինակյան կոմիտեի փաստաբան Ռոբերտ Ռևազյանը իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերեց Գոհարին, որից հետո նա հայտնեց ոստիկանությանը, որ ունի իրավունք չներկայանալու բացատրություն տալու⁷¹:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Գույքի անձեռնախելիության և սեփականության իրավունք 	1
պաստառը հանելը	1
<p>Այսօր՝ 2016 թվականի սեպտեմբերի 14-ին, ՏԻՄ ընտրություններից 4 օր առաջ Ծաղկահովիտ համայնքում Արայիկ Խանդոյանի երկու պաստառներից մեկը ոստիկանների ապօրինի պահանջով հանել են, որով փորձում են ճնշում գործադրել է՝ Արայիկ Խանդոյանի, է՝ նրա կողմնակից</p>	

⁶⁹ Տե՛ս Վլադիմիրի Գասպարյանը՝ լրագրողներին. «Որիմիտիվ եք, ազրեսիվ եք» (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/28/651914/>

⁷⁰ Տե՛ս «Աչքը թափած, «դուբինկեքով» ուզում էին էլի խփեին» (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/722014/>

⁷¹ Տե՛ս Ոստիկանությունը հետապնդում է քաղաքացի Գոհար Սարոյանին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/02/15/657700/>

<p>Ծաղկահովիտ համայնքի բնակիչների վրա: Պաստառը փակցված չի եղել արգելված վայրում և դրա հանելու մասին պահանջը ապօրինի և դատապարտելի է: Հայտարարում ենք՝ ոչ մի ապօրինություն մեզ չի ընկճի, ոչ մի անօրինականություն չի կարող սասանել Արայիկ Խանդոյանի բարձր հեղինակությունը: Արայիկ Խանդոյանը արդեն հաղթել է, ինչը ապացուցվում է նաև գործադրվող ճնշումներով և ապօրինություններով⁷²:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Տիգրիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	1
<p>քաղաքացիներին բերման ենթարկելը</p>	1
<p>Հուլիսի 18-ին Խոբենացի փողոցից երեք երիտասարդների ուժով տեղափոխել են ոստիկանություն: Լրագրողների այն հարցին, թե ինչու եք տեղափոխում, ինչ են արել այդ անձինք, ոստիկանության աշխատակիցները չեն պատասխանել: Մինչ այդ երիտասարդները հարակից տարածքում՝ ծառերի մոտ նստած, պաստառ էին պատրաստում, որի վրա գրված էր. «Այլ ելք չկա»⁷³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք ● Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք 	1
<p>մեքենաների տեղափոխում տուգանային հրապարկ</p>	1
<p>«Լուսացույցի մոտ կանգնած էինք, Ազատության հրապարակից սկսված երթն էր անցնում, մեքենաներին կանգնեցրել էին ոստիկանները, որ ճանապարհ տանք: Երբ երթը կողքներովս անցնում էր, սիգնալ տվեցինք: Երթի անցնելուց հետո ինձ և ևս 4-5 վարորդի հրահանգեցին կանգնել: ՃՈ աշխատակիցներին և կարմիրբերետավորներին խնդրեցի պարզաբանել, թե ինչի հիման վրա են կանգնեցրել, ասացին, որ կասեն ամեն ինչ: Քաղաքացիական հազուստով ինչ-որ մեկը մոտեցավ՝ բա խի՞ եք սիգնալ տալիս, ում համար եք տալիս, Պավլիկի («Մասնա ծռերի» Պավլիկ Մանուկյանի-խմբ.) համար եք տալիս: Ասացի երթի մասնակիցների համար էի սիգնալ տալիս: Հրահանգեցին կանգնել: Այդ ընթացքում մի քանի մեքենա բաց թողեցին, քանի որ կանայք կային մեքենայի մեջ, մարզերի բնակիչներ կային, որոնք ասել էին, թե չգիտեին ինչ երթ էր: Ինձ ու ևս մի քանի վարորդի հրահանգեցին մեքենան տանել տուգանային հրապարակ: Ասացի ինչի հիման վրա եք տանում, ինչի՞ տակ պետք է ստորագրեմ, պատասխանեց՝ քո ստորագրությամբ պիտի նայեմ», - մեզ հետ զրույցում պատմեց մեզ դիմած քաղաքացին, ում անունը հասկանալի պատճառներով չենք հրապարակում: Նա նշեց, որ այսօր կեսօրից հետո գնացել է մեքենան վերցնելու, սակայն չեն տվել և դարձյալ առանց հիմնավորման: Ասել են միայն, որ եթե երեկ</p>	

⁷² Տե՛ս Արայիկ Խանդոյանի նախնական թիմի հրատապ ահազանգը: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/14/735384/>

⁷³ Տե՛ս Երեք երիտասարդի ուժով տեղափոխում են ոստիկանություն: Հասանելի է <http://galatv.am/hy/news/news157418/>

<p>բերված մեքենա է՝ չեն տալիս, իրենք կգանգ են, երբ տալու լինեն: Ի դեպ, նա մեզ ասաց նաև, որ քաղաքացիական հազուստով այդ անձը, որը փորձել է հասկանալ ինչի համար է ազդանշան տվել, ստուգել է նաև իր հեռախոսը՝ պարզելու համար, թե արդյոք ցույցերից նկար չկա իր հեռախոսի մեջ:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Բնակարանի անձեռնմխելիության իրավունք ● Առողջության իրավունք 	1
<p>քաղաքացիների բնակարաններ պայթուցիք ստարկաներ գցելը</p>	1
<p>Հուլիսի 29-ին Սարի թաղում տներից մեկում ծխամոնակներ են ընկել, ինչի հետևանքով տան անդամները վնասվածքներ են ստացել: NEWS.am-ի թղթակիցը հաղորդում է, որ այս պահին տեղում է «Շտապօգնության» մեքենան, որը տեղափոխում է տուժածներին: Նրանց մեջ անչափահասներ կան: Այրվել է տան պարիսպները եւ կոտրվել են ապակիները⁷⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Բնակարանի անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Տիպիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Ազատ տեղաշարժվելու իրավունք 	1
<p>քաղաքացու բնակարանն ապօրինի խուզարկելը, քաղաքացու և բերման ենթարկելը</p>	1
<p>Օգոստոսի 5-ին Կյուրեղյան եղբայրների մայրիկին՝ տիկին Նվարդին, բերման են ենթարկել ոստիկանության Մաշտոցի բաժին: Aravot.am-ի հետ զրույցում Նվարդ Բիլյանը պատմեց, թե ինչպես են ոստիկաններն առավոտյան նրան կոպիտ ձեռով թե երը կապտացնելով բերման ենթարկել: «Ես բանից անտեղյակ, առավոտյան դուռը կոտրելով թակում էին, թե բա՛ բացեք, ոստիկանությունից ենք: Հագնվեցի, բացեցի, ներս մտան ու սկսեցին դարակները քրքրել ու գտան Արեգի գինվորական ուսապարկը՝ դիրքեր գնալու համար: Բավականին մեծ ուսապարկ է, մեջը բոլոր անհրաժեշտ բաները դիրքեր գնալու համար՝ վրան, ժիլետ, մետաղյա ափսե, տափաշիշ, որսորդական դանակ, որը խանութից է գնել, եւ համապատասխանում է որսորդական դանակի չափանիշներին: Ինձ քաշքելով տարան, ասում էին՝ Արմենակի տեղը ցույց պիտի տաս: Ասում էի՝ չգիտեմ: Մեքենայով տարան Ձորաղբյուր, հետո Լուսակերտի «դաշա», հետո Մաշտոցի ոստիկանություն, ուսապարկն էլ հետները, ասացին՝ բերման ենք ենթարկում: Ասում էի՝ դուք խուզարկության համար որեւէ փաստաթուղթ չեք ներկայացրել, ինձ ծանուցման թուղթ չեք ներկայացրել, ինչ իրավունքով եք խուզարկում ու բերման ենթարկում: Հետո փողոցից երկու կին կանչեցին, ուսապարկը դատարկեցին ու արձանագրություն կազմեցին: Ես ոչ մի փաստաթուղթ չեմ ստորագրել»⁷⁵:</p>	

⁷⁴ Տե՛ս Սարի թաղում տներից մեկում ծխամոնակներ են ընկել. կան տուժածներ (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/339644.html>

⁷⁵ Տե՛ս Քննիչը Կյուրեղյանների մորը՝ տիկին Նվարդին, խնդրել է այսօր չներկայանալ բաժին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/05/724164/>

<ul style="list-style-type: none"> ● Բնակարանի անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացիների գույքը փչացնելը	1
<p>Սարի թաղի բնակիչները քաղաքացիական հագուստով ոստիկանների վայրագություններից դեռ շոկի մեջ են:</p> <p>Վայրագի նման քաղաքացիական հագուստով մի խումբ մտել էր, գոռում-գոչում էին, ամբողջ տանիքը հրդեհել են... 15 տարեկան աղջիկս, 20 տարեկան հաշմանդամ աղջիկս ու ես ենք հրդեհը հողով մարել: Իմ երեխեքը վախեցած են⁷⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Բնակարանի անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու և ահաբեկելը	1
<p>Հուլիսի 24-ին «Հիմնադիր խորհրդարան»-ը հաղորդագրություն է տարածել, որում նշվում է.</p> <p>«Հայտնում ենք, որ «Հիմնադիր խորհրդարան»-ի մամուլի պատասխանատու Սյուզան Սիմոնյանը վերջին երեք օրերին երկու անգամ այցելել է իր ծանոթներին, որոնք ապրում են Ձոր-1 թաղամասի առանձնատներից մեկում: Այսօր դիմակավորների մի հսկայական խումբ, օգտվելով, որ այդ առանձնատան դարպասը և դուռը բաց է, ներխուժել են այդ առանձնատուն, գետնին պատկեցրել տանտիրոջը, խուճապի մատնել ընտանիքի անդամներին և առանձնատան երեք հարկերում խուզարկել են առանց բացատրություն տալու և առանց համապատասխան իրավական փաստաթուղթ ներկայացնելու⁷⁷:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ● Արդար դատաքննության իրավունք 	1
քաղաքացու արդար դատաքննության իրավունքի խախտում	1
<p>«Սասնա ծռեր» խմբի անդամ Հովհաննես Վարդանյանի որդիներից Պարույր Վարդանյանը նշել է, որ երբ իրեն տարել են ոստիկանություն, ԱԱԾ, ինքը փաստաբան չի ունեցել և իր իրավունքների մասին չի տեղեկացվել⁷⁸:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք 	1
հոգեբանական ճնշման ենթարկելը	1
<p>«Հիմնադիր խորհրդարանի» ներկայացուցիչ, 16-ամյա Հարությունյանի շահերը ներկայացնող փաստաբան Վարուժան Ավետիսյանն ասել է, որ</p>	

⁷⁶ Տե՛ս Սարի թաղի բնակիչները քաղաքացիական հագուստով ոստիկանների վայրագություններից դեռ շոկի մեջ են: Հասանելի է <http://www.1in.am/1973329.html>

⁷⁷ Տե՛ս Սյուզան Սիմոնյանի նկատմամբ իրականացվում է ապօրինի հետապնդում. «Հիմնադիր խորհրդարան»: Հասանելի է <http://galatv.am/hy/news/158424/>

⁷⁸ Տե՛ս «Սասնա ծռեր» խմբի անդամներից Հովհաննես Վարդանյանի որդիներից մեկը կալանավորվել է, մյուսին կանչել են ԱԱԾ՝ հարցաքննության: Հասանելի է <http://news.am/arm/news/341266.html>

<p>հունվարի 12-ին ծեծի ենթարկված «Նոր Հայաստան» նախաձեռնության համակիր, անչափահաս Հովհաննես Հարությունյանին Քանաքեռ- Զեյթուն շրջանների Ոստիկանության բաժինը հոգեբանական ճնշումներ է գործադրել տղայի ընտանիքի նկատմամբ: Ավետիսյանը նշել է, որ ճնշումները եղել են տղային ու ընտանիքի անդամներին անընդհատ ոստիկանություն կանչելու ու խրատներ տալու եղանակով: Արդյունքում Հովհաննեսը հետ է վերցրել իր բողոքը և փաստաբանի համոզմամբ դատանում է նրան, որ նա փոխի իր նախնական հաղորդումն ու ասի, որ իրեն ծեծի ենթարկելը քաղաքական որևէ հիմք չի ունեցել և ինքն է դա այդպես ներկայացրել: «Ինձ տհաճ է աշխատել ոստիկանության հետ. թող ինձ չանհանգստացնեն, կլիտդրեմ, որ կատարեն իմ պահանջը, գործը փակվի», - ասել է Հովհաննեսը⁷⁹:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք 	1
<p>խտրական վերաբերում նք</p>	1
<p>Թեպետ վերջին օրերին համացանցում, մամուլի հրապարակումներում բազմաթիվ վկայություններ, լուսանկարներ, տեսանյութեր կան քաղաքացիների նկատմամբ ոստիկանների կողմից կիրառված ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների մասին, այդուհանդերձ որևէ քրեական գործ հարուցված չէ: ՄԻՊ գրասենյակը «Հետք»- ին ներկայացրեց, որ հուլիսի 17-20- ը ընկած ժամանակահատվածում ՄԻՊ թեժ գծով ստացվել է շուրջ 8 տասնյակ ահազանգ, որից մոտ 60-ը վերաբերել է բերման ենթարկելուն, մնացած 20 ահազանգով քաղաքացիները հայտնել են նաև բռնությունների մասին: Փոխարենը հուլիսի 20-ին ու 21-ին ՀՀ ոստիկանության պատրաստած նյութերի հիման վրա Երևանի քննչական վարչությունում քրեական գործեր են հարուցվել քաղաքացիների կողմից ոստիկանների նկատմամբ բռնություն կիրառելու (ՔՕ 316-րդ հոդվածի 2-րդ մաս), զանգվածային անկարգություններ կատարելու (ՔՕ 225-րդ հոդվածի 2-րդ մաս) հատկանիշներով: Կազմվել է քննչական-օպերատիվ խումբ: Ոստիկանության 6 ծառայող ճանաչվել է տուժող և հարցաքննվել⁸⁰:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք ● Տեղեկատվություն ստանալու իրավունք 	1
<p>լրագրողի գործունեությունը խոչընդոտելը</p>	1
<p>Հուլիսի 20-ին ՀՀ ոստիկանությունում մի քանի քաղաքացիներ ասուլիսով հանդես եկան՝ հայտարարելով, որ իրենց որդիները «Սասնա ծռեր» խմբի անդամ են դարձել ոչ թե իրենց կամքով, այլ ամենայն հավանականությամբ</p>	

⁷⁹ Տե՛ս Ոստիկանությունում ճնշում են գործադրում ծեծի ենթարկված անչափահասի վրա. Forrights.am: Հասանելի է <http://www.epress.am/2016/01/21/ոստիկանությունում-ճնշում-են-գործադր.html>

⁸⁰ Տե՛ս Ոստիկանները ճանաչվում են որպես տուժող, քաղաքացիները՝ ոչ: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69329/ostikannery-tchanachvum-en-orpes-tuzho-x-qaxaqacinery-och.html>

տղաներին իրենց կամքին հակառակ են ներքաշել խումբ: Ասուլիսի վերջանալուց հետո, երբ Armtimes-ի լրագրողը փորձել է վերջիններինս հետ առանձին զրուցել, սակայն բացասական պատասխան ստացան ոստիկանության լրատվական վարչության պետ Ահարոնյանից ⁸¹ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	1
քաղաքացուն բերման ենթարկելը	1
Հուլիսի 26-ին ահագանգել են Միհրան Ստեփանյանի հարազատները՝ հայտնելով, որ Երևանի Ռոսիա կինոթատրոնի մոտից ոստիկանները նրան տարել են ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին՝ այն պաճառաբանությամբ, որ իբր վերջինս ուղևորվելիս է եղել Խորենացի փողոցում անցկացվող հավաքի վայր ⁸² :	
<ul style="list-style-type: none"> ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
քաղաքացուն կատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելը	1
Հռոմի պապ Ֆրանցիսկոսի եւ կաթողիկոս Գարեգին Բ-ի մատուցած էկումենիկ արարողությանը եւ խաղաղության աղոթքին ցանկանում էր մասնակցել նաեւ քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարին իր կնոջ եւ որդու հետ: Սակայն նա հայտնել է Aravot.am-ին, որ իրեն թույլ չեն տվել ներս մտնել Հանրապետության հրապարակ: Մի քանի անգամ միտումնավոր փակում էին դարպասները հենց հասնում էր ներս մտնելու իրենց հերթը, -ասում էր Գասպարին: Նա հայտնել է նաև, որ մտնելուց հետո իրենց շրջապատել են մի 10-15 հոգով խուզարկելու համար, մինչդեռ մյուսներին այդ կարգով չէին խուսարկում: Գասպարիի ձեռքը բռնել էին, ուզում էին դուրս բերել: Վարդգես Գասպարին կարծում է՝ ոստիկանների նման պահվածքի պատճառ կարող էր դառնալ իր ձեռքի թուղթը: Մենք A4 ձեռագրի թուղթ ունեինք, իրենք շատ էին ցանկանում տեսնել, թե ինչ է վրան գրած, -ասել է նա ⁸³ :	
<ul style="list-style-type: none"> ● Խտրականությունից զերծ մնալու իրավունք ● Իրավական պաշտպանություն արդյունավետ միջոցների իրավունք ● Արդար դատաքնության իրավունք 	1
քաղաքացիներին հետապնդելը	1
2016թ. հուլիսի 17-30 ոստիկանության գործողությունների տուժած անձինք ենթարկվում են հետապնդումների այն քաղաքացիները, ովքեր 2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում տուժել են ոստիկանության անօրինական գործողություններից և որպես վկա կամ տուժող հրավիրվում են ՀՀ Հատուկ քննչական ծառայության կամ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից, այնուհետև գործատուների և անհայտ այլ անձանց կողմից ենթարկվում են հետապնդումների: Հետապնդումները հիմնականում դրսևորվում են հետևյալ կերպ. Ընտանիքի անդամները կամ	

⁸¹ Տե՛ս Ոստիկանությունը թույլ չտվեց առանձին խոսել «Սասնա ծռեր» խմբի անդամների ծնողների հետ: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89969>

⁸² Տե՛ս Ռոսիա կինոթատրոնի մոտից ոստիկանները տարել են Միհրան Ստեփանյանին: Հասանելի է <http://hcav.am/events/26-07-2016-0896/>

⁸³ Տե՛ս Գասպարին պառկել է Ամիրյան փողոցում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/25/708241/>

<p>2016 թվականի հուլիսի 17-30 ոստիկանության անօրինական գործողություններից տուժած անձինք ազատվում են աշխատանքից, Անհայտ անձինք այցելում են տուժածների բակ գրուցում հարևանների հետ, հարևանների միջնորդությամբ հորդորում տուժածներին «հեռու մնալ այս գործերից», Ոստիկանության աշխատակիցները առանց որևէ հիմնավորման և օրինական առիթի այցելում են տուժածների բակ, գրուցում հարևանների հետ տուժածների վերաբերյալ տարածելով քրեական հանցագործության մեջ մեղադրվելու և շուտով պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ հորինված և կեղծ տեղեկություններ⁸⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արդար դատաքնության իրավունք 	1
<p>քաղաքացու և ուժի կիրառմամբ բերման ենթարկելը</p>	1
<p>Հուլիսի 27-ին, ժամը 2-ին «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Արմեն Միքայելյանը Խորենացի փողոցից ընտանիքով տուն վերադառնալիս ապօրինի զենք, զինամթերք պահելու հողվածով՝ 235, ձեռքակալվել է: Նրա ներկայացմամբ՝ ճանապարհը փակել են 2 սև մեքենաներ, որոնցից դուրս եկած 8-10 քաղաքացիական հագուստով անհայտ անձինք հարձակվել են Արմենի վրա և բռնի ուժ կիրառելով առևանգել նրան՝ նստեցնելով մեքենան և տանելով անհայտ ուղղությամբ: Արմեն Միքայելյանի փաստաբան Երվանդ Վարոսյանը Aravot.am-ի հետ զրույցում նշեց, որ Արմեն Միքայելյանը մանրամասն նկարագրել է, թե ինչպես են ոստիկանները ոստիկանություն տանելու ճանապարհին նրա գոտկատեղին ատրճանակ տեղադրում, ընդ որում ոչ մեկ անգամ, քանի որ դժվար է եղել ատրճանակը այդ հասվածում երկար պահել⁸⁵:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք 	1
<p>քաղաքացու և անհիմն բերման ենթարկելը</p>	1
<p>Նոյեմբերի 11-ին Ոստիկանության բաժին բերման ենթարկված փաստաբան Վարդան Նիկողոսյանը հինգ ժամ պահվելուց հետո ազատ է արձակվել: «Փաստինֆո»-ի թղթակիցը Վարդան Նիկողոսյանից տեղեկացավ, որ բերման է ենթարկվել երևանյան սրճարաններից մեկից: Նիկողոսյանի խոսքով՝ երևանյան սրճարաններից մեկում փաստաբան ընկերներից մեկի երեխայի ծննդյան արարողության ժամանակ ոստիկանության աշխատակիցները մուտք են գործել և, առանց պարզաբանման ձեռնաշղթաներ հագցնելով, փաստաբանին բերման են ենթարկել: Փաստաբանը հայտնեց նաև, որ ոստիկանության աշխատակիցներին ներկայացել է, որ ինքը փաստաբան է, ասել է՝ խախտում են Սահմանադրությունը, ի պատասխան հնչել է՝ «թքած ունենք Սահմանադրության վրա» ու ձեռնաշղթաներ հագցնելով՝ փաստաբանին դուրս են բերել սրճարանից:</p>	

⁸⁴ Տե՛ս «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» Հ/Կ-ն ա հազանգում է: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/26/729450/>

⁸⁵ Տե՛ս Ըստ փաստաբանի՝ «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Արմեն Միքայելյանի գոտկատեղին ոստիկանները ատրճանակ տեղադրելով են ձեռքակալել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720622/>

<p>Այդ ամենից հետո ոստիկանության երեք աշխատակիցներ նրան պահել են մի սենյակում՝ թույլ չտալով որևէ շարժում կատարել, մինչև ժամանակ ոստիկանության շենքի դիմաց կանգնած փաստաբան Արմեն Հակոբյանին թույլ չեն տվել, որպեսզի գործ ընկերոջը իրավական օգնություն ցուցաբերի: Հարցին, թե ի վերջո փաստաբանն ինչու է բերման ենթարկվել, վերջինս նշեց, որ պարզաբանել են՝ իբրև թե խուլիզանություն կատարելու համար, այդ մասին էլ փաստաբանի վերևի հարևանն է ահագանցել:</p> <p>Այս պահին Վարդան Նիկողոսյանն իր շահերի պաշտպան Արսեն Մկրտչյանի հետ գտնվում է թիվ 2 բուժմիավորումում, քանի որ ձեռնաշղթաներ հագցնելու հետևանքով փաստաբանի ձեռքերի վրա թեթև վնասվածքներ են առաջացել⁸⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Տիպիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	14
<p>անչ ավահասին բերման ենթարկելը</p>	1
<p>Վաշխատուի պատճառով տնից զրկված Շահբազյանների 13-ամյա որդուն՝ Հարությունին, որը ծնողներին օգնելու համար դասից հետո Երևանի կենտրոնական փողոցներում անձեռոցիկ է վաճառում, ոստիկանները նոյեմբերի 28-ին բերման են ենթարկել: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 29-ին, NEWS.am-ի հետ զրույցում ասաց նրա մայրը՝ տիկին Մանուշը: Նա նշեց, որ Հարությունը սովորականի նման, դասից հետո գնացել է անձեռոցիկ վաճառելու, սակայն, ոստիկանները առանց որևիցե պատճառաբանություն ներկայացնելու, ուժ գործադրելով՝ փողոցից տարել են ոստիկանություն:</p> <p>«Գնացել եմ Կենտրոնի ոստիկանություն, ես հղի կին եմ, ինձ ոստիկանները ձեռք էին առնում: Ասում էին՝ ողորմելի եք, մուրացկանություն եք անում, զանգում եք լրատվամիջոցներին, որ ձեզ պաշտպանեն, դուք ի՞նչ կարաք, որ ինչ էլ անեք մեր դեմ: Ես իրենց հարցնում եմ՝ ինչ է արել տղաս, հո՞ գողություն չի արել, որ բերման եք ենթարկել, նա ընդամենն ուզում է օգնել մեզ, ասում են՝ լավ ենք արել», - ասաց նա:</p> <p>Տիկին Մանուշը նշեց, որ 13-ամյա Հարությունին ոստիկանություն տանելիս բռնության են ենթարկել: Ոստիկանությունից հետո ծողները նրան միանգամից տեղափոխել են հիվանդանոց, որտեղ բժիշկները հետազոտելուց հետո ասել են՝ երեխան վախեցած է⁸⁷:</p>	
<p>քաղաքացիներին բռնության կիրառմամբ բերման ենթարկելը</p>	12
<p>Դեպք 1. Հունիսի 25-ին «Հիմնադիր խորհրդարանի» գաղափարակից Հովհաննես Ղազարյանը գրառում է թողել ֆեյսբուքյան իր էջում առ այն, որ «Հիմնադիր խորհրդարան»-ի շենքի մոտից ոստիկանները բերման են ենթարկել մի քանի քաղաքացիական ակտիվիստների: Նրանցից մի քանիսին հարվածներ են հասցրել», - գրել է ակտիվիստը⁸⁸:</p>	

⁸⁶ Տե՛ս Ասել են «թբած ունենք» Սահմանադրության վրա ու փաստաբանին բերման ենթարկել: Հասանելի է <http://www.pastinfo.am/hy/news/2016/11/12/Ասել-են-«թբած-ունենք»-Սահմանադրության-վրա-ու-փաստաբանին-բերման-ենթարկել/471895>

⁸⁷ Տե՛ս Հղի մորը դեղ գնելու համար փողոցում անձեռոցիկ վաճառող տղային ոստիկանները բերման են ենթարկել. նա վախեցել է: Հասանելի է <https://news.am/arm/news/360013.html>

⁸⁸ Տե՛ս Երևանում առևանգել են նաև մի խումբ ակտիվիստների: Հասանելի է <http://galatv.am/hy/news/154707/>

<p>Դեպք 2. Հուլիսի 17-ին Ազատության հրապարակից առանց որևէ հիմքի բերման է ենթարկվել քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիին, իսկ ոստիկանությունում նրա նկատմամբ կիրառվել է բռնություն⁸⁹:</p>	
<p>Դեպք 3. Հուլիսի 17-ին Երևանի Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկից ոստիկանության բաժանմունք է տարվել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը, որն այնտեղ էր կնոջ հետ՝ միասին զբոսնում էին: Ոստիկանության ներկայացուցիչները պահանջեցին գեղանկարչին ներկայանալ: Ն. Աղաբաբյանը ներկայացավ, ինչը, սակայն, չբավարարեց իրավապահներին՝ նրա անձը հաստատված համարելու համար և ուժի կիրառմամբ ոստիկանները նրան նստեցրին ոստիկանական մեքենա⁹⁰:</p>	
<p>Դեպք 4. Հուլիսի 17-ին Ազատության հրապարակում ոստիկանները բերման ենթարկեցին երեք կանանց: Վերջիններս նստած էին Ազատության հրապարակի նստարաններին, երբ ոստիկանները մոտեցան նրանց և ուժի գործադրմամբ նստեցրին ոստիկանական մեքենան: Կանայք բղավում էին, որ իրենք ուսուցիչներ են ու պարզապես իրենց հանգիստն են անցկացնում Ազատության հրապարակում⁹¹:</p>	
<p>Դեպք 5. Արև Մելքոնյանը յոթ ժամից ավելի լուր չունեի ընկերոջից՝ Մնացական Ալեքսանյանից. «Հուլիսի 17-ին առավոտ 10-ին էր, Էրեբունու ոստիկանության մոտակայքի «Ծիրան» սուպերմարկետի մոտ էինք, ուզում էինք տեսնել՝ ինչի համար է ճանապարհը փակ: Մեր կողքին կանգնած էին երկու կանայք, ովքեր բարձրաձայն ինչ-որ բան էին խոսում, այնուհետ, նրանց լռեցնելու համար ոստիկաններ մոտեցան: Վայրկյաններ անց ոստիկաններից մեկը ասեց՝ մեքենան մոտեցրեք ու առանց որևէ բան ասելու, պարզաբանելու Մնացին մտցրեցին մեքենան: Հարցրեցի՝ ինչի համար եք բերման ենթարկում, բայց ոչ մի բացատրություն չտվեցին, կոպիտ կերպով ինձ հրեցին, որպեսզի չկարողանամ բռնել Մնացին», - պատմում է Արևը⁹²:</p>	
<p>Դեպք 6. Հուլիսի 17-ին բերման ենթարկեցին ևս երկու քաղաքացու, որոնցից մեկն անչափահաս է: Նրա մայրը մեզ հետ զրույցում ասաց, որ բերման ենթարկվողների թվում է նաև իր ամուսինը, ինչպես նաև հաղորդեց, որ երեխային ծեծի ենթարկվելով են բաժին տարել: Բերման ենթարկվածներն են Հովհաննես Պետրոսյանը և վերջինիս որդին՝ Արայում Պետրոսյանը⁹³:</p>	
<p>Դեպք 7. Հուլիսի 17-ին քաղաքացիական ակտիվիստ Վաղինակ Շուշանյանին ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել ու տարել անհայտ ուղղությամբ: Այս մասին Armtimes.com-ի թղթակցի հետ զրույցում ասաց ակտիվիստի մայրը՝ Մարիամ Պողոսյանը: «Հարվածում էին գլխիս, որովայնիս, կողային հատվածներիս, մեջքիս և</p>	

⁸⁹ Տե՛ս Վարդգես Գասպարին պատմում է իրեն բռնության ենթարկելու մասին: Հասանելի է <http://www.iragir.am/index/arm/0/right/view/136172>

⁹⁰ Տե՛ս Բերման է ենթարկվել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը. «Ա1+»: Հասանելի է <http://www.a1plus.am/1472621.html>

⁹¹ Տե՛ս Ազատության հրապարակից բերման են ենթարկում քաղաքացիների (ֆոտոշարք և Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716270/>

⁹² Տե՛ս «Հարցրեցի՝ ինչի համար եք բերման ենթարկում, ոչ մի բացատրություն չտվեցին»: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69215/harcrci-inchi-hamar-eq-berman-entarkum-och-mi-bacatruyuan-chtvecin.html>

⁹³ Տե՛ս Ոստիկանությունը բերման է ենթարկել անչափահաս տղայի: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89741>

<p>բռնցքով դեմքիս», - «Ոչ թալանին» շարժման ակտիվիստ Վաղինակ Շուշանյանն Aravot.am-ի հետ զրույցում պատմեց, թե ինչպես են ոստիկանական բաժնում իրեն ծեծի ենթարկել: Նա ասաց, որ ծեծողները 2 կամ 3 հոգի են եղել. «Ես պաշտպանվում էի: Կողային վնասվածքներ եմ ստացել՝ սալջարդ, ուսային հատվածում բավականին մեծ կոշիկի տեղով վնասվածք եմ ստացել, դեմքիս կապտուկներ, աչքերիս մեջ արյուն, շրթունքներս՝ պատռված»⁹⁴:</p>	
<p>Դեպք 8. «Ժողովրդավարական ուղի» կուսակցության անդամ Վիգեն Դավթյանը պատմել է, որ ինքը հուլիսի 17-ին Կասկադում նստած մարդ էր սպասում, որտեղից իրեն ձերբակալել են: Նա դիմադրություն ցույց չի տվել, մի երկու ապտակ են հասցրել իրեն⁹⁵:</p>	
<p>Դեպք 9. Ինձ ձերբակալել են մեր բակի խանութից, առանց որևէ խոսք ասելու քաշքշելով տարել են».- իր ՖԲ էջում հուլիսի 17-ին գրել է քաղաքացիական ակտիվիստ Նելի Մինասյանը⁹⁶:</p>	
<p>Դեպք 10. Հուլիսի 18-ին ժամը 13:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Խորենացի փողոցից անօրինական կերպով բերման են ենթարկվել Կարո Եղևուկյանը, Անտոն Իվչենկոն: 3 ժամ ոստիկանական բաժանմունքում անցկացնելուց հետո Իվչենկոյին բաց չեն թողել՝ պատճառաբանելով, որ դա անում են ազգային անվտանգության նկատառումներով: Նրանց ազատ են արձակել 4 ժամ 10 րոպե հետո: Նա հրաժարվել է որևէ փաստաթղթի տակ ստորագրել, բացի իր իրերը հետ վերցնելու մասին արձանագրությունից⁹⁷:</p>	
<p>Դեպք 11. «Առավոտի» տեղեկություններով՝ հուլիսի 18-ին ոստիկանությունը փողոցից բերման է ենթարկել 76-ամյա գրող, արձակագիր , գրականագետ Հովիկ Վարդումյանին, միակ պատճառաբանությունն այն է եղել, որ Վարդումյանը 92-93 թվականներին Արցախում կռվել է Ժիրայր Մեֆիլյանի հետ միասին: «Մեքենան կանգնել է մայրին շատ մոտ, չորս հոգով, շատ կոպիտ ձևով բռնել են, մինչև հիմա ձեռնաշղթաների հետքերը ձեռքերի վրա կան: Բայց հետո, բաժանմունքում, քննիչները նորմալ էին վերաբերվել», - պատմել է նրա կինը⁹⁸:</p>	
<p>Դեպք 12. Հուլիսի 18-ին ArmLur.am-ի թղթակիցը Խորենացու փողոցից հայտնել է լարված վիճակի մասին: Ոստիկանները մեքենաներին են մոտեցնում շարքային քաղաքացիների, պատահական անցորդների, կարծես, նրանց բերման ենթարկելու համար: Քաղաքացիների նկատմամբ</p>	

⁹⁴ Տե՛ս Վաղինակ Շուշանյանին ոստիկանները տարել են անհայտ ուղղությամբ: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89766> և «Դեմքիս՝ կապտուկներ, աչքերիս մեջ՝ արյուն, շրթունքներս՝ պատռված».

Վաղինակ Շուշանյանը՝ ոստիկանների ծեծելու մասին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716503/>

⁹⁵ Տե՛ս Մերժիկ Սարգսյան և Վլադիմիր Գասպարյան, ձեր շներին դա ստիարակեք. բերման ենթարկված: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89818>

⁹⁶ Տե՛ս Մեզ չծեծեցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս. քաղաքացիներին ծեծի են ենթարկել: Հասանելի է

<http://hraparak.am/?p=117717&l=am/mez+chcececin+sakayn+koxqi+senyacic+dzayner+e+in+galis+qaxaqaciner+ceci+en+e+ntarke>

⁹⁷ Տե՛ս Վարուժան Ավետիսյանի կինն ու դուստրը ևս բերման ենթարկվեցին (Ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716654/> և

⁹⁸ Տե՛ս Ոստիկանությունը բերման է ենթարկել արձակագիր Հովիկ Վարդումյանին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716608/> և

նման վերաբերմունք դրսևորելու պատճառը դեռևս հայտնի չէ. այս պահին ոստիկանների հետ երկխոսության դուրս գալ հնարավոր չէ: Ի դեպ, ArmLur.am-ի թղթակիցը հաղորդում է նաև, որ քաղաքացիներից մեկը ամուր բռնվել է ծառից, որպեսզի իրեն չկարողանան հեռացնել տարածքից. նրա նկատմամբ ևս ուժ է կիրառվում ⁹⁹ :	
քաղաքացու ն առևանգելը	1
Հուլիսի 20-ին քաղաքացիական հազուստով մարդիկ Խորենացի փողոցից առևանգել են արվեստագետ Արթուր Պետրոսյանին: Կեսգիշերից հետո երեք անհայտ անձինք նրան բռնի ուժով մտցրել են 34 ՍՔ 673 համարանիշներով սպիտակ գույնի «Տոյոտա կորոլա» մակնիշի ավտոմեքենա: Epress.am -ի հետ զրույցում նրա ընկերները պատմել են, որ այդ պահին նա պարզապես կանգնած է եղել, իսկ գործողության պահին Պետրոսյանը սկսել է բղավել «Մերժիկ, մարդասպան»: Պետրոսյանի ընկերները փորձել են խոչնդոտել այդ մարդկանց գործողությունները, սակայն նրանց չի հաջողվել կանխել առևանգումը ¹⁰⁰ :	
<ul style="list-style-type: none"> ● Տիգրիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացու նկատմամբ բռնություն կիրառելը	1
Մարտի 8-ին Գորիսի ոստիկանապետ Գևորգ Ազիզյանը Գորիսի «Դիանա» ռեստորանային համալիրում ծեծի է ենթարկել Արթուր Գևորգյանին՝ հայհոյանքներ տալով: Ու բավական չէ, որ ոստիկանապետը ծեծել է քաղաքացուն, դեռ մի բան էլ Արթուր Գևորգյանի նկատմամբ քրգործ է հարուցել՝ իշխանության ներկայացուցչին դիմադրելու հասկանիշներով ¹⁰¹ :	
<ul style="list-style-type: none"> ● Տիգրիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք 	1
քաղաքացու ն խոշտանգելը	1
Մարի թաղի բնակիչները պատմում են իրենց կալանավորված ամուսինների իրավունքների խախտման և նրանց խոշտանգելու մասին ¹⁰² :	
<ul style="list-style-type: none"> ● Տիգրիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Գուլքի անձեռնախել իության և սեփականության իրավունք 	1
քաղաքացու ն բռնության ենթարկելը	1
Հուլիսի 29-ին Գարիկ Առուստամյանն ընկերոջ հետ գնացել է Մարի թաղ քրոջը տուն բերելու, երբ հայտնվել է իրադարձությունների կենտրոնում: Ընկերը՝ Պետրոս Խաչատրյանը NEWS.am-ի հետ զրույցում պատմեց, որ	

⁹⁹ Տե՛ս Խորենացու փողոցում լարված վիճակ է. ոստիկանները բերման են ենթարկում անցորդներին (Ֆոտո, վիդեո): Հասանելի է <http://arm.lur.am/557551/>

¹⁰⁰ Տե՛ս Արվեստագետ Արթուր Պետրոսյանին բաց են թողել ոստիկանության բաժնից (թարմացված): Հասանելի է <http://www.epress.am/2016/07/20/քաղաքացիական-հազուստով-անձինք-առևանգում.html>

¹⁰¹ Տե՛ս Աղմկահարույց դեպք Գորիսում. կիզակետում Սյունիքի իրավապահների ողջ ղեկավար կազմն է. «Ժողովուրդ»: Հասանելի է <http://arm.lur.am/502640/>

¹⁰² Տե՛ս «Կզգեմ ոտներիս տակ». Մարի թաղի կալանավորվածներին խոշտանգում են: Հասանելի է <http://www.1in.am/1988823.html>

<p>նստիկաններն իրենց թույլ չեն տվել մեքենայով դուրս գալ Մարի թաղից, դուրս են բերել մեքենայի միջից, ծեծի ենթարկել թե իրենց երկուսին, թե Գարիկի քրոջը:</p> <p>«Կանգնեցրին մեքենան, հարվածեցին տանիքին, ավտոմեքենայի կողային հայելիները կտորեցին, մեզ դուբինկաներով ծեծեցին, էնքան ծեծեցին, որ Գևորգը 2 օր վերակենդանացման բաժանմունքում անցկացրեց», - պատմեց ընկերը՝ նշելով, որ ավտոմեքենան հիմա տուգանային հրապարակում են, դռները կտրած են, ապակիները կտրված, մեջը գումար է եղել, որը չկա¹⁰³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Իրավական պաշտպանություն արդյունավետ միջոցների իրավունք ● Արդար դատաքննության իրավունք 	1
<p>քաղաքացու և բռնության ենթարկելը</p>	1
<p>ՀՀ քաղաքացի Համլետ Գասպարյանին սեպտեմբերի 5-ին հրավիրում են ոստիկանական բաժանմունք կոտրված քթի հետ կապված բացատրություն տալու: «Ինձ տանում են միլիտերի սենյակ, - պատմում է Համլետը, - միլիտերն ինձ ասում ա՛ գնա, մտածի, թե ինչ ա պատահել, կգաս, մեզ կասես: Ասում եմ՝ ես մտածելու բան չունեմ, ինչ կա, արդեն ասել եմ ձեզ: Էդ պահին դուրս գալուց քրեականի պետը հետևիցս խփեց, ֆռացել եմ ասում եմ՝ խի ես խփում, ասում ա՛ լավ եմ անում: Ասում ա՛ քիթդ ջարդած չլինեք, մի հատ էլ ես քիթդ կջարդեի»: Համլետը փորձում է պատասխանել ոստիկանին: Հետո վերջինս սկսում է տղային հարվածել ոտքերով: Համլետի խոսքերով՝ ինքը փորձ է արել պաշտպանվել, բայց հարվածների տարափը չի դադարել: Մայրը և կինը ձայներ են լսում և սենյակից դուրս են գալիս ու ականատես լինում ծեծի տեսարանին: Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 12-ին (Գեղեցիկի նշած ամսաթիվը), նրանց են այցելում ոստիկաններ՝ խուզարկության համար: Նրանք պնդում են, որ Համլետ Գասպարյանը Գոգոլ և Յան Ռայմնիս փողոցների խաչմերուկում կատարել է կողոպուտ՝ Նաիրա Վարդանյանի պարանոցից քաշել-պոկելու եղանակով հափշտակելով ոսկյա շղթա՝ կախազարդով: Այնուհետև խոչընդոտում են Համլետին և իր պաշտպանին ծանոթանալ նրա անմեղությունն ապացուցող տեսագրություններին և փաստերին¹⁰⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք 	2
<p>լրագրողի նկատմամբ բռնություն կիրառելը</p>	2

¹⁰³ Տե՛ս՝ Նիզամեցիները սպառնում են ճանապարհ փակել, եթե Գարիկ Առուստամյանը 2 օրվա ընթացքում ազատ չարձակվի (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/341204.html>

¹⁰⁴ Տե՛ս՝ Քթի վնասվածքը՝ գողության մեջ կասկածվելու առիթ. մի դրվագ ոստիկանության՝ հանցագործություն «բացահայտելու» փորձից: Հասանելի է <http://hetq.am/arm/news/73036/qti-vnasvatsqy-goxutyanyan-mej-kaskatsve-lu-arit-mi-drvag-ostikanutyanyan-bacahaytelu-pordzic.html>

Դեպք 1. Հուլիսի 18-ին Խորենացի փողոցից քաղաքացիներին բերման ենթարկելու ընթացքում ոստիկաններից մեկը հարվածել է «Ազատության» լրագրողին ¹⁰⁵ :	
Դեպք 2. Հուլիսի 18-ին Խորենացի փողոցում ոստիկանները խոչընդոտել են աշխատող լրագրողների իրավունքը՝ հրելով նրանց և հեռացնելով փողոցից ¹⁰⁶ :	
Ազատ տեղաշարժվելու իրավունք	5
քաղաքացիների ազատ տեղաշարժվելը խոչընդոտելը	5
Դեպք 1. Մայիսի 19-ին Մաշտոց-Թումանյան խաչմերուկում կոմպոզիտոր Տիգրան Մանուկյանը ցանկանում էր փողոցն անցնել կանաչի տակ, բայց ոստիկանները նրան թույլ չէին տալիս, քանի որ Մաշտոցի պողոտայով այդ պահին ինչ-որ պատվիրակություն էր անցնում ¹⁰⁷ :	
Դեպք 2. Քաղաքացին հայտնել է, որ 2016թ. մարտի 19-ին Զվարթնոց օդանավակայանից ցանկացել է մեկնել արտերկիր, սակայն Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության կողմից սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով սահմանափակված է եղել իր՝ երկրից դուրս գալու հնարավորությունը ¹⁰⁸ :	
Դեպք 3. Հուլիսի 19-ին Խորենացի փողոցում լրագրողներին ու ոստիկաններին բաժանող ՀՀ պետական դրոշի գույներ կրող սահմանազատիչ ժապավենն այսօր փոխարինվեց «երկաթյա պատնեշներով»: Մինչ ոստիկանները դրանք տեղադրում էին, հարևանությամբ գտնվող սուպերմարկետի տնօրինությունն իր դժգոհությունն էր հայտնում փաստի կապակցությամբ. Ոստիկանների տեղադրած «պատնեշները» գրեթե փակել էին սուպերմարկետի մուտքը, ինչի հետևանքով խոչընդոտվում էր քաղաքացիների ազատ տեղաշարժը ¹⁰⁹ :	
Դեպք 4. Արվեստագետ Արտակ Գևորգյանին թույլ չեն տալիս լքել Հայաստանը: 2015 թվականի դեկտեմբերին նա սովորաբար թե տանկով հարվածել էր ԱԱԾի շենքի պատին, դեպքի առնչությամբ քրգործ էր հարուցվել, բայց Գևորգյանը արդարացվել էր, իսկ երկրից չհեռանալու պարտավորությունը վերացվել ¹¹⁰ :	
Դեպք 5. ՀՀ քաղաքացի Անտոն Իվչենկոյին թույլ չեն տալիս հատել Հայաստանի սահմանը: Իվչենկոն համոզմունք էր հայտնել, որ իրեն երկրից փաստացի դուրս	

¹⁰⁵ Տե՛ս Ոստիկանը հարվածեց «Ազատության» լրագրողին: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27865228.html>; <http://www.lragir.am/index/arm/0/videos/view/136093>; <http://www.aravot.am/2016/07/24/719343/>

¹⁰⁶ Տե՛ս Երեք երիտասարդի ուժով տեղափոխում են ոստիկանություն: Հասանելի է <http://galatv.am/hy/news/news157418/>

¹⁰⁷ Տե՛ս Մաեստրոն ինքը հարցեր ունի: Հասանելի է <http://hraparak.am/?p=111883&l=am/maestron+ingy+harcervo+ni>

¹⁰⁸ Տե՛ս Պաշտպանի միջամտությամբ վերացվել է քաղաքացու նկատմամբ կիրառված արգելքը: Հասանելի է <http://www.1in.am/1945120.html>

¹⁰⁹ Տե՛ս Խոչընդոտվում է քաղաքացիների ազատ տեղաշարժը (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1473388.html>

¹¹⁰ Տե՛ս Արվեստագետին ապօրինաբար թույլ չեն տալիս Հայաստանից դուրս գալ: Հասանելի է <http://www.epress.am/2016/09/13/արվեստագետին-ապօրինաբար-թույլ-չեն-տա.html>

չթողնելը կապված է արվեստագետ Արտակ Գևորգյանի դեպքի հետ: Վերջինս նախորդ տարվա դեկտեմբերին ստվարաթղթե տանկով հարված էր ԱԱԾ-ի պատին ¹¹¹ :	
Ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու և բնակչի ըստ բնակության վայրի հաշվառվելու իրավունք	1
քաղաքացու և իր բնակության հասցեում չգրանցելը	1
Գյումրու բռնցքամարտի դպրոցի մոտակայքում գտնվող թիվ 238/070 տնակի բնակիչ Գագիկ Գասպարյանն ասուլիս էր հրավիրել Գյումրիում և հայտնել է, որ իր որդին՝ Մելիք Գասպարյանը, գորակոչվեց բանակ, վեց ամիս անց ծառայության ընթացքում հիվանդություն ստանալով, գորացրվեց տուն, սակայն ոստիկանության անձնագրային բաժինը տղային չի գրանցում նույն հասցեում ոստիկանության Մուշի բաժնի տեսուչ Էդիկ Ավոյանի տված կեղծ տեղեկատվության պատճառով, որ իբր տղան նշված տնակում չի բնակվում ¹¹² :	
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	36
անչափահասներին առևանգելը	1
Հուլիսի 28-ին Ազատության հրապարակի մոտակայքից քաղաքացիական հագուստով երկու տղամարդ փորձել են բռնի ուժով նստեցնել 33 PU 908 պետհամարանիշի Մերսեդես մակնիշի մեքենան ու տանել երկու անչափահասներին: Ժառանգության անդամ Սուսաննա Մուրադյանն է միջադեպը պատահաբար տեսել ու միջամտել. «Պատահաբար տեսանք, որ մի մեքենայից կասկածելի արտաքինով մոտ 30-35 տարեկան երկու տղա իջան և երկու անչափահասի հրմշտելով, թևերը ոլորելով մտցնում էին մեքենա: Հարցնում էինք՝ ինչ էին անում, ասում էին ծխում էին: Երեխաները գոռում էին՝ օգնեցե՛ք»: Սուսաննա Մուրադյանը դիմել է ոստիկանների, ոստիկաններն ասել են՝ ամեն ինչ լավ կլինի, դուք գնացե՛ք: Երեխաները մեքենայից մի կերպ փախչել են ¹¹³ :	
առանց հիմնավորում ներկայացնելու անձին բերման ենթարկելը	1
Մարտի 11-ին ոստիկանները բերման են ենթարկել «Հիմնադիր խորհրդարանի» գաղափարակից Սյուզի Գևորգյանին: Այդ մասին hrparak.am-ին հայտնեց հենց Սյուզի Գևորգյանը, վերջինս գտնվել է Կոմիտասում և պատմեց, որ ոստիկաններն իրեն չեն հայտնում, թե ինչի համար է բերման ենթարկվում ¹¹⁴ :	
բերման ենթարկելը	31
Դեպք 1. Հունվարի 3-ին բերման է ենթարկվել «Նոր Հայաստանի» անդամ Ժորժիկ Իսայանը ¹¹⁵ :	
Դեպք 2. Հունիսի 23-ին քաղաքացիական հագուստով անձինք Սայաթ-	

¹¹¹ Տե՛ս «Ստվարաթղթե տանկի» գործով անցած անձանց թույլ չեն տալիս Հայաստանից դուրս գալ: Հասանելի է <http://www.epress.am/2016/09/23/«ստվարաթղթե-տանկի»-գործով-անցած-անձա.html>

¹¹² Տե՛ս Ոստիկանն ու ՀՔԾ քննիչը գործ են սարքում գյումրեցի անօթևանի զլխին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/05/03/687596/>

¹¹³ Տե՛ս «Երկու անչափահասի հրմշտելով, թևերը ոլորելով մտցնում էին մեքենա». Սուսաննա Մուրադյան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/28/721285/>

¹¹⁴ Տե՛ս Բերման են ենթարկել Սյուզի Գևորգյանին: Հասանելի է <http://hrparak.am/?p=104912&l=am/berman+en+entarkel+syuzi+gevorgyan>

¹¹⁵ Տե՛ս Բերման են ենթարկվել «Նոր Հայաստանի» 2 անդամ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/03/644676/>

Նովա փողոսում մոտեցել են «Նոր Հայաստան» շարժման աջակից Տիգրան Մանուկյանին, ներկայացել որպես ոստիկաններ և նրան բերման ենթարկել ¹¹⁶ :	
Դեպք 3. Հունիսի 25-ին բերման են ենթարկվել Սերգեյ Կյուրեղյանը, Էլմոն Եղնուկյանը, Միքայել Նազարյանը, որոնք դուրս էին եկել «Հիմնադիր խորհրդարան»-ի գրասենյակից ¹¹⁷ :	
Դեպք 4. Հունիսի 25-ին քաղաքացիական հազուստով ոստիկանության աշխատակիցները առանց որևէ հիմնավորման բերման են ենթարկել Տիգրան Կիրիշչյանին ¹¹⁸ :	
Դեպք 5. Հունիսի 25-ին Աբովյան փողոցից բերման են ենթարկվել Հիմնադիր Խորհրդարանի 3 աջակիցներ: Քաղաքացիական հազուստով ոստիկանները չհիմնավորեցին, թե ինչու են քաղաքացիներին ավտոմեքենաներ նստեցնում ¹¹⁹ :	
Դեպք 6. Հուլիսի 17-ին Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին բերման են ենթարկվել Հասմիկ Էվոյանը, Հովհաննես Ղազարյանը, Գևորգ Մանուկյանը, Տիգրան Սիմոնյանը, Ժաննա Ժամհարյան, Վարդան Ղարադաղյանը, Քերոբ (ազգանունը հայտնի չէ) և ևս մեկ անձ, որի ինքնությունը ճշտված չէ ¹²⁰ :	
Դեպք 7. Հուլիսի 17-ին Գյումրու ոստիկանության «Մուշ» բաժին բերման է ենթարկվել Գյումրիի մանկավարժական ինստիտուտի դասախոս Արմեն Ներսիսյանը ¹²¹ :	
Դեպք 8. Հուլիսի 17-ին Խորենացի 45 շենքի մոտ ոստիկանները մի քանի երիտասարդի են բերման ենթարկել: Թե ովքե՞ր էին այդ երիտասարդները և ինչի՞ համար նրանց տարան ոստիկանական մեքենայով, պարզ չէր ¹²² :	
Դեպք 9. Հուլիսի 17-ին «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը հաղորդագրություն է տարածել, որով տեղեկացնում է, որ առանց իրավական հիմնավորման Արթիկ ոստիկանության բաժին բերման է ենթարկվել «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը ¹²³ :	
Դեպք 10. Հուլիսի 17-ի առավոտյան ժամը 9-ին ոստիկանությունը այցելել է	

¹¹⁶ Տե՛ս Քաղաքացիական ակտիվիստին բերման են ենթարկել՝ շփոթելով հանցագործի հե՞տ: Հասանելի է <http://hraparak.am/?p=115317&l=am/qaxaqaciakan+aktivistin+berman+en+entarkel%D5%9D+shpote lov+hancagorci+het>

¹¹⁷ Տե՛ս «Նրանցից մի քանիսին հարվածներ են հասցրել». ակտիվիստներ են բերման ենթարկվել (լուսանկարներ): Հասանելի է <http://hraparak.am/?p=115495&l=am/nrancic+mi+qanisin+harvacner+en+hascrel+aktivistner+en+berman+entarkvel+lu sa n karnet>

¹¹⁸ Տե՛ս Քաղաքացիական հազուստով ոստիկանները բերման են ենթարկել Armtimes.com-ի ֆոտոթղթակցին: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/88324>

¹¹⁹ Տե՛ս Շարունակում են բերման ենթարկել ՀԽ համակիրներին (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1467013.html>

¹²⁰ Տե՛ս Բերման ենթարկված անձի քաղաքացիական անունը և մնալ ոստիկանության բաժիններում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716166/>

¹²¹ Տե՛ս Գյումրիում ոստիկանություն բերման ենթարկված բոլոր անձանց ազատ արձակեցին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716368/>

¹²² Տե՛ս Խորենացի 45 շենքի մոտից ոստիկանները մի քանի երիտասարդ տարան մեքենայով: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716114/>

¹²³ Տե՛ս Պետրոս Մակեյանին բերման են ենթարկել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716100/>

<p>Էջմիածնի շրջանի Պտղոսը գյուղում գտնվող՝ ազատագրված ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանի տուն և ոստիկանության Վաղարշապատի բաժին տարել նրա որդուն՝ «Հիմնադիր խորհրդարան»-ի նախկին անդամ Նորայր Ավետիսյանին:</p> <p>Այս մասին «Ազատության»-ն ասաց Ավետիսյանի կինը՝ Մարգարիտա Բաղրամյանը, պնդելով, թե ոստիկանությունը որևէ փաստաթուղթ, որևէ հիմնավորում չի ներկայացրել՝ որդուն ոստիկանական բաժանմունք տանելու համար¹²⁴:</p>	
<p>Դեպք 11. Հուլիսի 17-ին Ազատության հրապարակից առանց որևէ հիմքի բերման են ենթարկվել մի կնոջ¹²⁵:</p>	
<p>Դեպք 12. Հուլիսի 17-ին Ոստիկանություն են տարել 2015թ. Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ պայքարող գյումրեցի ակտիվիստներին: «Էլեկտրիկ Գյումրիի» տղաներին մոտ 10-15 հոգու ոստիկանություն են տարել տներից¹²⁶:</p>	
<p>Դեպք 13. Հուլիսի 17-ին բերման է ենթարկվել մեկ քաղաքացի, ում անձը չհաջողվեց ճշտել. նա փորձում էր ոստիկաններից իմանալ Նիկոլ Աղաբաբյանին բերման ենթարկվելու իրավական հիմքերը¹²⁷:</p>	
<p>Դեպք 14. Հուլիսի 17-ին Հյուսիսային պողոտայի և Թումանյան փողոցի հատման վայրից բերման է ենթարկվել մեկ տղամարդ¹²⁸:</p>	
<p>Դեպք 15. Հուլիսի 17-ին Լրագրողների հետ զրույցում Զարուհի Փոստանջյանը տեղեկացրեց, որ ոստիկանները փորձում են բերման ենթարկել «Ժառանգություն» կուսակցության անդամներին: Նրանք, ըստ Փոստանջյանի, ներխուժել են կուսակցության գրասենյակ, տարել պահակին ու փորձում են բերման ենթարկել կուսակցության այլ անդամների՝ նաև մարզային գրասենյակներից¹²⁹:</p>	
<p>Դեպք 16. Հուլիսի 17-ին Aravot.am-ի հետ զրույցում Շահեն Հարությունյանը տեղեկացրել է, որ ոստիկանները պատրաստվում են նրան բաժին տանել: Նա ասաց, որ առավոտից ոստիկաններն իր բնակարանում են, և այս պահին սպասում են, որ Շահենը պատրաստվի և տանեն բաժին: Խուզարկություն Հարությունյանի բնակարանում չի կատարվել: Մեր հարցին՝ ինչ հիմնավորմամբ են ոստիկանները նրան ոստիկանական բաժին տանում, Շահեն Հարությունյանն ասաց, որ իրեն այդ մասին իրավապահները ոչինչ չեն հայտնում¹³⁰:</p>	

¹²⁴ Տե՛ս Բերման է ենթարկվել Վոլոդյա Ավետիսյանի որդին: Հասանելի է

<http://www.azatutyun.am/a/27863262.html>

¹²⁵ Տե՛ս Ազատության հրապարակից բերման են ենթարկում քաղաքացիներին: Հասանելի է

<http://www.aravot.am/2016/07/17/716159/>

¹²⁶ Տե՛ս Ոստիկանություն են տարել «Էլեկտրիկ Գյումրիի» ակտիվիստներին: Հասանելի է

<http://www.aravot.am/2016/07/17/716231/>

¹²⁷ Տե՛ս Բերման է ենթարկվել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը. «Ա1+»: Հասանելի է

<http://www.a1plus.am/1472621.html>

¹²⁸ Տե՛ս Ազատության հրապարակից բերման են ենթարկում քաղաքացիների (ֆոտոռաբբ և Տե՛ս անյութ):

Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716270/>

¹²⁹ Տե՛ս Ազատության հրապարակից բերման են ենթարկում քաղաքացիների (ֆոտոռաբբ և Տե՛ս անյութ):

Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716270/>

¹³⁰ Տե՛ս Շահեն Հարությունյանին ոստիկանական բաժին են տանում: Հասանելի է

<http://www.aravot.am/2016/07/17/716172/>

<p>Դեպք 17. Հուլիսի 17-ին Ազատության հրապարակից բերման են ենթարկել 2 երիտասարդի: Ընդ որում տեսանյութից ակնհայտ երևում է, որ բերման ենթարկված երիտասարդներից մեկն ունի առողջական խնդիրներ¹³¹:</p>	
<p>Դեպք 18. Հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքի մոտից մի քանի քաղաքացիների են բերման ենթարկել: ArmLur.am-ը տեղում պարզեց, որ բերման ենթարկվածները Պարույր Հայրիկյանի կողմնակիցներն են¹³²:</p>	
<p>Դեպք 19. Hraparak.am-ը տեղեկացնում է, որ հուլիսի 17-ին բերման են ենթարկել «Հիմնադիր խորհրդարան»-ի գաղափարակից Սյուզի Գևորգյանին և «զինված խմբավորման» գործով մեղադրյալ, քաղաքացիական ակտիվիստ Նելի Մինասյանին: Բերման ենթարկվածների թվում է նաև «Հայ կանանց ճակատից» Իրինա Հարությունյանը¹³³:</p>	
<p>Դեպք 20. Hraparak.am-ը տեղեկացրել էր, որ հուլիսի 17-ին Էրեբունու ոստիկանության շենքի մոտ ոստիկանները բերման են ենթարկել ոմն ԱԻՄ-ի Գագոյին: Պարզվեց տղամարդն ազատամարտիկ, «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ Գագիկ Սարուխանյանն է: Այդ մասին hraparak.am-ը տեղեկացավ ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանից¹³⁴:</p>	
<p>Դեպք 21. Հուլիսի 17-ին «Ոտքի՛ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնության անդամներ Դավիթ Սանսարյանը, Անդրիաս Ղուկասյանը և Դավիթ Հովհաննիսյանը բերման են ենթարկվել Էջմիածնի ոստիկանություն¹³⁵:</p>	
<p>Դեպք 22. Հուլիսի 17-ին Ոստիկանության Կումայրի բաժին բերման են ենթարկել «Ժառանգություն» կուսակցության անդամ Եղիշե Շարյանին ու Կառնուտ գյուղի էլեկտրիկին՝ Սևակ Խաչատրյանին: Շիրակի մարզի «Հիմնադիր խորհրդարանի» պատասխանատու Արամ Հակոբյանն, Aravot.am-ի հետ զրույցում ասել է, որ իր տեղեկություններով հուլիսի 17-ին բերման են ենթարկել «Գոհար» երգչախմբի երաժիշտներից՝ կոնտրաբասիստ Խաչիկ Դանիելյանին: Առավոտվանից տարել են, գիշերը բաց թողել, ամենաերկարը իրեն են պահել: Բոլոր բերման ենթարկվածները 2015թ-ին մասնակցել են էլեկտրաէներգիայի դեմ պայքարին¹³⁶:</p>	
<p>Դեպք 23. Հուլիսի 20-ի առավոտյան իրավապահները ոստիկանության Էրեբունի բաժին են բերման ենթարկել «ԴԵՍ ԵՍ» քաղաքացիական շարժման անդամ Սևակ Ծատուրյանին: Ինչպես «Ա1+»-ի հետ զրույցում ասաց Սևակ Ծատուրյանը՝ ոստիկաններն իրեն ասել են, որ գիշերը Սարի թաղում տեղի ունեցած</p>	

¹³¹ Տե՛ս Ինչ իրավիճակ է Ազատության հրապարակում և ինչու են այնտեղից մարդկանց բերման ենթարկում (Ֆոտո, վիդեո): Հասանելի է <http://arm.lur.am/556988/>

¹³² Տե՛ս Ինչպես են ՊՊՇ շենքի տարածքից բերման ենթարկում քաղաքացիներին (Տե՛ս անյու թ): Հասանելի է <http://arm.lur.am/556947/>

¹³³ Տե՛ս Ոստիկանների կողմից բերման ենթարկվածների «սև ցուցակը»: Հասանելի է <http://hraparak.am/?p=117668&l=am/ostikane+ri+koxmic+berman+entarkvacneri+sev+cucaky>

¹³⁴ Տե՛ս Գագիկ Սարուխանյանը տեղեկատվություն էր ապահովում «դեպքի վայրից»: Հասանելի է <http://hraparak.am/?p=117659&l=am/gagik+saruxanyany+texekatvutyun+er+apahovum+depqi+vayric>

¹³⁵ Տե՛ս Ազատության հրապարակից բերման ենթարկվեցին մի շարք ընդդիմադիրներ: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27863637.html>

¹³⁶ Տե՛ս «Գոհար» երգչախմբի երաժշտին նույնպես բերման էին ենթարկել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716594/>

<p>իրադարձությունների տեսանյութերում ինչ-որ մեկին են նմանեցրել և հիմա ուզում են պարզել՝ այդ անձը Սևակ Ծատուրյանն է, թե՞ ոչ: Սևակ Ծատուրյանի վստահեցմամբ՝ գիշերն ինքը չի եղել Սարի թաղում և արդեն երեք ժամից ավելի է՝ ոստիկանության բաժանմունքում է, շուտով կիրականացվի քննչական գործողություն՝ կասկածյալի կարգավիճակով¹³⁷:</p>	
<p>Դեպք 24. Հուլիսի 20-ին մի տարեց ցուցարար Խորենացի փողոցում, որը ներկայացավ որպես Հայաստանի չեմպիոն, լեզվաբան, ասաց, որ իր որդուն ոստիկանները տանից տարել են, և մինչև հիմա տեղեկություն չունի¹³⁸:</p>	
<p>Դեպք 25. Հուլիսի 21-ին ոստիկանները բերման էին ենթարկել հուլիսի 17-ին Էրեբունի ՊՊԾ գուտըր գրաված «Սասնա ծռեր» խմբի անդամներից Արայիկ Խանդոյանի (լուսանկարում) եղբորը՝ Արարատ Խանդոյանին: Hetq.am-ը գրում է, որ նրան տարել են Ազատության հրապարակի հարակից սրճարաններից մեկից¹³⁹:</p>	
<p>Դեպք 26. Հուլիսի 27-ին Կապանում ոստիկանները բերման են ենթարկել Շանթ Հարությունյանի հետ դատապարտված, այժմ ազատության մեջ գտնվող Արմեն Հովհաննիսյանին¹⁴⁰:</p>	
<p>Դեպք 27. Հուլիսի 27-ին Ոստիկանությունը բերման է ենթարկել Էրեբունու մոտակա շենքերի բնակիչներին իրենց բակերից¹⁴¹:</p>	
<p>Դեպք 28. Հուլիսի 29-ի Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն ահագանգ է ստացել, որ Մերսեդես մակնիշի, 84OS764 պետհամարանիշով ավտոմեքենայով ոստիկանները տարել են Համիկ Էվոյանին¹⁴²:</p>	
<p>Դեպք 29. Հուլիսի 29-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ահագանգ էր Արմենակ Կյուրեղյանը՝ հայտնելով, որ քաղաքացիական հազուստով անձինք, որոնք ներկայացել են որպես ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցներ, առանց որևէ հիմնավորման և որևէ փաստաթուղթ ներկայացնելու, սպիտակ մեքենայով տարել են Ալբերտ Բաղդասարյանին¹⁴³:</p>	
<p>Դեպք 30. Հուլիսի 30-ին իր բնակարանից բերման է ենթարկվել «Ոտքի Հայաստան» քաղաքացիական շարժման անդամ Դավիթ Հովհաննիսյանը և</p>	

¹³⁷ Տե՛ս Բերման է ենթարկվել «ԴԵՄ ԵՄ»-ի անդամը. նրան ինչ-որ մեկին են նմանեցրել: Հասանելի է <http://www.alplus.am/1473614.html>

¹³⁸ Տե՛ս Տարեց ցուցարարի որդուն ոստիկանները տարել են տանից: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/20/717810/>

¹³⁹ Տե՛ս Ոստիկանները բերման են ենթարկում «Սասնա ծռեր» խմբի անդամների հարազատներին: Հասանելի է <http://www.epress.am/2016/07/24/ոստիկանները-բերման-են-ենթարկում-«սասնա. html>

¹⁴⁰ Տե՛ս ՀՔԱՎ: Կապանում բերման է ենթարկվել Արմեն Հովհաննիսյանը: <http://www.lragir.am/index/arm/0/right/view/136698>

¹⁴¹ Տե՛ս Ոստիկանությունը բերման է ենթարկում Էրեբունու մոտակա շենքերի դրսում գտնվող բնակիչներին: Հասանելի է <http://www.1in.am/1966753.html>

¹⁴² Տե՛ս ՀՔԱՎ: Քաղաքացիական հազուստով ոստիկանները տարել են Ալբերտ Բաղդասարյանին և Համիկ Էվոյանին: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/136870>

¹⁴³ Տե՛ս ՀՔԱՎ: Քաղաքացիական հազուստով ոստիկանները տարել են Ալբերտ Բաղդասարյանին և Համիկ Էվոյանին: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/136870>

Քննչական կոմիտեում ձերբակալվել: Նրա դեմ ցուցմունք են տվել երկու ոստիկաններ ¹⁴⁴ :	
Դեպք 31. Հոկտեմբերի 14-ին ոստիկանությունը երկու անգամ «բաժին է հրավիրել» Շանթ Հարությունյանի որդուն՝ ակտիվիստ Շահեն Հարությունյանին: Ընդ որում, երկրորդ անգամ նրան բերման են ենթարկել հաց գնելիս. «Երբ ես մի քանի ժամ այլընտրանքային պատիժների կրման վայրում մնալուց հետո դուրս եկա այնտեղից, ինձ մոտեցան 3 ոստիկաններ ու ասացին, որ պետք է բերման ենթարկեն: Ինձ վերահսկող անձը թույլ չտվեց բերման ենթարկել: Ոստիկաններն ինձ տարան տուն», - պատմեց Շահենը: Այնուհետև ակտիվիստը որոշել է գնալ խանութ՝ հաց գնելու: Խանութից դուրս է եկել ու հանդիպել նույն ոստիկաններին, որոնք կեսօրին փորձել են իրեն բերման ենթարկել. «Էնքան սովորական ասեցին՝ գնացի՞ք, ոնց որ տաքսի լիներ խանութի մոտ սպասելիս: Ասացի՝ ո՞ւր ենք գնում, ասացին՝ ոստիկանության Մասիվի բաժին», - շարունակեց Շահենը: Վերջինս ընդօժեց, որ ոստիկանության աշխատակիցները չեն էլ թաքցրել, որ իրեն բերման ենթարկելը կապ ունի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցի հետ: «Կատակում էին, ասում էին չգիտե՞ս ինչի համար ենք բերել, իմանանք գնացել է՝ բաց թողնենք», - պատմեց ակտիվիստը ¹⁴⁵ :	
քաղաքացու ն ստնանգելը	1
Հուլիսի 17-ին Ազատության հրապարակից ժամը 11:00-11:30-ի սահմաններում ոստիկանները տարել են Ֆելիքս Հայրապետյանին: Նրա գտնվելու վայրի վերաբերյալ 18:50 դրությամբ հարազատները որևէ տեղեկություն չունեն և չեն կարողանում կապ հաստատել վերջինիս հետ ¹⁴⁶ :	
քաղաքացու ն բերման ենթարկելու փորձ	1
Մարտի 24-ին Հիմնադիր խորհրդարանի» և «Հայ կանանց ճակատի» անդամները բողոքի ցույց են իրականացրել Մաշտոցի պողոտայում: Ակցիայի ավարտից հետո Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը մոտեցել է անդամներից Նաիրա Բադալյանին և ասել, որ իրեն բերման են ենթարկում, քանի որ նա եւս մասնակցել է ակցիային եւ խախտել է հասարակական կարգը: Ի դեպ, հավաքվածները պնդում էին, որ կինը չի մասնակցել ակցիային, այլ կանգնած է եղել մայթին ¹⁴⁷ :	
քաղաքացու ն սպառնալը	1
«ՀՀ Ոստիկանության և Աշտարակի տեղական իշխանություններին, ՀՀ Անվտանգության զգուշացում եմ մեկ էլ չհամարձակվեք իմ տանս զանգը խփել և ինձ բերման ենթարկելու բառեր հնչեցնեք: Այսօր առավոտյան	

¹⁴⁴ Տե՛ս Դավիթ Հովհաննիսյանի դեմ ցուցմունք են տվել երկու ոստիկաններ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/06/724360/>

¹⁴⁵ Տե՛ս Մամ ջան, մենք էս իրականության դեմ ենք կռիվ տալիս. Շահենին այսօր 2 անգամ են բերման ենթարկել: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/95154>

¹⁴⁶ Տե՛ս Ֆելիքս Հայրապետյանի գտնվելու վայրը հայտնի չէ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716242/>

¹⁴⁷ Տե՛ս Ոստիկանը հարվածել է Կարո Եղնուկյանի կնոջը. Տե՛ս անյութ:

Հասանելի է <http://hraparak.am/?p=106134&l=am/ostikany+harvacele+e+karo+exnukyani+knojoy+tesanyut>

07.11.2016 ժամը 10.05 այդ արեցիք: Արմինե Առաքելյանի շահերը ներկայացնող, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փաստաբան Արայիկ Զայանը սա համարում է հետապնդում, որն ուղղված է Ա. Առաքելյանի անձի դեմ ¹⁴⁸ :	
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	1
քաղաքացիների անձնական տվյալների հավաքագրումը	1
ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը գրություն էր ստացել «Human Rights watch» կազմակերպությունից այն մասին, որ ոստիկանությունը բժիշկներից տվյալներ է հավաքում քաղցկեղով հիվանդ անձանց մասին: Ըստ այդ գրության՝ ամեն ամիս տվյալներ էր հավաքվում նաև այն մասին, թե ով ինչ դիագնոզ ունի, ինչքան հոգեմետ դեղ է ներարկում ստանում, ով է ներարկողը, անձնագրային տվյալները եւ այլն ¹⁴⁹ :	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	3
լրագրողի հետ ոչ պատշաճ հաղորդակցվելը	1
ՀՀ ոստիկանապետ Վ.Գասպարյանը Ծիծեռնակաբերդում 1in.am-ի լրագրող Սիրանուշ Պապյանի դիտարկմանը, թե՛ մենք չենք տեսնում ձեր բարեփոխումները, ասել է "ես էլ ձեր մեջ կին չեմ տեսնում" ¹⁵⁰ :	
քաղաքացու հետ ոչ պատշաճ հաղորդակցվելը	1
«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի Շտաբի հաղորդագրություն է տարածել, որում ասվում է. «Ապրիլի 24-ին, «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ Գագիկ Եղիազարյանի և ՀՀ ոստիկանության աշխատակիցների, և անձամբ ոստիկանապետ Վովա Գասպարյանի միջև տեղի է ունեցել միջադեպ Ցեղասպանության հուշարձանի տարածքում: Ոստիկանապետը Գագիկ Եղիազարյանի հետ խոսել է ոչ միայն սպառնալիքի լեզվով, այլև բարոյականության սահմաններից դուրս արտահայտություններ է գործածել ¹⁵¹ :	
քաղաքացու և սպանալը	1
Հիմնադիր խորհրդարանը հաղորդագրություն է տարածել, որում նշված է. «Տեղեկություն ենք ստացել, որ Ժիրայր Սեֆիլյանի դեմ շինծու մեղադրական գործի շրջանակներում հետախուզման մեջ գտնվող Արթուր Մովսիսյանի ընտանիքի վրա ոստիկանությունը խիստ ճնշում է գործադրում, որպեսզի Արթուր Մովսիսյանը ինքնակամ հանձնվի: Հորդորում ենք լրատվականներին լուսաբանել իրավիճակը ¹⁵² :	
Առևտրային գաղտնիքի իրավունք	1

¹⁴⁸ Տե՛ս Արմինե Առաքելյանի նկատմամբ հետապնդումները շարունակվում են: Հասանելի է <http://www.aravot.am/2016/11/07/824249/>

¹⁴⁹ Տե՛ս Ինչու էր ոստիկանությունն անձնական տվյալներ հավաքում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/05/12/690397/>

¹⁵⁰ Տե՛ս «Ես քո մեջ կին չեմ տեսնում». ոստիկանապետը՝ Ծիծեռնակաբերդում. a1plus.am: Հասանելի է <http://168.am/2016/04/24/628217.html>

¹⁵¹ Տե՛ս Միջադեպ Ծիծեռնակաբերդում՝ Վլադիմիր Գասպարյանի և «Նոր Հայաստանի» անդամի միջև: Հասանելի է <http://www.1in.am/1899235.html>

¹⁵² Տե՛ս «Արթուր Մովսիսյանի ընտանիքի վրա ոստիկանությունը խիստ ճնշում է գործադրում». ՀԽ: Հասանելի է <http://galatv.am/hy/your-voice/160206/>

անձնական տվյալների գաղտնիության պահպանման պատավորության խախտումը	1
«Տրանս-Սֆեր» ընկերության ղեկավար Հովհաննես Պետրոսյանը պնդում է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը (ՊՊԳՎ) 06.04.2016թ-ին «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի նկատմամբ ձեռք է բերել հարկային գաղտնիք կազմող տեղեկատվություն, եւ իր շահերից էլնելով, օգտագործել է, որպեսզի ընկերությունը որակագրկվի: Նրա ներկայացմամբ ոստիկանությունն «ԱրմենՏելին» գաղտնի՝ հարկային տեղեկատվություն է տրամադրել, որ «Տրանս-Սֆեր» ընկերությունում 100 պահնորդներ մրցույթին մասնակցելու պահին չեն եղել ¹⁵³ :	
Առողջության իրավունք	2
քաղաքացիների առողջությանը վնաս պատճառելը	1
Հուլիսի 20-ի երեկոյան Խորենացի փողոցում կատարված բախումների ժամանակ ոստիկանների կողմից արցունքաբեր գազ օգտագործվեց: Արդյունքում Խորենացի փողոցին կից Ջավարյան փողոցում, բնակիչները առողջական խնդիր են ունեցել: Մասնավորապես Ջավարյան 10 հասցեից «Սուրբ Աստվածամայր» հիվանդանոց էր տեղափոխվել երկու ամսական Ստեփանը: «Բոլորս էլ վատ զգացինք էդ գազի հոտից, աչքներիցս արցունք եկավ, բայց ամենաշատը վախեցնաք նորածնի համար: Ճիշտ է, կարծես երեխան չէր տուժել այդ գազից, սակայն ապահովության համար տեղափոխեցինք հիվանդանոց: Թթվածինն էին ստուգել, ասել էին՝ արյան մեջ թթվածինը մի քիչ պակաս է, դրա համար թթվածին էին տվել, ստուգումներ արել: Անվտանգության համար ողջ գիշեր երեխային պահել էին հիվանդանոցում ու առավոտյան արդեն դուրս գրել: Հիմա արդեն երեխան տանն է, իրեն լավ է զգում», - ասում է Ստեփանի մորաքույրը՝ Սոնա Փայտյանը: Արցունքաբեր գազից նաև առողջական խնդիր էին ունեցել Ջավարյան փողոցում բնակվող Կարինեի ընտանիքի անդամները: «22:00-ից անց էր, երբ թռնիկիս հետ դրսում էինք ու լսեցինք գմբողի ձայներ: Մտածեցի՝ հաստատ սա ոչ թե հրավառության, այլ բաց թողված հրթիռների ձայներ են: Վախեցա, որ հետս գլխներիս մի բան կընկնի ու երեխային վերցրեցի, բարձրացանք վերև: Մի հինգ րոպե էր անցել, աղջիկս երեխաներին ուզում էր լվացացներ, ասեցի՝ ես լավ չեմ. աչքերս մրմռաց, սիրտս խառնեց: Ահավոր վիճակ էր ¹⁵⁴ :	
քաղաքացիների բնակարաններ պայթուցիք առարկաներ զցելը	1
Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում գտնվող Մարի թաղի բնակչուհիներից մեկը Azatutyun.am-ի հետ զրույցում պատմել է, որ հուլիսի 29-ին ոստիկանության կիրառաց լուսաձայնային նոնակներից մեկն իրենց տան վրա է ընկել: Պայթումի հետևանքով վնասվածքներ են ստացել նրա մանկահասակ երեխաները՝ երեքն էլ մինչև 7 տարեկան: Կնոջ խոսքով՝	

¹⁵³ Տե՛ս Ոստիկանությունը «Տրանս-Սֆերի» աշխատակիցներին սպառնում է բաժին տանել, եթե չլքեն «ԱրմենՏելի» «պոստերը» (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/27/708648/>

¹⁵⁴ Տե՛ս Արցունքաբեր գազից առողջական խնդիր էին ունեցել Ջավարյան փողոցի բնակիչները: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69307/arcunqaber-gazic-aroxjaka-khndir-e-in-unecel-zavaryan-poxoci-bnakichnery.html>

երեխաներից 2-ի վիճակը ծանր է, նրանք գտնվում են վերակենդանացման բաժանմունքում ¹⁵⁵ :	
Արդար դատաքննության իրավունք	1
քաղաքացու բնակարան այցելելը	1
Հունիսի 25-ին «Հիմնադիր խորհրդարանի» մամուլի պատասխանատու Վարուժան Ավետիսյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում է թողել, որտեղ նշում է, որ բերման ենթարկելուց բացի ոստիկաններն այցելել են նաև որոշ ակտիվիստների բնակարաններ: Մասին քաղաքում գտնվող Գազիկ Եղիազարյանի տուն են այցելել ոստիկանության ծառայողներ և ծանուցագիր են ներկայացրել Մասիսի ոստիկանության բաժին ներկայանալու համար: Ծանուցագիրը կազմված էր օրենքի խախտմամբ: Ծանուցագրում նշված է, որ անհայտ անձի ներկայացրած ահազանգով հարուցված քրեական գործով են նրան հրավիրում ոստիկանության բաժին ¹⁵⁶ :	
Արտահայտվելու ազատության իրավունք	1
քաղաքացիներին բերման ենթարկելու փորձ	1
Հոկտեմբերի 8-ին աշխարհի 2018 թ. առաջնության ընտրական փուլի Հայաստան-Ռումինիա հանդիպումից առաջ Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտում բախում տեղի ունեացավ ՖԱՖ անդամների և ոստիկանների միջև: Ոստիկանները ցանկանում էին բերման ենթարկել որոշ ֆուտբոլասերների նրանց մոտ եղած պաստառների համար, սակայն իրավիճակը շուտով հարթվեց ¹⁵⁷ :	
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	4
քաղաքացիների բնակարաններ պայթուցիք առարկաներ զցելը	1
Հուլիսի 29-ին ոստիկաններն Սարի թաղի բնակիչների տան մեջ են զցել պայթուցիկ առարկարներ ¹⁵⁸ :	
քաղաքացու բնակարան այցելել և առանց ծանուցագրի	2
Դեպք 1. Հուլիսի 17-ին ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության աշխատակիցներն այցելություններ են կատարել նաև Գյումրիում քաղաքական-հասարակական ակտիվություն ցուցաբերող քաղաքացիների բնակարաններ: Օրինակ՝ Գյումրիի բնակիչ Կարեն Ավագյանի բնակարան են այցելել երկու քաղաքացիական հագուստով ոստիկան և նրան հրավիրել ոստիկանական բաժանմունք: Ավագյանը, ով այդ պահին տանը չի եղել, հրաժարվել է ընդունել հրավերը, պահանջելով ծանուցագիր: Ոստիկանները հեռացել են ¹⁵⁹ :	
Դեպք 2. Հուլիսի 17-ին ոստիկաններն այցելել են Սյուզան Սիմոնյանին և հրավիրել ոստիկանություն: Սակայն նա չի ընդունել հրավերը, ասելով, որ	

¹⁵⁵ Տե՛ս Պայթյուններ Սարի թաղում և Խորենացիում. տուժել են նաև երեխաներ (թաքնացվում է): Հասանելի է <http://www.epress.am/2016/07/30/լարված-վիճակ-սարի-թաղում-և-խորենացիում.html>

¹⁵⁶ Տե՛ս Երևանում առևանգել են նաև մի խումբ ակտիվիստների: Հասանելի է <http://galatv.am/hy/news/154707/>

¹⁵⁷ Տե՛ս Բախում ոստիկանների և հայ երկրպագուների միջև Հայաստան-Ռումինիա խաղի ժամանակ: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/94744>

¹⁵⁸ Տե՛ս Երեխայի արյունոտ սալան, պայթուցիկներ և վնասված տներ. Սարի թաղն այսօր (ֆոտո, վիդեո): Հասանելի է <http://armtimes.com/hy/read/90719>

¹⁵⁹ Տե՛ս Գյումրիում քաղաքացիներ են բերման ենթարկվել: Հասանելի է <http://civilnet.am/2016/07/17/hամարում-իրավիճակը-գյումրիում/#.V4yS6dlkjIU>

միայն բերման ենթարկելու սանկցիայի առկայության դեպքում կարող է բերման ենթարկվել: Ոստիկանները լքել են նրա բնակարանը ¹⁶⁰ :	
քաղաքացու բնակարան ներխուժելու փորձ	1
Հունիսի 30-ին ոստիկաններն առանց դատական սանկցիայի ներխուժել են «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Կարո Եղնուկյանի բնակարան, որպեսզի բերման ենթարկեն նրա կնոջը՝ Ռուզաննա Եղնուկյանին: Ռուզաննան այդ պահին գտնվում էր Գևորգ Սաֆարյանի դատավարությանը: Ոստիկաններից առաջին անգամ եկավ մեկ հոգի, նրան ճանապարհեցի, ասացի, որ Ռուզաննան տանը չի: Մեկ ժամից դարձյալ վերադարձան ոստիկաններն՝ արդեն 3 հոգով: Ես թույլ չեի տալիս ներս մտնեն, քանի որ նման իրավունք չունեն, սակայն նրանցից մեկը կիսով չափ ներս մտավ, իսկ մյուս երկուսը հետևից հրում էին նրան: Տղաս հասավ օգնության և բավականին դժվարությամբ դուրս մղեցինք նրանց»: Եղնուկյանը պատմեց, որ ոստիկանները փորձում էին դուռը ջարդելով ներս խուժել, իսկ տանն այդ պահին իր հետ դուստրերն ու որդին են եղել: Վերջիններս էլ օգնել են իրեն դուռը պահել, որպեսզի ոստիկանները ներս չմտնեն, - պատմել է Կ. Եղնուկյանը ¹⁶¹ :	
Ընտրական իրավունք	2
ընտրողներին ուղղորդելը	1
Բագրատաշենի նախկին գյուղապետ, Այրում խոշորացված համայնքի ղեկավարի թեկնածու Արկադի Մակյանի խոսքով՝ Մեպտեմբերի 18-ի առավոտյան՝ ժամը 8-ից մինչև ժամը 11-ը, Բագրատաշենի ոստիկանակապետ Կարեն Անտոնյանը իր ավտոմեքենայով կանգնել է Բագրատաշենի թիվ 40/7 ընտրատեղամասի առաջ, ընտրության գնացող մարդկանց կանչել և ուղղորդել՝ Արայիկ Պարանյանին ընտրելու համար ¹⁶² :	
պարտականությունները չկատարելը	1
Արարատ Նյուզ կայքի լրագրող Շողիկ Գալստյանը ասել է, որ Վանաձորի 30/47 ընտրատեղամասում հոկտեմբերի 2-ին իր հեռախոսը կոտրած կինը մշտապես կոնտակտի մեջ է եղել ընտրատեղամասի ՀՀԿ վստահված անձ Ռոման Ավագյանի հետ: Այդ կինը, լրագրողի պատմելով, առավոտվանից եղել է ընտրատեղամասի մոտ, անընդհատ կոնտակտի մեջ եղել ընտրողների հետ, նրանց հետ վիճաբանել, ուղղորդել նրանց: Դա անում էր ՀՀԿ վստահված անձի հետ միասին: Տարածքում հսկողություն իրականացնող ոստիկանները, սակայն, չեն միջամտել, չնայած լրագրողների հորդորին ¹⁶³ :	
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	7
բերման ենթարկված անձանց իրավաբանական օգնություն ստանալու	7

¹⁶⁰ Տե՛ս Այուզան Սիմոնյանը մերժել է ոստիկանության հրավերը: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716076/>

¹⁶¹ Տե՛ս Ոստիկանները հրաման էին ստացել՝ դուռը կոտրելով՝ մեզ բերման ենթարկել. Կարո Եղնուկյան: Հասանելի է <http://armilur.am/549452/>

¹⁶² Տե՛ս Ոստիկանակապետը ուղղորդել է ընտրողներին. հաղորդում է Այրումի քաղաքապետի թեկնածուն (լրացված): Հասանելի է <http://hetq.am/arm/news/70856/ostikanapety-uxxor-del-e-yntroxner-in-haxordum-e-ayrumi-qaxaqapeti-teknatsun-lracvats.html>

¹⁶³ Տե՛ս Միջադեպ Վանաձորում, ոստիկանների հայացքի տակ: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/country/view/140237>

Իրավունքից զրկելը	
Դեպք 1. Հունվարի 3-ին բերման ենթարկված «Նոր Հայաստանի» անդամ Ժորժիկ Իսայանին և «Նոր Հայաստանի» և «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Աշոտ Պետրոսյանին թույլ չեն տվել օգտվել զանգելու հնարավորությունից ¹⁶⁴ :	
Դեպք 2. Փետրվարի 24-ին Բաղրամյան 26-ից ոստիկանություն տարված ակտիվիստների փաստաբանները պնդում են՝ իրավապահները մոտ մեկ ժամ շարունակ թույլ չեն տվել տեսակցել պաշտպանյալներին ¹⁶⁵ :	
Դեպք 3. Փետրվարի 26-ին դատարանում Գասպարիին բերման ենթարկած ոստիկանները նրան թույլ չէի տալիս շփվել իր պաշտպան Տիգրան Եզրյանի հետ ¹⁶⁶ :	
Դեպք 4. Հունիսի 20-ին Ժիրայր Մեֆիլյանի տանը խուզարկության ընթացքում այնտեղ էր ժամանել փաստաբան Տիգրան Հայրապետյանը, որին փաստաբանին ոստիկանները թույլ չեն տվել մտնել բնակարան ¹⁶⁷ :	
Դեպք 5. Հուլիսի 17-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբաններ, փաստաբաններ Արայիկ Զայանը և Անի Չատիկյանը այցելել են ոստիկանության բաժին՝ բերման ենթարկված Հիմնադիր խորհրդարանի անդամներ Հովհաննես Ղազարյանին և Հասմիկ Էվոյանին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով: Ավելի քան մեկ ժամ փաստաբանները փորձում էին մուտք գործել ոստիկանության Բազումի բաժին, սակայն նրանց թույլ չեն տվել ¹⁶⁸ :	
Դեպք 6. Հուլիսի 17-ին փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արա Կարազյոզյանը «Հետքին» հայտնել է, որ քաղաքացի Վաղինակ Շուշանյանի ահազանգով եկել է ոստիկանական զորքերի վարչական շենքի մոտ: Փաստաբանի խոսքով, իրենց մուտքը խոչընդոտում են և ընդհանրապես չեն պատճառաբանում, թե ինչի թույլ չեն տալիս մուտք գործել և տեսակցել բերման ենթարկվածներին, ինչը փաստաբանը որակում է որպես հանցագործություն ¹⁶⁹ :	
Դեպք 7. Հուլիսի 26-ին երկու փաստաբան արձագանքել են «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխված՝ զինված խմբի վիրավոր անդամ Աշոտ Պետրոսյանի դատեր խնդրանքին:	

¹⁶⁴ Տե՛ս Բերման են ենթարկվել «Նոր Հայաստանի» 2 անդամ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/03/644676/>

¹⁶⁵ Տե՛ս Բաղրամյան 26-ից բերման ենթարկվածների փաստաբանները պնդում են՝ իրենց խոչընդոտել են: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27573845.html>

¹⁶⁶ Տե՛ս Վարդգես Գասպարիին բերման են ենթարկել դատարան (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/02/26/661770/>

¹⁶⁷ Տե՛ս Փաստաբան Տիգրան Հայրապետյանին ոստիկանները թույլ չեն տալիս մտնել Մեֆիլյանի բնակարան: Հասանելի է <http://www.1in.am/1945165.html>

¹⁶⁸ Տե՛ս ՀՄ անդամներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով ոստիկանության բաժին այցելած փաստաբաններին թույլ չեն տալիս մուտք գործել բաժին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716131/>

¹⁶⁹ Տե՛ս Փաստաբանին թույլ չեն տալիս մուտք գործել ոստիկանության զորքերի շենք: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69214/pastabanin-tuy-l-chen-talis-mutq-gortsel-ost-ikanutyun-zorqeri-shenq.html>

Տաթև Պետրոսյանը խնդրել էր օգնել իրեն փաստաբան գտնել: Փաստաբաններ Արայիկ Պապիկյանն ու Հայարիի Սարգսյանն արդեն հիվանդանոցում են, նրանք փորձում են տեսակցել վիրավորներին, սակայն ոստիկանները թույլ չեն տալ իս ¹⁷⁰ :	
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	3
քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի խոչընդոտելը	1
Իրավապաշտպան Արթուր Սաքունցն ահագանգում է, որ ոստիկանության աշխատակիցներն ու քննչական մարմիններն այս օրերին աշխատանք են տանում, որպեսզի վերջին շրջանում տեղի ունեցած գործողությունների հետևանքով տուժած քաղաքացիները բողոքներ չներկայացնեն: Իրավապաշտպանի խոսքով՝ մի դեպքում տուժել են ոստիկանության կողմից ապօրինի բերման ենթարկվելու, բռնությունների հետևանքով, հիմա էլ տուժում են այս ապօրինի գործողությունների պատճառով, երբ թույլ չեն տալ իս, որ մարդիկ վերականգնեն իրենց խախտված իրավունքները ¹⁷¹ :	
քաղաքացու սեփականության իրավունքի խախտումը	1
ՀՀ հատուկ քննչական ծառայությունը տեղեկացնում է, որ Սյունիքի մարզի Կապան քաղաքի բնակիչ Ալիդա Ղ.-ն հայտնել է ՀՀ ոստիկանության պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական լիազորություններն անցնելու վերաբերյալ տվյալներ: Մասնավորապես՝ Ալիդա Ղ.-ն հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, երբ գտնվել է աշխատանքի վայրում, իրեն է գանգահարել դուստրը՝ Մարի Հ.-ն, և հայտնել, որ իրենց տան պատուհանը բաց է, իսկ տան իրերը՝ ամբողջությամբ խառնված: Ինքը գանգահարել է ՀՀ ոստիկանություն և հաղորդել կատարվածի մասին: Դեպքից քիչ անց ինքը գնացել է տուն և նկատել, որ տնից բացակայում են ոսկյա և արծաթյա զարդեր, կանխիկ գումար: Ահագանգով իրենց տուն եկած ոստիկանության աշխատակիցները խոստացել են գտնել գողություն կատարած անձանց և խնդրել են իրեն հանցագործության մասին հաղորդում տալու փոխարեն, արձանագրության մեջ նշել, թե, իբր, տան խառնաշփոթ վիճակն առաջացրել է դուստրը, ինչն էլ ինքը կատարել է, մինչդեռ ոստիկանության աշխատակիցները, չարաշահելով իրենց լիազորությունները, դեպքին օրինական ընթացք չեն տվել ¹⁷² :	
քաղաքացու նշ պատշաճ իրավական օգնություն տրամադրելը	1
«ՎԻՍԼԱ» ՄՊԸ-ի տնօրենն ահագանգել էր ոստիկանություն հայտնելու իր խանութից գողության փաստի մասին, բայց ինչպես ինքն է նշում՝ ոստիկանությունը «թև ու թիկունք» է լինում գողություն կատարողին անուղղակի ձևով, իսկ խանութի աշխատանքային գործընթացն էլ	

¹⁷⁰ Տե՛ս Ոստիկանները թույլ չեն տալ իս փաստաբաններին ու հարազատներին Տե՛ս ակցել վիրավորներին: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27880924.html>

¹⁷¹ Տե՛ս Ոստիկանությունը տուժած քաղաքացիներին համոզում է բողոք չգրել. Մաքունց: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/137360>

¹⁷² Տե՛ս Ըստ հաղորդման՝ ոստիկանները թաքցրել են գողության դեպքը. հարուցվել է քրեական գործ: Հասանելի է <http://galatv.am/hy/news/169806/>

կաթվածահար են անում: Նա դժգոհում է ոստիկանների անգործությունից և որ իրենք խոչընդոտում էին խանութի բնականոն աշխատանքը նստելով վաճառասրահի մեջտեղը ¹⁷³ :	
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	1
լրագրողների աշխատանքի խոչընդոտելը	1
Հուլիսի 20-ին Hraparak.am կայքի լրագրողներին թույլ չեն տվել նկարահանումներ իրականացնել Խորենացի փողոցում: Պարզվեց «այստեղ հատուկ տեխնիկա կա»: Իսկ թե ինչու չի կարելի նկարահանել այդ «հատուկ տեխնիկան», որը դեաքերի առաջին իսկ օրվանից նկարահանում ենք, ոստիկաններն այդպես էլ չկարողացան համոզիչ հիմնավորում ներկայացնել: Ամեն դեպքում, էլի լավ էր, ուժ չկիրառեցին, հակառակը՝ նրանցից մեկը նույնիսկ քաղաքավարի մոտեցավ, հարգալից տոնով հարցրեց ինչպես կարող է դիմել մեզ, ապա խնդրեց այս տարածքից նկարահանում չիրականացնել ¹⁷⁴ :	
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	2
քաղաքացու և ահաբեկելը և հետապնդելը	1
Հուլիսի 18-ին Ծիրակի մարզի Անիի տարածաշրջանի ոստիկանապետ Է. Հովհաննիսյանը, ով առավել հայտնի է Շոթա անվամբ, զանգահարել է Մնացական Ալեքսանյանին և հորդորել՝ որևէ ցույցի չմասնակցել, հասարակական ակտիվություն չցուցաբերել: Այնուհետև զանգահարել է Մնացականի հորը և ասել՝ եթե մեկ ժամվա ընթացում, առավելագույնը մինչ օրվա ավարտը, Մնացականը Երևանը չլքի մոր հետ, հատուկ ջոկատայինները գալու են և Մնացականին, մոր հետ Երևանից դուրս տանեն ¹⁷⁵ :	
քաղաքացու և սպառնալը	1
Խորենացի փողոցում տեղի ունեցող իրադարձություններին Տաթևն ու ընտանիքի անդամները չեն կարողանում մասնակցել, քանի որ նկատել են իրենց հետապնդում են: Տաթևը որքան էլ մեծ ցանկություն ունի միանալ հավաքվածներին, Բայց և խուսափում է, քանի որ համոզված է՝ ցանկացած գործողության կարող են դիմել՝ իրենց բերման ենթարկելու նպատակով: Մակայն ընդգծում է՝ եթե նկատենք ժամանակն է, մենք առաջին շարքում ենք լինելու: «Մեզ ահաբեկում էին, նկատում էինք, որ նույն մեքենաները, մարդիկ հետապնդում էին: Եղբորս՝ քաղբանտարկյալ Լիպարիտ Պետրոսյանի որդուն, օրեր առաջ տատիկի տնից բերման են ենթարկել ԱԱԾ՝ ասելով, որ	

¹⁷³ Տե՛ս Երկու անգամ նույն մարդը խանութից գողություն է արել, իսկ ոստիկանությունը բավարար քայլեր չի ձեռնարկում: Հասանելի է

<http://hraparak.am/?p=110567&l=am/erku+angam+nuyn+mardy+xanutic+goxutyun+e+arel+iskvostikanutyuny+bavarar+qalyer+chi+dzernarkum+>

¹⁷⁴ Տե՛ս Մարի թաղում մարդիկ շրջափակման մեջ են, լրագրողներն էլ՝ անցանկալի «հյուր» ոստիկանների համար (ֆոտո, վիդեո): Հասանելի է

<http://hraparak.am/?p=117982&l=am/sari+taxum+mardik+shrjapakman+mej+en+lragroxnern+el+anckali+hyurvostikane+ri+hamar+foto+video+>

¹⁷⁵ Տե՛ս Մարալիկի ոստիկանապետը սպառնացել է Մնացական Ալեքսանյանին: Հասանելի է

<http://hetq.am/arm/news/69234/maraliki-ostikanapety-sparnacel-e-mnacakan-a-leqsanyanin.html>

իրենք ամեն ինչ գիտեն, «հեռու մնացեք էս ամեն ինչից», «մենք ձեր հեռախոսազանգերը լսում, հետևում ենք»: Մոտ չորս օր առաջ էլ ոստիկաններն էին եկել մեր բնակարան, ցանկանում էին հանդիպել, ասում էին՝ խոսելու բան ու առաջարկ ունենք, բայց թույլ չտվեցի, որ մտնեն բնակարան, քանի որ ծանուցագիր չունեին: Ասացի՝ որևէ բանի հետ համաձայն չեմ և առաջարկներ էլ չեմ ընդունում: Օրեր առաջ էլ փողոցում անծանոթ մարդիկ են մոտեցել հորեղբորս կնոջը, ասելով՝ մենք ձեր հեռախոսազանգերը լսում ենք, գիտենք՝ ձեր աղջիկները որտեղ են», - նշում է Տաթևը ¹⁷⁶ :	
Տեղեկատվություն ստանալու իրավունք	4
լրագրողի գործունեությունը խոչընդոտելը	1
Փետրվարի 24-ին դատարանի որոշմամբ, ակտիվիստ Վարդգես Գասպարին տեղափոխվել է «Նորք» հոգեբուժարան՝ դատահոգեբանական փորձաքննության: «Ազատության»-ը հաջողվեց հոգեբուժարանում հանդիպել Գասպարիին: Նա միայն մեկ նախադասություն հասցրեց ասել. - «Ես լավ չեմ»: Ոստիկանները այլևս չթույլատրեցին գրուցել նրա հետ ¹⁷⁷ :	
լրագրողի հարցերն արհամարհելը	1
Հուլիսի 17-ին Հիմնադիր խորհրդարանը հայտարարել է, որ գինված ապստամբություն է կազմակերպել, որի ընթացքում Էրեբունի վարչական շրջանում ոստիկանական բազա են գրավել, պատանդ են վերցրել ոստիկաններ գեներալ Եղիազարյանին և գնդապետ Օսիպյանին: Aravot.am-ը փորձել է ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Սամվել Հովհաննիսյանից տեղեկանալ իրավիճակի մասին, սակայն պարոն Ս.Հովհաննիսյանը հարցերին չի պատասխանել ¹⁷⁸ :	
տեղեկատվություն չտրամադրելը	2
Դեպք 1. Հուլիսի 17-ին Aravot.am-ին Ոստիկանության լրատվական ծառայությունից որևէ տեղեկատվություն չտրամադրեցին, թե ինչ հիմքով են բերման ենթարկում Շահեն Հարությունյանին եւ այլ քաղաքացիներին. «Կճշտենք, եւ ավելի ուշ կասենք» ¹⁷⁹ :	
Դեպք 2. Ազատությունը տեղեկացնում է, որ Ոստիկանությունից հրաժարվել է մանրամասնել, թե հուլիսի 17-ին քանի ընդդիմադիր է բերման ենթարկվել և ինչու՝ սահմանափակվելով միայն «հետևեք պաշտոնական լրահոսին» նախադասությամբ ¹⁸⁰ :	
Տիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	22
քաղաքացու նկատմամբ բռնություն կիրառելը	21
Դեպք 1. Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու	

¹⁷⁶ Տե՛ս «Սասնա ծռեր» խմբի անդամ Աշոտ Պետրոսյանի ընտանիքի անդամներին ահաբեկում են: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69465/sasna-tsrer-khmbi-andam-ashot-petro-syani-yntanigi-andamner-in-ahabekum-en.html>

¹⁷⁷ Տե՛ս Վարդգես Գասպարին տեղափոխվել է հոգեբուժարան՝ փորձաքննության: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27571044.html>

¹⁷⁸ Տե՛ս Փոխոստիկանապետ Սամվել Հովհաննիսյանը Aravot.am-ին ոչինչ չասաց Հատուկ նշանակության գնդի շուրջ օպերատիվ իրավիճակի մասին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716177/>

¹⁷⁹ Տե՛ս Շահեն Հարությունյանին ոստիկանական բաժին են տանում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716172/>

¹⁸⁰ Տե՛ս Ազատության հրապարակից բերման ենթարկվեցին մի շարք ընդդիմադիրներ: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27863637.html>

<p>և խուլիզանություն կատարելու մեջ մեղադրվող, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորը հայտնել է փետրվարի 16-ին ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից առերևույթ բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ տվյալներ¹⁸¹:</p>	
<p>Դեպք 2. Մարտի 23-ին քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի հունվարի 27-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների կողմից հրավիրվել է հիշյալ բաժին, որտեղ ոստիկանության ծառայողներն իրեն ծեծի են ենթարկել: Այնուհետև նույն բաժնի օպերվիզորն իրեն սպառնացել է, որ եթե չընդունի մանկահասակ բնակիչներին բռնաբարելու և նրանց հետ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու հանգամանքը, իրեն կրկին ծեծի կենթարկեն: Ինքը վախեցել է, որ կշարունակվեն իր նկատմամբ կիրառվող բռնությունները և խոստովանել է իրականում իր կողմից չկատարված հանցագործությունները¹⁸²:</p>	
<p>Դեպք 3. Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ մեղադրվող քաղաքացին հայտնել է, որ ընկերների հետ գտնվել է Հրազդան քաղաքի դպրոցի ճաշարանում, երբ իրենց է մոտեցել դպրոցում ծառայություն իրականացնող ոստիկանը, վիրավորել է իրենց, ինչի պատճառով ինքը հարվածել է վերջինիս: Այնուհետև ոստիկանը փորձել է հարվածել իրեն, սակայն ձեռքով կարողացել է հարվածը պահել, ինչի արդյունքում վնասվել է ձեռքը: Բացի այդ, ինքը տեսնելով, որ ոստիկանը ցանկանում է կրկին փորձել իր նկատմամբ բռնություն կիրառել, բռունցքով հարվածներ է հասցրել վերջինիս ու հեռացել: Քիչ անց ինքը վերադարձել է, կատարվածի համար ներողություն խնդրել ոստիկանից, սակայն վերջինս բարկացած՝ ոտքով հարվածել է իրեն¹⁸³:</p>	
<p>Դեպք 4. Քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի մարտի 4-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայողը վարչական պատասխանատվության ենթարկելու հիմնավորվածության հարցի պարզաբանման ընթացքում բռնություն է կիրառել իր նկատմամբ՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել մարմնի տարբեր մասերին և պատճառել մարմնական վնասվածքներ¹⁸⁴:</p>	
<p>Դեպք 5. Քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի փետրվարի 19-ին Երևան քաղաքի Գարեգին Նժդեհի հրապարակում ծառայություն իրականացնող երկու ոստիկան իր նկատմամբ գործադրել են</p>	

¹⁸¹ Տե՛ս Կալանավորը հայտնել է իր նկատմամբ կիրառված բռնությունների մասին. հարուցվել է քրեական գործ: Հասանելի է <http://www.ccc.am/hy/1428493746/3/5158>

¹⁸² Տե՛ս Անչափահաս մեղադրյալը հայտնել է ոստիկանության բաժնում իր նկատմամբ կիրառված խոշտանգման մասին. հարուցվել է քրեական գործ: Հասանելի է <http://www.ccc.am/hy/1428493746/3/5165>

¹⁸³ Տե՛ս Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ քրեական գործն ընդունվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/04/08/677273/>

¹⁸⁴ Տե՛ս Ըստ հաղորդման՝ ճանապարհային ոստիկանը բռնության գործադրմամբ զուգորդված անցել է լիազորությունները: Հասանելի է <http://www.aravot.am/2016/04/19/681906/>

<p>բնություն՝ ոստիկաններից մեկը քաշքշել է իրեն, հարվածել, իսկ մյուս ոստիկանը՝ ոտքով հարվածներ է հասցրել՝ զցելով գետնին¹⁸⁵:</p>	
<p>Դեպք 6. Քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի մարտի 11-ին ժամը 18:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Բագրատուկաց պողոտայում գտնվող սուպերմարկետի աշխատակցուհու հետ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողներն իր նկատմամբ բնությունն գործադրելով բերման են ենթարկել հիշյալ բաժին, որտեղ շարունակել են ոտքերով և բռնցքներով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ¹⁸⁶:</p>	
<p>Դեպք 7. Քաղաքացիները հաղորդումներ են տվել այն մասին, որ 2016 թվականի ապրիլի 16-ին՝ ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժնի աշխատակիցներն իրենց բերման են ենթարկել հիշյալ բաժին, որտեղ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ՝ խմբով բնությունն են գործադրել իրենց նկատմամբ ու դիտավորությամբ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ուժեղ ցավ, պահանջել են խոստովանել իրենց կողմից իրականում չկատարված բնակարանի գողության դեպքը¹⁸⁷:</p>	
<p>Դեպք 8. «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կալանավորը հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի փետրվարի 7-ին ինքը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին, որտեղ նույն բաժնի մի շարք ծառայողներ և Շիրակի մարզային վարչության ծառայողն բնությունն են կիրառել իր նկատմամբ, որպեսզի խոստովանի իրականում իր կողմից չկատարված հանցագործությունը¹⁸⁸:</p>	
<p>Դեպք 9. Փետրվարի 7-ին Գյումրու «Կումայրի» ոստիկանության բաժնի աշխատակիցները, ընդհուպ ոստիկանապետը՝ ճնշում գործադրելով գյումրեցի 28-ամյա երիտասարդ Կարեն Կարապետյանի նկատմամբ՝ ստիպել են իր վրա վերցնել իր կողմի չկատարված հանցագործության մեղքը,- առև է երիտասարդի փաստաբան Հայկ Հարությունյանը¹⁸⁹:</p>	
<p>Դեպք 10. Քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ մայիսի 19-ին իրեն հրավիրել են ոստիկանության Կումայրիի բաժին, այնտեղ տնական ժամանակ պահվել է, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները խոստովանական ցուցմունքներ ստանալու նպատակով բնությունն են կիրառել իր նկատմամբ¹⁹⁰:</p>	
<p>Դեպք 11. Քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ հունիսի 2-ին Գյումրի քաղաքում իր և ոստիկանության ծառայողների միջև կենցաղային հարցի շուրջ վիճաբանություն է ծագել, որի ընթացքում ոստիկանության</p>	

¹⁸⁵ Տե՛ս Քրեական դատավարության մասնակիցը հայտնել է իր նկատմամբ կիրառված բնությունների մասին: Հասանելի է <http://galatv.am/hy/news/146597/>

¹⁸⁶ Տե՛ս Շենգավիթի բաժնի ոստիկանները ծեծի՞ են ենթարկել քաղաքացուն: Հասանելի է <http://arm.lur.am/519194/>

¹⁸⁷ Տե՛ս Կատարվում է քննություն՝ պարզելու քաղաքացիներին խոշտանգելու վերաբերյալ տվյալները: Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/07/701286/>

¹⁸⁸ Տե՛ս Կատարվում է քննություն՝ խոշտանգման վերաբերյալ կալանավորի հաղորդման մեջ մատնանշված հանգամանքները պարզելու համար: Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/09/702136/>

¹⁸⁹ Տե՛ս Գյումրիում ոստիկանները ցուցմունք են կորզել սպառնալիքով: Հասանելի է <http://hraparak.am/?p=113992&l=am+gyumriumvostika+neri+cucmunq+en+korze+sparnaligov>

¹⁹⁰ Տե՛ս Ըստ հաղորդման՝ բնությունն են կիրառել խոստովանական ցուցմունքներ ստանալու նպատակով. ստուգվում են հանգամանքները: Հասանելի է <http://galatv.am/hy/news/156051/>

<p>ծառայողներն իրեն նստիկանության Մուշի բաժին բերման ենթարկելու ճանապարհին, ինչպես նաև նստիկանության հիշյալ բաժնում բռնություն են կիրառել իր նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ¹⁹¹:</p>	
<p>Դեպք 12. Հուլիսի 17-ին Խորենացի փողոցից՝ նստիկանները ՊՊԾ գնդի նստիկանական պատնեշի մոտից ուժով հեռացրել են մի կնոջ¹⁹²:</p>	
<p>Դեպք 13. Հուլիսի 20-ին ցուցարարների և նստիկանների բախումից մարմնական լուրջ վնասվածքներով Էրեբունի բժշկական կենտրոն էր տեղափոխվել Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանը: Նրա խոսքերով, նա Խորենացի փողոցում հանդիպում ուներ նշանակված, սակայն նստիկանների կողմից գցված պայթուցիկներից մեկը իր մոտ պայթել է, որից վերնաշապիկը սկսել է այրվել, ծակծկվել: 7-10 հոգի՝ նստիկանական հագուստով, մահակներով ներխուժեցին այդ տարածք: Տեսան մեն մենակ կանգնած, ձեռքիս անգամ թերթ չկար, առանց որևէ խոսք ասելու՝ հարձակվեցին: Եվ առաջին հարվածը նստիկանը մահակով ճակատիս խփեց և անմիջապես հոնքիս վերևի հատվածից մեծ բացվածք ստացալ,- պատմում էր պարոն Շահվերդյանը՝ ավելացնելով, որ նստիկաններից մեկն էլ բռնել է իր ձեռքերը, ոլորել ու սկսել են ոտքերով և մահակներով հարվածել: «Այդ ամենը շատ կարճ տևեց՝ մեկը ասաց, որ լրագրողներ են գալիս և ինչպես հանկարծակի հայտնվել էին, այդպես էլ՝ հեռացան, միայն հասցրել եմ այդ ջահել նստիկաններին ասել՝ չէ՞ք ամաչում ես ձեր հոր տարիքի մարդ եմ՝ անիմաստ բռնել ձեռքում եք որ ի՞նչ: Ոնց որ փողոցային խուլիգաններ հայտնվեն, մեկին ծեծեն ու փախչեն», - նշեց Մովսես Շահվերդյանը: Նրա խոսքերով՝ ճակատի վրա բավական մեծ բացվածք ունի, քթի վերևի ոսկորի հատվածում կտրվածք և պատռվածք, երկու հատվածից կարել են, կողոսկրերի պատռվածք և ամբողջ մարմինը՝ սալջարդ¹⁹³:</p>	
<p>Դեպք 14. Հուլիսի 21-ին նստիկանները կտրել են կինոռեժիսոր Արամ Շահբազյանի թևը: Նրա ասելով՝ գնացել է դեպի Էրեբունի նստիկանության շենք, որի դիմաց գտնվում էր ընկերը: Սասունցի Դավիթ-Ջերթինսկի փողոցների խաչմերուկի մոտ նստիկաններին հարցրել է՝ կարո՞ղ եմ գնալ ընկերոջս մոտ: Այդ պահին քաղաքացիական հագուստով մեկի հրահանգով նստիկանները մոտեցել են ու գետնին գլորել Արամ Շահբազյանին¹⁹⁴:</p>	
<p>Դեպք 15. Հուլիսի 28-ին «Մասնա ծոեր» խմբի անդամ Արամ Հակոբյանին և Գագիկ Եղիազարյանի պաշտպան Լուսինե Հակոբյանը ահազանգել է, որ Արամ Հակոբյանն և Գագիկ Եղիազարյանը վնասվածքներ ունեն: Արամ Հակոբյանի մոտ առկա էր քթի կարմրություն, ուռածություն, ճակատին և</p>	

¹⁹¹ Տե՛ս Մեղադրյալն ահանգանգել է, որ նստիկաններն իրեն բերման ենթարկելիս ծեծի են ենթարկել: Հասանելի է <http://news.am/arm/news/336650.html>

¹⁹² Տե՛ս Ոստիկանները պատնեշի մոտից հեռացրեցին մի կնոջ (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89783>

¹⁹³ Տե՛ս Մովսես Շահվերդյանը՝ իրեն ծեծելու մասին. «Ոնց որ փողոցային խուլիգաններ հայտնվեն, մեկին ծեծեն ու փախչեն»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/25/719713/>

¹⁹⁴ Տե՛ս Ոստիկանները կտրել են կինոռեժիսոր Արամ Շահբազյանի թևը: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69341/ostikannery-kotrel-en-kinorezhisor-aram-shahbazyan-tevy.html>; և Կինոռեժիսորը՝ նստիկանների կողմից ծեծվելու մասին. «Տվին, ջարդեցին, մեկն էլ ասեց՝ ս... եղի»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/22/718651/>

<p>արմունկներին քերծվածքներ, ցավեր ունի մեջքի շրջանում: Իսկ Գագիկ Եղիազարյանը պարանոցի շրջանում քերծվածքներ ունի: Հասմիկ Մահակյանը տեղեկացրել է նաև, որ Պավել Մանուկյանին և իր որդուն վիրավորել էին, ինքը պատգարակով գնացել էր և վիրավորներին տեղափոխում էր ՊՊԾ տարածքից դուրս, որպեսզի նրանց տեղափոխեն հիվանդանոց: Այդ ընթացքում նա անգ են է եղել: Տեղափոխելու ընթացքում 7 ոստիկաններ հարձակվել են իր վրա, ՊՊԾ-ի տարածքում 7 հոգով ծեծել են: Ապա նրան նստացրել են ավտոմեքենան, Խորենացու փողոցից մինչև Նալբանդյան՝ ԱԱԾ շենքի երրորդ հարկ բարձրացնելն անգամ իրեն ծեծել են»¹⁹⁵:</p>	
<p>Դեպք 16. Գայանե Նասոյանն ու նրա դուստրը հուլիսի 29-ին բռնության են ենթարկվել ոստիկանների կողմից Խորենացի փողոցի հարակից տարածքով անցնելիս: Կառավարության շենքի մոտ տիկին Գայանեն՝ վստահեցնում էր՝ ոստիկանները հարձակվել և ծեծել են իր դստերը՝ Մոնիկային, ինչից հետո գրեթե ամեն օր իրենց տուն շտապ օգնություն է գնում¹⁹⁶:</p>	
<p>Դեպք 17. Օգոստոսի 24-ին ArmLur.am-ի խմբագրություն է դիմել Սերոբ Դադունցը, ում խոսքով՝ ինքը տուն գնալու ճանապարհին բռնության է ենթարկվել ՊՊԾ գնդի հարակից տարածքում: Դեպքին ներկա են եղել ոստիկանական համազգեստով երկու անձ, իսկ բուն ծեծողը, պարզվել է, եղել է հատուկ նշանակության ջոկատի ծառայող¹⁹⁷:</p>	
<p>Դեպք 18. Հատուկ քննչական ծառայությունը տեղեկացնում է, որ քրեական գործով կասկածյալ Քրիստինե Մ.-ն հայտնել է պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու վերաբերյալ տվյալներ: Մասնավորապես՝ ձեռքակալված անձանց պահման վայրից իրազեկում է ստացվել այն մասին, որ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու կասկածանքով ձեռքակալված Քրիստինե Մ.-ի մարմնի գնումըստից հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ: Այդ կապակցությամբ Քրիստինե Մ.-ն հայտնել է, որ 2016 թվականի օգոստոսի 24-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչը, ոստիկանության երկու աշխատակիցների հետ, բռնություն են կիրառել իր նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ¹⁹⁸:</p>	

¹⁹⁵ Տե՛ս Ոստիկաններին հանձնված «Սասնա ծռերի» խմբի անդամները վնասվածքներ ունեն: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/28/721109/>; և Ես ինքնակամ չեմ հանձնվել, 7 ոստիկան հարձակվել են, ծեծել. «Սասնա ծռեր» խմբի անդամ: Հասանելի է <http://newsbook.am/?p=87516/es+inqnakam+chem+handz+nvel+7vostikan+hardzakvel+en+cecel+sasna+crer+xmbi+andam&l=am>

¹⁹⁶ Տե՛ս Ոստիկանական բռնությունից հետո ամեն օր շտապօգնություն են կանչում (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.a1plus.am/1480148.html>

¹⁹⁷ Տե՛ս ՊՊԾ գնդի հարակից տարածքում «սպեցնազի»-ի աշխատակից հանդես եկած անձը քաղաքացուն ծեծի է ենթարկել (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://armLur.am/572249/>

¹⁹⁸ Տե՛ս Քրեական գործով կասկածյալը հայտնել է իրա վապահների կողմից իր նկատմամբ բռնություն գործադրելու մասին. հարուցվել է քրեական գործ: Հասանելի է <http://hetq.am/arm/news/70918/qreakan-gortsov-kaskatsyal-yhaytnel-e-iravapahner-i-koxmic-ir-nkatmamb-brnutyun-gortsadrelu-masin-harucvel-e-qreaka-n-gorts.html>

<p>Դեպք 19. Նոյեմբերի 8-ին Գարիկ Ա.-ն հայտնել է, որ ճանապարհային ոստիկանության աշխատակիցներն իրեն ստիպողաբար ծառայողական ավտոմեքենան նստեցնելիս ոստիկաններից մեկը բռնություն է կիրառել իր նկատմամբ, որը շարունակվել է նաև ոստիկանական մեքենայի մեջ, ինչի հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ: Բացի այդ, Գարիկ Ա.-ի կինը ևս հաղորդում է ներկայացրել այն մասին, որ դեպքի ժամանակ իրենց ավտոմեքենան կանգնեցնելուց հետո, ինքը փորձել է միջամտել ամուսնու և ոստիկանի միջև ծագած վիճաբանությանը, սակայն ոստիկաններից մեկը իր նկատմամբ ևս բռնություն է կիրառել, ինչի արդյունքում ստացել է մարմնական վնասվածքներ¹⁹⁹:</p>	
<p>Դեպք 20. Գագիկ Գ.-ն, հայտնել է, որ 2016թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 16:50-ի սահմաններում, ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողները վիճաբանել են իր հետ, որի ժամանակ անհամաչափ ուժ են կիրառել իր նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածքներ²⁰⁰:</p>	
<p>Դեպք 21. Քաղաքացի Ազնիվ Ս.-ն ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի աշխատակիցներն այցելել են իր բնակարան և հայտնել, որ Արարատի և Վայոց ձորի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քրեական գործով որոշում է կայացվել իրեն բերման ենթարկելու մասին, ապա առաջարկել են իրենց ուղեկցությամբ ներկայանալ դատարան: Երբ հրաժարվել է դատարան ներկայանալուց, ոստիկանության հիշյալ բաժնի ծառայողները, անցնելով իրենց պաշտոնական լիազորությունների սահմանները, բռնություն են կիրառել իր նկատմամբ²⁰¹:</p>	
<p>քաղաքացու և բերման ենթարկելը</p>	1
<p>Արև Մելքոնյանը յոթ ժամից ավելի լուր չունեի ընկերոջից՝ Մնացական Ալեքսանյանից. «Հուլիսի 17-ին առավոտ 10-ին էր, Էրեբունու ոստիկանության մոտակայքի «Օիրան» սուպերմարկետի մոտ էինք, ուզում էինք տեսնել ինչի համար է ճանապարհը փակ: Մեր կողքին կանգնած էին երկու կանայք, ովքեր բարձրաձայն ինչ-որ բան էին խոսում, այնուհետ, նրանց լռեցնելու համար ոստիկաններ մոտեցան: Վայրկյաններ անց ոստիկաններից մեկը ասեց՝ մեքենան մոտեցրեք ու առանց որևէ բան ասելու, պարզաբանելու Մնացին մտցրեցին մեքենան: Հարցրեցի՝ ինչի համար եք բերման ենթարկում, բայց ոչ մի բացատրություն չտվեցին, կոպիտ կերպով ինձ հրեցին, որպեսզի չկարողանամ բռնել Մնացին», - պատմում է Արևը²⁰²:</p>	
<p>ԸՆԴՄԱՆԸ</p>	168

¹⁹⁹ Տե՛ս Օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանա վորված՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ քրեական գործն ընդունվել է վարույթ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/11/25/830663/>

²⁰⁰ Տե՛ս Օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանա վորված՝ ոստիկանի նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ քրեական գործն ընդունվել է վարույթ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/11/29/831821/>

²⁰¹ Տե՛ս Ըստ քաղաքացու հաղորդման՝ ոստիկանները անհամաչափ ուժ են գործադրել իր նկատմամբ. պարզվում են հանցամասքները: Հասանելի է <http://www.aravot.am/2016/12/16/838105/>

²⁰² Տե՛ս «Հարցրեցի՝ ինչի համար եք բերման ենթարկում, ոչ մի բացատրություն չտվեցին»: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69215/harcrci-inchi-hamar-eq-berman-entarkum-och-mi-bacatrutyun-chtvecin.html>

2016 թ.-ին հավաքների ժամանակ ուստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի ամփոփում

Հավաքների ժամանակ հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 163 դեպք: 113-ի դեպքում խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, 78-ի դեպքում՝ Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, 77-ի դեպքում՝ անձնական ազատության և անձեռնմխելիության, 17-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքներն ինչպես առանձին, այնպես էլ այլ իրավունքների հետ համակցված: ների համատեղ խախտման 2 դեպք և մեկական դեպքում այդ իրավունքը խախտվել է գույքի անձեռնմխելիության իրավունքի հետ համակցված, գույքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքների հետ համակցված, որոնք մանրամասն ներկայացված են ստորև:

Հավաքների ժամանակ մարդու իրավունքների խախտման 152 դեպքը գրանցվել է Երևանում, 8 դեպք՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Մեկական դեպք արձանագրվել Կոտայքի մարզի Բյուրեղավան-Աբովյան ճանապարհին, երբ ոստիկանները փակել էին Նախագահի նստավայրի մոտ ցույցի ուղևորված Բյուրեղավանի գործարանի նախկին աշխատակիցների ճանապարհը, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

Հավաքների ժամանակ գրանցված դեպքերից 1 դեպքում խախտվել է մի քանի հարյուր անձանց իրավունք, 4-ի դեպքում՝ 100-250 անձանց իրավունք²⁰³, 5-ի դեպքում խախտվել է մոտ 20 անձանց իրավունք²⁰⁴, 4-ի դեպքում՝ մի քանի տասնյակ անձանց իրավունք²⁰⁵, 1-ի դեպքում՝ 40-ից ավել անձանց իրավունք, 3-ի դեպքում՝ 10-ից ավել անանց իրավունք, 1-ի դեպքում՝ 136 անձի իրավունք, 1-ի դեպքում՝ 40 անձանց իրավունք, 1-ի դեպքում՝ 27 անձի իրավունք, 1-ի դեպքում՝ 24 անձի իրավունք, 1-ի դեպքում՝ 14 անձի իրավունք, 1-ի դեպքում՝ 13 անձի իրավունք, 2-ի դեպքում 10 անձանց իրավունք, 2-ի դեպքում՝ 8 անձանց իրավունք, 4-ի դեպքում՝ 5-6 անձի իրավունք²⁰⁶, 1-ի դեպքում՝ 7 անձի իրավունք, 2-ի դեպքում՝ 5 անձի իրավունք, 7-ի դեպքում՝ 3 անձի իրավունք, 12-ի դեպքում՝ 2 անձի իրավունք, 74-ի դեպքում՝ 1 անձի իրավունք, 4-ի դեպքում՝ մի քանի անձանց իրավունք, 29-ի դեպքում հնարավոր չի եղել որոշել, թե քանի անձի իրավունք է խախտվել:

²⁰³ Տվյալներն արձանագրվել են ըստ առկա տեսանյութերի:

²⁰⁴ Տվյալներն արձանագրվել են ըստ առկա տեսանյութերի:

²⁰⁵ Տվյալներն արձանագրվել են ըստ առկա տեսանյութերի:

²⁰⁶ Տվյալներն արձանագրվել են ըստ առկա տեսանյութերի:

Հաշվետու ժամանակահատվածում հավաքների ժամանակ գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության)

Խախտված իրավունքը և դեպքի նկարագրությունը	Դեպքերի թիվը
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Խոսքի ազատության իրավունք 	1
<p>քաղաքացիներին ոստիկանական բաժանմունք տանել և անհիմն</p>	1
<p>Դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների օրը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ահազանգեր է ստացել Վանաձորի տարբեր քաղաքացիներից, որ ոստիկանության աշխատակիցները տարբեր, մտացածին պատճառաբանություններով իրենց կանչել են, շատ դեպքերում նաև բերման են ենթարկել ոստիկանության բաժիններ հորդորելով չզնալ և չմասնակցել Երևանում Մարդու իրավունքների օրվան նվիրված երթին:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	2
<p>թիրախ կառույցին մոտենալը խոչընդոտելը</p>	1
<p>Հունվարի 27-ին նախագահականի մոտ ծառայություն իրականացնող ոստիկանները թույլ չեն տվել խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողներին ակցիա անցկացնել նախագահականի դիմացի մայթին՝ փորձելով հեռացնել վերջիններիս նախագահականի դարպասների դիմացից: Ոստիկանները շղթա էին կազմել: Սկսվել է քաշքշուկ²⁰⁷:</p>	
<p>քաղաքացու ազատ տեղաշարժը խոչընդոտելը</p>	1
<p>Մայիսի 13-ին բողոքի երթ էր կազմակերպել «Մենք ենք տերը մեր երկրի» նախաձեռնությունը: Ոստիկաններն ուղեկցում էին երթի մասնակիցներին: Երթն անցկացվում էր պայմանավորվածության համաձայն Պռոշյան փողոցի ձախ մայթով: Այդ ընթացքում ոստիկանության թվով 2 աշխատակից Վ.Օսիպյանի գլխավորությամբ խոչընդոտել են փողոցի աջ մայթով քայլող քաղաքացու ազատ տեղաշարժման իրավունքը և մի ոստիկան քաշքշել է իրեն²⁰⁸:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	2
<p>քաղաքացու և բերման ենթարկելը</p>	1
<p>Դեպք 1. Ապրիլի 22-ին դեպի նախագահական նստավայր երթի ժամանակ ոստիկանությունը բռնի ուժով բերման է ենթարկել Բաղրամյան պողոտայում գտնվող խանութներից մեկի տնօրենին, որն ընդամենը խանութի դիմաց կանգնած հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին: Բերման ենթարկվելու պատճառն այն էր, որ նա չէր լսել ոստիկանների «առաջացեք</p>	

²⁰⁷ Տե՛ս Հինգ տարի անց Մերժ Մարգարյանի խոստումն անկատար է. ակցիա նախագահականի մոտ (Տե՛ս անկում): Հասանելի է <http://www.alplus.am/1431640.html>

²⁰⁸ Տե՛ս «Մենք ենք տերը մեր երկրի». երթ դեպի Բաղրամյան 26. ուղիղ միացում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/05/13/691591/>

ներքե» «պահանջը», այնինչ բերման ենթարկվածի խանութը գտնվում էր հենց այնտեղ, որտեղ կանգնած էր ²⁰⁹ :	
քաղաքացու ն բերման ենթարկելու փորձ	1
Դեպք 2. «Մա հանրային տարածք է, ես զբոսնում եմ այստեղ», - հուլիսի 27-ին ոստիկանները բռնել են Խորենացի փողոցում զբոսնող աղջկա ձեռքերը և փորձեցին բռնի ուժով տանել ոստիկանության պատնեշից այն կողմ՝ պարզելու այդ աղջիկը հանրահավաքի՝ թե պարզապես զբոսնելու է եկել ²¹⁰ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք 	2
լրագրողին բերման ենթարկելը	1
Դեպք 1. Հուլիսի 24-ին Ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել armtimes.com-ի ֆոտոթղթակից Տիգրան Մազմանյանին: Կենտրոն եւ Նորք-Մարաշ դատարանի դիմաց կանգնած սպասում էի փաստաբանին, այդ պահին 4 հոգի մոտեցան, նստեցրին մեքենան, տարան քննչական կոմիտե հուլիսի 22-ի զանգվածային անկարգություններին մասնակցելու կասկածանքով: Բերման ենթարկելու արձանագրություն կատարեցին, խուզարկություն եւ վերջ գործին որպես վկա ներգրավեցին եւ բաց թողեցին»,- ասաց նա: Տիգրան Մազմանյանը ընդգծեց, որ հուլիսի 22-ին լուսաբանել է Խորենացի փողոցում տեղի ունեցած ցույցը եւ չի մասնակցել նրան՝ որպես քաղաքացի ²¹¹ :	
լրագրողի առողջությանը վնաս պատճառելը	1
Դեպք 2. Հուլիսի 29-ին Խորենացի փողոցում կային հատուկ նշանակության քաղաքացիներ, որոնց թվում է Ֆրանսիայում հրապարակվող «Նուվել դ'Արմենի» հրատարակության լրագրող Սեդա Մավյանը: Նա տարածք է եկել սպիտակ դրոշով՝ ոստիկաններին հորդորելով, որ չի կարելի գործել այնպես ինչպես նրանք են գործում: Ոստիկանները սակայն նրան նույնպես տեղափոխեցին ոստիկանական պատնեշի հակառակ կողմը ²¹² :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք 	1
լրագրողին բերման ենթարկելը	1
Ապրիլի 22-ին բերման ենթարկվածներից Արգիշտի Կիվիդյանը պնդում է՝ որ ցույցին որպես լրագրող էր մասնակցում, և իր մասնագիտական գործունեությունն է խոչընդոտվել: Armenia Today կայքի խմբագիրն ասում է՝ ոստիկաններին հատուկ զգուշացրել է, որ լրագրող է: «Հենց ոստիկանները թռան իմ վրա, ես ասել եմ, որ ես լրագրող եմ, իրանք ինչ-որ ռեպլիկներ թողեցին և բռնի	

²⁰⁹ Տե՛ս Բ26-ի առաջնագծում լարված էր. կանխվեց ցուցարարների նախահարձակ գործողությունները. ՖՈՏՈ: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/84123>

²¹⁰ Տե՛ս Մի աղջիկ ոստիկաններին՝ «Զգվում եմ ձեզնից, ինձ մի՛ կպեք»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720736/>

²¹¹ Տե՛ս Բերման են ենթարկել armtimes.com-ի ֆոտոթղթակից Տիգրան Մազմանյանին: Հասանելի է <http://www.1in.am/1964810.html>

²¹² Տե՛ս Ոստիկաններին մոտենում են սպիտակ դրոշով, որ բռնության չենթարկվեն: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721897/>

կերպով, մասնավորապես՝ ուժ կիրառելով, վնասել են վիզս, ինձ նստացրեցին ոստիկանության ավտոմեքենա ²¹³ :	
<ul style="list-style-type: none"> ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
լրագրողին բերման ենթարկելը	1
Ապրիլի 22-ին դեպի նախագահական նստավայր երթի ժամանակ ոստիկանության հատուկ ջոկատայինները, բռնի ուժ կիրառելով և դաժան ծեծի ենթարկելով, բերման են ենթարկել «Առաջին լրատվականի» օպերատորներ Նարեկ Բարսեղյանին ու Սևակ Սողոմոնյանին: Ոստիկանները կոտրել են կալսի տեսանկարահանող սարքերը ²¹⁴ :	
<ul style="list-style-type: none"> ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
հավաքի մասնակցին պատկանող գույքը առգրավելը	1
Ապրիլի 21-ին Ռուսաստանի արտգործնախարարի երևանյան այցին ընդառաջ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան առջև անցկացված ակցիայի մասնակիցներից մեկը պնդում էր, որ իր ձեռքից ոստիկանը վերցրել և պատռել է զոհված զինձառայողի նկարը ²¹⁵ :	
<ul style="list-style-type: none"> ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	1
քաղաքացու ակցիան խոչընդոտելը	1
Օգոստոսի 6-ին Վարդգես Գասպարին նախագահի տան դիմաց հերթական պիկետն է անում: Քիչ առաջ նա ահազանգեց Aravot.am-ին, որ նախագահի տան պահակակետից իր պաստառը վերցրել են: Նրան այնուհետև բերման են ենթարկել և պահել ոստիկանությունում առավոտյան ժամը 09:40-ից մինչև 13-ն անց: Վարդգես Գասպարին իր նկատմամբ ոստիկանությունում վերաբերմունքի մասին ասել է. "Այն մարդիկ, որոնք զգուշացված էին, վերաբերվում էին քաղաքավարի, օրենքի սահմաններում և նորմալ, իսկ այն մարդիկ, որոնք զգուշացված չէին, վերաբերվում էին հեզնանքով և ծաղրուծանակով" ²¹⁶	

²¹³ Տե՛ս Բերման ենթարկված ակտիվիստ. «Ոստիկանության քայլերը ուղղված էին նաև Հայոց բանակի դեմ»: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27692647.html>

²¹⁴ Տե՛ս Բռնության բերման են ենթարկվել «1in.am»-ի օպերատորները. Ոստիկանները վնասել են Տե՛ս անկարահանող սարքերը: Հասանելի է <http://www.1in.am/1897323.html>

²¹⁵ Տե՛ս Բողոքի ակցիան ընթացավ բազմաթիվ միջադեպերով եւ բախումներով (լուսանկարներ, Տե՛ս անյուր): Հասանելի է <http://hraparak.am/?p=109110&l=am/boxoqi+akcian+yntacav+bazmativ+mijadeperv+e%D6%82+baxumnerov+lusankarne+r+tesanyut+>

²¹⁶ Տե՛ս Գասպարին ահազանգում է. «Պաստառս վերցրել են, թույլ չեն տալիս արտահայտվել»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/06/724250/>: Գասպարի. Ոստիկանությունում 3 ժամից ավելի են պահել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/06/724338/>

<ul style="list-style-type: none"> • Արտահայտվելու ազատության իրավունք • Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք • Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	1
քաղաքացու և բռնության ենթարկելը	1
<p>Հոկտեմբերի 22-ին ոստիկանները ՀՀ կառավարության շենքի դիմացից ուժի կիրառմամբ հեռացրել են հացադուլ անող և որպես բողոքի միջոց իր բերանը կարած Վարդենիսի բնակիչ, փականագործ Արմեն Երանոսյանին՝ տանելով «Նուբարաշեն» հոգեբուժական բժշկական կենտրոն: Այս մասին Epress.am-ի հետ հեռախոսազրույցում պատմել է Երանոսյանը: Նա ասել է, որ իրեն արդեն երկու օր է իր կամքին հակառակ պահում են հոգեբուժարանում՝ «ինչ-որ բան են արսկում»:</p> <p>Երանոսյանը պատմել է նաև, որ իր բերանի կարերը քանդել են²¹⁷:</p>	
<ul style="list-style-type: none"> • Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք • Առողջության իրավունք 	5
լրագրողի առողջությանը վնաս պատճառելը	5
Դեպք 1. Հուլիսի 29-ին Մարի թաղում ոստիկանների կողմից արձակած պայթուցիկների հետևանքով վնասվածք է ստացել Առաջին լրատվականի լրագրող Մարիամ Գրիգորյանը ²¹⁸ :	
Դեպք 2. Հուլիսի 29-ին Մարի թաղում «Civilnet»-ի լրագրողի և օպերատորի (Մարգիս Խարազյանի և Մկրտիչ Կարապետյանի) ոտքերի տակ պայթուցիկ է պայթել, ինչի հետևանքով նրանք վնասվածքներ են ստացել ²¹⁹ :	
Դեպք 3. Հուլիսի 29-ին Panorama.am-ի օպերատոր Հովիկ Գրիգորյանը տուժել է պայթուցիկից ²²⁰ :	
Դեպք 4. Հուլիսի 29-ին Մարի թաղում ոստիկանների կիրառած նոնակի հետևանքով տուժել է ֆոտոլրագրող Գևորգ Ղազարյանը ²²¹ :	
Դեպք 5. Հուլիսի 29-ին Մարի թաղում տուժել է «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում գտնվող Life news-ի օպերատոր Տիգրան Գասպարյանը: «Ոստիկանները մեզ ասացին՝ անցեք մի քիչ աջ՝ իբր անվտանգ հատված: Մենք մինչև գնում էինք՝ նոնակները պայթեցին: Բեկորային վնասվածքներ եմ ստացել ²²² :	

²¹⁷ Տե՛ս Կառավարության մոտ հացադուլ անող քաղաքացու նուժով տեղափոխել են հոգեբուժարան: Հասանելի է <http://www.epress.am/2016/10/24/կառավարության-մոտ-հացադուլ-անող-քաղա.html>

²¹⁸ Տե՛ս Մարի թաղում վիրավորվել են «Առաջին լրատվական»-ի լրագրող Մարիամ Գրիգորյանն ու օպերատոր Դավիթ Հարությունյանը: Հասանելի է <http://www.lin.am/1969400.html>

²¹⁹ Տե՛ս Այժմ դեռ կսպասեմ ու հետևություն չեմ կատարի՝ Հատուկ քննչական ծառայության կողմից համակարգային կոռուպցիայի մասին: Հասանելի է <http://m.lurer.com/?p=229887&l=am>: Ոստիկանական մահակը գործադրվեց լրագրողների նկատմամբ (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.a1plus.am/1477321.html>

²²⁰ Տե՛ս Ոստիկանական մահակը գործադրվեց լրագրողների նկատմամբ (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.a1plus.am/1477321.html>

²²¹ Տե՛ս Ոստիկանությունը ուժ կիրառեց ցուցարարների, լրագրողների նկատմամբ: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27889032.html>

²²² Տե՛ս «Մենք մինչև գնում էինք՝ նոնակները պայթեցին...»: Life news-ի օպերատոր Տիգրան Գասպարյանը բեկորային վնասվածքներ է ստացել: Հասանելի է <http://168.am/2016/07/30/668727.html>

<ul style="list-style-type: none"> ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
լրագրողի նկատմամբ բռնություն և կիրառելը	1
Նկարահանած կադրերը ոչնչացնելու մասին հաղորդել է «Lragir.am» կայքի թղթակից Թեհմինե Ենոքյանը, որի աշխատանքը խոչընդոտվել է ²²³ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ● Իրավաբանական օգնություն և ստանալու իրավունք 	1
քաղաքացու նկատմամբ բռնություն և կիրառելը	1
<p>Հուլիսի 20-ի գիշերը ոստիկանների կողմից բռնության ենթարկված Արսեն Թադևոսյանը ունի ծնոտի երկու տեղից կոտրվածք: Արսենը գնացել է Շենգավիթի ոստիկանության բաժին հաղորդում ներկայացնելու հանցագործության մասին, նրա հետ կապը կտրվել էր, Արսենից արդեն մի քանի ժամ է լուր չկար: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Արսեն Թադևոսյանին ձերբակալել են անօրինական հավաքին մասնակցելու հողվածով:</p> <p>Ընկերոջ նշելով՝ փաստաբանին չեն թույլատրել տեսակցել և իրավական աջակցություն ցուցաբերել Արսենին՝ պատճառաբանելով, թե փաստաբան լիազորված չէ իր համար: Սյնուհետ Արսենին Շենգավիթի ոստիկանական բաժանմունքից տեղափոխել են Հրազդանի ՁՊՎ (ձերբակալված անձանց պահման վայրի), իսկ ժամեր առաջ նրան տեղափոխել են Էրեբունու ոստիկանական բաժանմունք, որտեղ էլ նրան դեռ պահում են կոտրված ծնոտով: Արսեն Թադևոսյանն ասաց, որ միայն իր փաստաբանի միջամտությունից հետո են կարողացել դատաբժշկական փորձաքննության ենթարկել իրեն²²⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունք ● Ազատ տեղաշարժվելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	2
հավաքի երթուղին խոչընդոտելը	1
<p>Մարտի 18-ին «Նոր Հայաստան» շարժումը հանրահավաք էր հրավիրել Ազատության հրապարակում, որից հետո տեղի ունեցավ երթ: Մոտ մի 2-3 հարյուր հոգի քայլերթով շարժվել են դեպի Հայաստանում Եվրամիության ներկայացուցչություն քաղաքատարկյալներին վերաբերող իրենց նամակը հանձնելու: Օպերայի շենքի մոտ պատ կազմեցին ոստիկանները՝ թույլ չտալով դուրս գալ Ազատության հրապարակից, բանակցություններից հետո բացել են</p>	

²²³ Տե՛ս Լրագրողական կազմակերպությունները՝ լրագրողների նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնությունների առիթով: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/21/718255/>

²²⁴ Տե՛ս Տուժած ցուցարարը գնացել է ոստիկանություն հաղորդում տալու, նրան ձերբակալել են: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/136346>; <http://hetq.am/arm/news/69351/ostikannery-tsetselov-kotrel-en-arsen-tadevosyani-tsnoty.html>; <http://www.aravot.am/2016/09/08/733239/>: «Երեւի ընկել էս». ոստիկանները կոտրել են ցուցարարի ծնոտն ու ծաղրել նրան (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/08/733239/>

ճանապարհը, ու երթի մասնակիցները Բաղրամյանով շարժվել են դեպի Պոռոշյան: Երթուղին ուղեկցվում էր քառքշուկով հավաքի մասնակիցների ու ոստիկանների միջև ²²⁵ :	
հավաքի մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելը	1
Դեպք 2. Ապրիլի 22-ին Ազատության հրապարակում հավաքված «Մենք ենք տերը մեր երկրի» շարժման ներկայացուցիչներն երթով ցանկացել են հասնել Բաղրամյան 26 եւ ՀՀ նախագահին ներկայացնել Արցախյան խնդրի կարգավորման հետ կապված պահանջները, ինչպես նաև՝ պահանջել պատասխանատվության ենթարկել պետական բարձր պաշտոնյաների: Ոստիկանները նրանց թույլ չեն տվել առաջ շարժվել: Կարմիր բերետավորների եւ ցուցարարների միջև բխումներ են տեղի ունեցել, ոստիկանները քառքշուկ էին նաև աղջիկ ցուցարարներին, եւ հորդորում շրջանցել տարածքը, այսինքն՝ չզնայ Բաղրամյան 26 ²²⁶ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ազատ տեղաշարժվելու իրավունք 	1
հավաքի վայր մեկնող ցուցարարների ճանապարհը փակելը	1
Փետրվարի 1-ին Բյուրեղավանի գործարանի նախկին աշխատակիցները ուղևորվել էին նախագահական նստավայր, սակայն ընդամենը մի քանիսն էին կարողացել հասնել Բաղրամյան 26: Լրագրողների հետ զրույցում նրանք պնդում էին, որ իրավապահները ցուցարարների ավելի մեծ խմբի ճանապարհը փակել են նախ Բյուրեղավանի ելքի, այսինքն՝ Աբովյան քաղաքի մոտ ²²⁷ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	26
Անգործություն և ցուցարարներին բերման ենթարկելը	1
Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքը ընդմիջվել է գողականների հրահրած սկանդալներով: Վերջիններս, մտնելով հանրահավաքի մասնակիցների միջև, փորձել են կռիվներ սարքել, իսկ ոստիկանությունը, կարգի հրավիրելու փոխարեն, հերթով բերման է ենթարկել, առևանգել հավաքվածներին ²²⁸ :	
հավաքի մասնակիցներին բերման ենթարկելը	24
Դեպք 1. Հունվարի 1-ին«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի կազմակերպած ակցիայի ժամանակ Ազատության հրապարակից բերման է ենթարկվել հինգ քաղաքացի իշխանության ներկայացուցիչների (տվյալ դեպքում ոստիկանների) նկատմամբ բռնություն գործադրելու կասկած անքով ²²⁹ :	
Դեպք 2. Հունվարի 3-ին «Հրեշտակների» գումարտակի հրամանատար Գեղամ Խաչատրյանի տան մոտ տեղի ունեցած բողոքի ակցիայի մի քանի մասնակիցներ	

²²⁵ Տե՛ս Այս անգամ՝ առանց իշխանափոխության:

Հասանելի է <http://hraparak.am/?p=105605&l=am/ays+angam`+aranc+ishxanaxutyun>

²²⁶ Տե՛ս Լարված իրավիճակ Ազատության հրապարակում. ժամանել են նաև կարմիր բերետավորները՝ ուղիղ միացում. 1in.am: Հասանելի է <http://168.am/2016/04/22/627452.html>

²²⁷ Տե՛ս Բյուրեղավանի գործարանի նախկին աշխատակիցները նախագահականից են պահանջում իրենց աշխատավարձերը: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27523627.html>

²²⁸ Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել քաղաքացիներին (Ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

²²⁹ Տե՛ս Ամանորի գիշերը Ոստիկանությունը բռնության և ապօրինության խրախճանք է կազմակերպել Ազատության հրապարակում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/01/644397/>

<p>բերման են ենթարկվել Ոստիկանության Մալաթիա-Սեբաստիա բաժին՝ Խաչատրյանի հասցեին սպառնալիքներ հնչեցնելու և նրա գույքին վնաս հասցնելու կասկածանքով²³⁰:</p>	
<p>Դեպք 3. Հունվարի 3-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմաց ի պաշտպանություն Գեորգ Սաֆարյանի կազմակերպված ակցիայի ժամանակ բերման են ենթարկվել «Նոր Հայաստանի» և «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Աշոտ Պետրոսյանը²³¹:</p>	
<p>Դեպք 4. Հունվարի 27-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատն պաշտոնական հայտարարություն է տարածել, որով ասվում է, որ ոստիկանության կողմից հունվարի 26-ից լույս 27-ի գիշերվա ընթացքում Ազատության հրապարակից առանց որևէ իրավական հիմքի ոստիկանությունը ապօրինի կերպով բերման են ենթարկել նստացույցի մասնակիցներին²³²:</p>	
<p>Դեպք 5. Փետրվարի 1-ին «Ազատություն Գեորգ Սաֆարյանին» ակցիայի ժամանակ ՀՀ գլխավոր դատախազության շենքի վրա ձվեր նետած ակտիվիստներ են բերման ենթարկվել²³³: (Հարկ է արձանագրել, որ բերման ենթարկելն անհամաչափ գործողություն է նման արարքի դեպքում)</p>	
<p>Դեպք 6. Փետրվարի 24-ի երեկոյան մի խումբ քաղաքացիներ ՀՀ նախագահի նստավայրի մոտ բողոքի ակցիա են անցկացրել ի պաշտպանություն Վարդգես Գասպարիի պառկելով Բաղրամյան 26-ի դարպասների առջև՝ փողոցի երթնեկելի հատվածում: Ակցիայի առաջին ակիքի մասնակիցներին բերման են ենթարկել, սակայն դրանից հետո մարդկանց նոր խումբ կրկին պառկել է նախագահականի առջև ու նույնպես տարվել ոստիկանություն: Ոստիկանները քաղաքացիներին գրկած տեղափոխել են մայթ: Որոշ ժամանակ անց դեպքի վայր ժամանած ոստիկանները մեքենայով նրանց տեղափոխել են Ոստիկանության Արաբկիրի և Կենտրոնի բաժիններ²³⁴:</p>	
<p>Դեպք 7. Փետրվարի 25-ին մի խումբ քաղաքացիներ Կառավարության շենքի դիմաց իրականացրել են ակցիա՝ ի պաշտպանություն քաղբանտարկյալների, մասնավորապես՝ Վարդգես Գասպարիի: Վերջինիս օրինակով նրանք պառկել էին Կառավարության մուտքի աստիճանների վրա, ինչից հետո մի քանիսին ոստիկանները բերման ենթարկեցին²³⁵:</p>	

²³⁰ Տե՛ս Գեղամ Խաչատրյանի տան մոտից բերման ենթարկվածները սպառնալիքներ չեն հնչեցրել նրա հասցեին (ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/03/644610/>

²³¹ Տե՛ս Բերման են ենթարկվել «Նոր Հայաստանի» 2 անդամ:
Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/03/644676/>

²³² Տե՛ս Անցած գիշեր ոստիկանությունն Ազատության հրապարակից բերման են ենթարկել 7 քաղաքացու:
Հասանելի է <http://galatv.am/hy/news/7-29/>

²³³ Տե՛ս Դատախազության շենքի վրա ձվեր նետելուց հետո բերման ենթարկված ակտիվիստներն ազատ են արձակվել (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/309294.html>

²³⁴ Տե՛ս Բաղրամյան 26-ի մոտից շարունակեցին բերման ենթարկել. սոցցանցում կոչ են անում միանալ Գասպարիի համար ակցիային (ՎԻԴԵՈ): Հասանելի է <http://www.epress.am/2016/02/24/%D5%A2%D5%A1%D5%B2%D6%80%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6-26-%D5%AB-%D5%B4%D5%B8%D5%BF%D5%AB%D6%81-%D5%B7%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6-%D5%A2%D5%A5%D6%80%D5%B4%D5%A1.html>

²³⁵ Տե՛ս Ակտիվիստները պառկել էին նաև Կառավարության շենքի դիմաց:
Հասանելի է <http://www.aravot.am/2016/02/25/661478/>

<p>Դեպք 8. Մարտի 14-ին ոստիկանության կենտրոնականի բաժին Հանրապետության հրապարակից բերման են ենթարկվել «Հայ կանանց ճակատ» նախաձեռնության 10 կին՝ Հանրապետության հրապարակում Գե.որգ Սաֆարյանի ձեռքակալման դեմ նստացույց իրականացնելու ժամանակ: Պահանջել են ազատել տարածքը, պատճառաբանելով որ խանգարում եք երթեւեկությանը: Բայց այդ տարածքում երթեւեկություն չկար, չէինք կարող ինչ-որ մեկին խանգարել»,- ասել է Սյուզան Սիմոնյանը: Կանանց ոստիկանությունում 3 ժամ պահելուց անց ազատ են արձակել²³⁶:</p>	
<p>Դեպք 9. Մարտի 21-ին ոստիկանությունը Հանրապետության հրապարակից ապօրինի կերպով բերման է ենթարկել «Հայ կանանց ճակատ» նախաձեռնության կազմակերպած «Ոչ բռնապետությանը» և «Ազատություն քաղբանտարկյալներին» կարգախոսներով բողոքի ակցիայի բոլոր մասնակիցներին²³⁷:</p>	
<p>Դեպք 10. Հունիսի 22-ին Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի մոտ ի պաշտպանություն Ժիրայր Սեֆիլյանի բողոքի ակցիա էին անցկացնում մի խումբ մարդիկ: Մոտ 20 ոստիկաններ, որոնց մեջ էին նաեւ կարմիր բերետավորներ, առանց որեւէ բացատրություն տալու՝ մի քանի կնոջ բռնի ուժով բերման ենթարկեցին, այդ թվում Սյուզան Սիմոնյանին եւ Անուշ Կարապետյանին²³⁸:</p>	
<p>Դեպք 11. Հուլիսի 17-ին Երևանի Մաշտոցի պողոտայից բերման է ենթարկվել Կարեն Աթայանը²³⁹:</p>	
<p>Դեպք 12. Հուլիսի 17-ին Երևանի Մաշտոցի պողոտայից բերման է ենթարկվել երկու քաղաքացի²⁴⁰:</p>	
<p>Դեպք 13. Հուլիսի 20-ին «Ազատության» լրագրողն ուղիղ եթերում հայտնել է, որ նկարահանում են իրականացրել Սարալանջի փողոցում՝ ոստիկանական ուժերի կողմից փակված Մարի Թաղի հատվածում: «ՊՊԾ գնդին ամենամոտ տարածքում էինք: Տեսա, որ ոստիկանական հատուկ ուժերը բերման են ենթարկում մի քանի քաղաքացիներին²⁴¹:</p>	
<p>Դեպք 14. Հուլիսի 27-ին ՊՊԾ գնդի տարածքում տեղի է ունեցել փոխհրաձգություն, որի հետևանքով վիրավորվել է իրավապահներից մեկը, ինչպես նաև Պավել Մանուկյանն ու նրա որդի Արամը: Խորհնացու փողոցում այս լուրը բավականին ծանր ընդունեց մի կին, որին ներկաները դիմում էին Մուսաննա անունով: Նա լացում էր և հայտարարում էր, որ այլևս չի ցանկանում ապրել Հայաստանում և իր կյանքն անիմաստ է: Նա նստեց ոստիկանների պատի դիմաց և հացադուլ հայտարարեց: Սակայն, քիչ հետո ոստիկանների մի նոր խումբ դուրս եկավ և</p>	

²³⁶ «Հայ կանանց ճակատ» նախաձեռնության 10 ակտիվիստներն ազատ են արձակվել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/03/14/667104>

²³⁷ Տե՛ս Բերման են ենթարկել կանանց (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1442380.html>

²³⁸ Տե՛ս Ժիրայր Սեֆիլյանը երկու ամսով կալանավորվեց (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1465968.html>

²³⁹ Տե՛ս Ծահեն Հարությունյանին նորից բերման ենթարկեցին. Զ. Փոստանջյանը դիմել է ոստիկաններին: Հասանելի է <http://www.alplus.am/1472679.html>

²⁴⁰ Տե՛ս Ծահեն Հարությունյանին նորից բերման ենթարկեցին. Զ. Փոստանջյանը դիմել է ոստիկաններին: Հասանելի է <http://www.alplus.am/1472679.html>

²⁴¹ Տե՛ս Ըստ քաղաքացու՝ դիմակավորված մի ոստիկան հարվածել է Մարի Թաղի բնակիչներին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/20/717417/>

<p>բերման ենթարկեց մի խումբ քաղաքացիների, այդ թվում նաև տիկին Սուսանային՝ չնայած այն հանգամանքին, որ նա հայտարարում էր, թե հացադուլի մեջ է²⁴²:</p>	
<p>Դեպք 15. Հուլիսի 27-ին Աբովյան – Սայաթ-Նովա խաչմերուկից բերման են ենթարկվել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամներ Նարեկ Բաբայանը, Վիլեն Գաբրիելյանը, Ռոմանոս Պետրոսյանը, Սուրեն Էյրաճյանը, Ռուբեն Ռուբինյանը (բողոքը Վարչության անդամներ են), Հովիկ Աղազարյանը, Սուրեն Պապիկյանը, Առնելա Այվազյանը, Նարեկ Ղափրամանյանը, Դավիթ Զախարյանը:</p> <p>Կուսակցության վարչության անդամ Ալեն Սիմոնյանը Aravot.am-ին ասել է, որ ոստիկաններն իրենց բերման են ենթարկել ապօրինի զենք և զինամթերք պահելու կասկածանքով, մինչդեռ իրենք ընդամենը փակել էին խաչմերուկը: Նրանց պահել են 3,5 ժամ²⁴³:</p>	
<p>Դեպք 16. Հուլիսի 27-ին Ոստիկանները բերման են ենթարկել «Ոտքի, Հայաստան» նախաձեռնության անդամ Դավիթ Հովհաննիսյանին²⁴⁴:</p>	
<p>Դեպք 17. Հուլիսի 26-ին ցույց էին կազմակերպել գյումրեցիները՝ Թատերական հրապարակում՝ իրենց բողոքն արտահայտելու քաղաքացիների անօրինական ձերբակալություններին դեմ: Սակայն հանրահավաքի կազմակերպիչներից «Ասպարեզի» աշխատակից, «Ժառանգության» անդամ Եղիշե Շարյանին ժամը 19:00-ի սահմաններում ոստիկանությունը բերման էր ենթարկել: Եղիշե Շարյանին ազատ են արձակել միայն 22:00 սահմաններում, ով միացել է ցուցարարներին²⁴⁵:</p>	
<p>Դեպք 18. Հուլիսի 27-ին Խորենացի փողոցում ոստիկանները բերման են ենթարկել «Հայազն» կուսակցության ներկայացուցիչ Արմեն Մկրտչյանին, երգահան Եղիշե Պետրոսյանին,:</p> <p>Արմեն Մկրտչյանը պատմել է, որ իր հետ բերման են ենթարկել Արմեն Մարտիրոսյանին, Անդրիաս Ղուկասյանին, Եղիշե Պետրոսյանին: Մեզ այդքանիստ առանձին են տարել: Երկար պահեցին քան մնացած բերման ենթարկվածներին և ավելի ուշ բաց թողեցին», - եզրափակել է նա զրույցը²⁴⁶:</p>	
<p>Դեպք 19. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները «Մուշ» բաժին բերման են ենթարկել Եղիշե Շարյանին: Նրան հաջողվել էր մի պահ կապ հաստատել Aravot.am-ի հետ, վերջինս նեղվեց, որ ոստիկաններին հարցրել են,</p>	

²⁴² Տե՛ս Բերման ենթարկվեց նաև Լևոն Բարսեղյանը (Տե՛ս անյութ): Հասանելի է

<http://www.aravot.am/2016/07/27/720302/>

²⁴³ Տե՛ս Քիչ առաջ Աբովյան-Սայաթ-Նովա խաչմերուկից բերման են ենթարկվել ՔՊ կուսակցության անդամներ:

Հասանելի է <http://www.1in.am/1967442.html>: Բերման են ենթարկել ապօրինի զենք-զինամթերք պահելու

կասկածանքով, բայց հետո բաց են թողել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/28/720964/> :

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մի քանի անդամներ փակել են Սայաթ-Նովայի փողոցը

(ֆոտո, վիդեո): Հասանելի է <http://arm.lur.am/561154/>

²⁴⁴ Տե՛ս Ազատության հրապարակից երթ է սկսվում դեպի Խորենացի. Բերման են ենթարկել Անդրիաս

Ղուկասյանին (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/339271.html>

²⁴⁵ Տե՛ս Գյումրիից երիտասարդ տղաների մի խումբ արդեն ուղևորվել է Երևան՝ միանալու երթին: Հասանելի է

<http://hraparak.am/?p=118754&l=am/gyumriic+eritasard+txaneri+mi+xumb+ardenvo%D6%82xevorvel+e+erevan%D5%9D+miana+ertin>

²⁴⁶ Տե՛ս Մեզ դիմակներով և ավտոմատներով մարդիկ էին հսկում. Արմեն Մկրտչյանը մանրամասներ է

պատմում իրեն բերման ենթարկելու մասին: Հասանելի է <http://arm.lur.am/561603/>

թե ինչ հիմքով էք մեզ բերման ենթարկում, պատասխանել են՝ սպասեք, հետո կասենք ²⁴⁷ :	
Դեպք 20. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները «Մուշ» բաժին բերման են ենթարկել Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակի Շիրակի մարզային կառույցի պատասխանատու Սեյրան Մարտիրոսյանին, տնտեսագետ Կարեն Ավագյանին ու նրա տիկնոջը ²⁴⁸ :	
Դեպք 21. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները մեծ թվով մարդկանց են բերման ենթարկել Գյումրու ոստիկանության «Կումայրի» բաժին ²⁴⁹ :	
Դեպք 22. Հուլիսի 29-ին Մարի թաղում իրադարձությունների ժամանակ բերման է ենթարկվել «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը ²⁵⁰ :	
Դեպք 23. Օգոստոսի 2-ին Ազատության հրապարակում հրավիրված հանրահավաքը սկսվեց մոտ 1,5 ժամ ուշացումով: Հարթակում հայտնվեցին մի քանի հոգի ու ներողություն խնդրեցին դեռևս սակավաթիվ ժողովրդից պատճառաբանելով, որ իրենց մեքենան ոստիկանությունը բերման էր ենթարկել ²⁵¹ :	
Դեպք 24. Օգոստոսի 4-ին Ազատության հրապարակից շուրջ 2 տասնյակ քաղաքացիներ բերման ենթարկվեցին: Հրապարակից մեկնարկած երթն արդեն ավարտին էր մոտենում, երբ կարմիրբերետավորները վազքով մտան հրապարակ, ուր վերադառնում էին երթի մասնակիցները, և սկսեցին բերման ենթարկել նրանց: «Ազատության» հարցին ի պատասխան, թե ինչու են քաղաքացիները բերման ենթարկվում, Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը հորդորեց դիմել Ոստիկանության լրատվական ծառայությանը: Բերման ենթարկվածների մեջ են նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երեք անդամներ: Hraparak.am-ը տեղեկացնում է, որ ՀՀ ոստիկանությունից հայտնում են, որ Ազատության հրապարակից ոստիկանությունը բերման էր ենթարկել 27 քաղաքացու ²⁵² :	
քաղաքացու ոստիկանություն հրավիրելն առանց հիմքի	1

²⁴⁷ Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել քաղաքացիներին (Ֆոտոռոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

²⁴⁸ Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել քաղաքացիներին (Ֆոտոռոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

²⁴⁹ Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել քաղաքացիներին (Ֆոտոռոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

²⁵⁰ Տե՛ս Ձերբակալվել է Արմեն Մարտիրոսյանը: Հասանելի է <http://www.1in.am/1969691.html>

²⁵¹ Տե՛ս Հանրահավաքը սկսվեց 1,5 ժամ ուշացումով ու ավարտվեց դեպի ԱՄՕ երթով (ֆոտոռոշարք և Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/03/723236/>

²⁵² Տե՛ս Ազատության հրապարակից մոտ 20 մարդ բերման ենթարկվեց: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27900854.html>: Ազատության հրապարակից բերման ենթարկվածներին ազատ են արձակել: Հասանելի է

<http://hraparak.am/?p=119583&l=am/azatutyun+hraparakic+berman+entarkvacnerin+azat+en+ardzake1>

<p>Ազատամարտիկ Սարգիս Ղազարյանին, որը նոյեմբերի 3-ին անժամկետ հացադուլ էր հայտարարել, դեկտեմբերի 8-ին ոստիկանության բաժին էին հրավիրել: Նա Aravot.am-ի հետ զրույցում ասաց, որ առավոտյան ժամը 9:30 ոստիկանները մոտեցել ու իրեն հրավիրել են ոստիկանության բաժին՝ ասելով, որ ոստիկանության բաժնում ցանկանում են իր հետ հանդիպել. Բաժնում ոստիկանության Կենտրոնական բաժնի պետ Արման Հովհաննիսյանն ասաց՝ Սարգիս ինչքան պետք է հացադուլ անես, պատասխանեցի ինչքան հացադուլ կանես, ինչքան չեմ անի, իմ խնդիրն է. սա արդարության պայքար է»: Սարգիս Ղազարյանը հավելեց, որ իր կամքին հակառակ՝ 3 ժամ իրեն պահել են ոստիկանության բաժանմունքում²⁵³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
<p>քաղաքացու և հայ հոյեղը</p>	1
<p>Հուլիսի 20-ին Տիգրան Մեծ պողոտայում հավաքված բողոքի ցույց անող ցուցարարներին ցրելիս ՀՀ փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը հայհոյում է բերման ենթարկվող հիվանդ տղային: (տեսանյութ 2:28-ից)²⁵⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	2
<p>հավաքի մասնակիցներին բերման ենթարկելը</p>	1
<p>Մարտի 10-ին մի խումբ քաղաքացիներ Ազգային ժողովի մոտ ակցիան են անցկացրել ի պաշտպանություն քաղբանտարկյալների: Նրանք պլաստմասե ժապավեններով իրենց կապել էին Ազգային ժողովի կենտրոնական մուտքի ճաղերին: Ակցիայի վայր էին ժամանել մոտ 3 տասնյակ ոստիկաններ: Նրանց գործողությունը դեկավարող Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը հայտարարել է, որ քաղաքացիները խախտում են հասարակական կարգը և կոչ է արել նրանց արձակել ժապավենները և կարգադրել է ակցիայի բոլոր մասնակիցներին բերման ենթարկել Արաբկիրի ոստիկանության բաժին²⁵⁵:</p>	
<p>քաղաքացու և բերման ենթարկելը</p>	1
<p>Երգչուհի, ակտիվիստ Անուշիկ Հարությունյանը հուլիսի 18-ին Խոթրենացու փողոցից բերման ենթարկվածներից մեկն էր: Իր պատմելով՝ ոչ միայն ինքը, նույնիսկ քննիչն է ծիծաղել, երբ իմացել է՝ բերման են ենթարկել ապօրինի զենք և զինամթերք պահելու կասկածանքով: Իսկ ինքը պարզապես օգնության է հասել</p>	

²⁵³ Տե՛ս Հացադուլ անող ազատամարտիկին ոստիկանություն են հրավիրել. «Նպատակը ինձ լիկվիդացնելն էր»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/12/08/835251/>

²⁵⁴ Տե՛ս ՀՀ փոխոստիկանապետը վիրավորում է բերման ենթարկվող հիվանդ տղային (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.a1plus.am/1474266.html>

²⁵⁵ Տե՛ս Քաղբանտարկյալների աջակիցներին ԱԺ-ի մոտից բերման ենթարկեցին (ՎԻԴԵՈ): Հասանելի է <http://www.epress.am/2016/03/10/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A2%D5%A1%D5%B6%D5%BF%D5%A1%D6%80%D5%AF%D5%B5%D5%A1%D5%AC%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%BD%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%AA%D6%8A.html>

<p>ընկերներին՝ Էլմոնե և Միմոնե Եղևուկյաններին, Արման Առաքելյանին, որոնց բերման էին ենթարկում՝ փողոցում ստվարաթղթին «Էլ ելք չկա» գրելու համար: «Ինձ տանելիս չքաշքշեցին միայն այն պատճառով, որ հայտարարեցի՝ ինքս կգամ», - պատմում է Անուշիկը՝ ասելով, ոստիկանական բաժնում բռնություն չի գործադրվել, բայց եղել է հոգեբանական ճնշում:</p> <p>Անուշիկին և մյուս բերման ենթարկվածներին բաց են թողել վեց ժամ հետո, թեև բաց պետք է թողնեին երեք ժամ հետո²⁵⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	2
<p>քաղաքացու և բերման ենթարկելը</p>	2
<p>Դեպք 1. Հուլիսի 27-ին Խորենացի փողոցում էր Կարմիր բերետավորների ջոկատը: Նրանք տաս քաղաքացիների բերման ենթարկեցին և տարան ոստիկանական պատից այն կողմ: Եվ շարունակեցին Խորենացի փողոցով առաջանալ: Քաղաքացիները ոստիկանության պատի առաջ իրենց բողոքն էին արտահայտում՝ առանց որևէ պատասխան ստանալու: Ոստիկանները շարունակում էին բերման ենթարկել քաղաքացիներին, լսվում էին քաղաքացիների բողոքներ: Ոստիկանները նաև պոկում են Խորենացի փողոցում առկա պաստառներ: Բերման ենթարկվածների թիվը մոտ երկու տասնյակ, ըստ ազատության²⁵⁷:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 28-ին Հյուսիսային պողոտայի հարակից տարածքից բերման է ենթարկվել Հիմնադիր խորհրդարանի աջակից Վահրամ Պետրոսյանը, որն իր անձնական մեքենայով տեղափոխում էր Ազատության հրապարակում տեղի ունեցող խաղաղ հավաքի տեխնիկան: ՃՈ ոստիկանները բերման են ենթարկել Վահրամ Պետրոսյանին տեխնիկայի հետ միասին: Ոստիկաններից մեկը նստել է վերջինիս մեքենայի դեկին և հեռացել՝ տանելով տեխնիկան²⁵⁸:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Իրավաբանական օգնություն և ստանալու իրավունք 	1
<p>քաղաքացու և բերման ենթարկելը</p>	1
<p>Դավիթ Սանասարյանի պաշտպան Արա Կարազյոզյանը «Հետք»-ին փոխանցեց, որ հուլիսի 27-ին Սանասարյանին բերման են ենթարկել ոստիկանության զորքերի վարչական շենք, որտեղ 3 ժամ ապօրինի, առանց կարգավիճակի պահելուց հետո, այժմ տեղափոխում են քննչական կոմիտե:</p> <p>Փաստաբանն այժմ Սանասարյանի հետևից գնում է քննչական կոմիտե: Կարազյոզյանը հայտնեց, որ խոչըրոտել են իր փաստաբանական գործունեությունը, թույլ չեն տվել տեսակցել Սանասարյանին²⁵⁹:</p>	

²⁵⁶ Տե՛ս՝ [Քննիչն անգամ ծիծաղեց. բերման ենթարկված ակտիվիստ: Հասանելի է <http://www.alplus.am/1473301.html>](http://www.alplus.am/1473301.html)

²⁵⁷ Տե՛ս՝ [Ոստիկանները բերման են ենթարկում քաղաքացիների \(ֆոտոշարք\): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720296/>: Խորենացի փողոցից բերման ենթարկվեցին մի քանի տասնյակ քաղաքացիներ /Լուսանկարներ, Տե՛ս՝ \[անյութ: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/90380>\]\(http://armtimes.com/hy/article/90380\)](http://www.aravot.am/2016/07/27/720296/)

²⁵⁸ Տե՛ս՝ [Այս պահին խուզարկություն է տեղի ունենում Ալեք Ենիգոմշյանի բնակարանում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/28/721317/>](http://www.aravot.am/2016/07/28/721317/)

²⁵⁹ Տե՛ս՝ [Դավիթ Սանասարյանին տեղափոխում են քննչական կոմիտե: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69499/davit-sanasaryan-in-texapokhum-en-qnchakan-komite.html>](http://hetq.am/arm/news/69499/davit-sanasaryan-in-texapokhum-en-qnchakan-komite.html)

<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Իրավաբանական օգնություն և ստանալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
քաղաքացու և բերման ենթարկելը	1
<p>Հուլիսի 27-ին Խորենացի փողոցից Կարմիր բերետավորներն ի թիվս այլ քաղաքացիների բերման են ենթարկել նաև կինոդերասանուհի Արսինե Խանջյանին:</p> <p>Արսինե Խանջյանին տարել էին Ոստիկանության ներքին գործերի գործառնամաս, մոտից իլել են հեռախոսը և շուրջ 3 ժամ անազատության մեջ պահելուց հետո ազատ են արձակել: Նրա փաստաբան Արտավազ Կիվիլյանը տեղեկացրել է, որ փաստաբաններին թույլ չէին տալիս մուտք գործել, իսկ ոստիկանության գործողություններն իրավական տեսանկյունից որակել է որպես անձի առևանգում և ապօրինի՝ անձին առանց պատճառաբանության ձերբակալել և ուտանելը²⁶⁰:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	17
ցուցարար (ներին) բերման ենթարկելը	16
<p>Դեպք 1. Փետրվարի 25-ին ի պաշտպանություն քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի մի խումբ երիտասարդներ փորձել են նախագահական նստավայրի դիմաց ակցիա իրականացնել, սակայն ոստիկանները, պատկազմած, նրանց թույլ չեն տվել առաջանալ:</p> <p>Երիտասարդները հետ են եկել դիմացի մայթ եւ պառկել ճանապարհի մեջտեղում, վանկարկելով՝ ազատություն Գասպարիին, ազատություն բոլոր քաղաքացիականների: Երեւանի փոխոստիկաապետ Վալերի Օսիպյանը նրանց մի քանի անգամ հորդորել է բացել ճանապարհը, սակայն ակտիվիստները շարունակում էին վանկարկել եւ պառկած մնալ: Օսիպյանի հրահանգով ոստիկանները բռնի ուժով ակտիվիստներին դուրս են հանել ճանապարհից, իսկ մի մասին էլ բերման են ենթարկել²⁶¹:</p>	
<p>Դեպք 2. Փետրվարի 26-ին Մալաթիա տոնավաճառի մի քանի հարյուր աշխատակիցներ փակել էին «Մալաթիա» տոնավաճառի հարակից Բաֆֆու փողոցը. նրանք բողոքում էին տաղավարների բարձր վարձավճարների դեմ: Ոստիկանները ուժ կիրառելով՝ բացել են երթևեկելի հատվածը, բերման ենթարկել երեք տղամարդու²⁶²:</p>	
<p>Դեպք 3. Մարտի 11-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամները հավաքվել էին ՀՀ Վերաքննիչ դատարանի մոտ: Երբ դատարանը</p>	

²⁶⁰ Տե՛ս Կինոդերասանուհի Արսինե Խանջյանին էլ Կարմիր բերետավորները տարան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720705/>: Բերման ենթարկված Արսինե Խանջյանին ազատ են արձակել. փաստաբան (ֆոտո): Հասանելի է <https://news.am/arm/news/339277.html>

²⁶¹ Տե՛ս Լարված իրավիճակ Բաղրամյան 26-ի մոտ. մի խումբ երիտասարդներ բերման ենթարկվեցին: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/80317>

²⁶² Տե՛ս «Մալաթիա»-ի աշխատակիցները պահանջում են նվազեցնել տաղավարների վարձավճարները: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27575708.html>

<p>մերժեց ազատ արձակել Գևորգ Սաֆարյանին, անդամները ձվեր նետեցին դատարանի ուղղությամբ: Ոստիկանները բերման են ենթարկել «Նոր Հայաստանի» անդամ Գագիկ Եղիազարյանին²⁶³: (Հարկ է արձանագրել, որ բերման ենթարկվելը համաչափ գործողություն չէ նման արարքի համար)</p>	
<p>Դեպք 4. Մարտի 24-ին «Հիմնադիր խորհրդարանի» և «Հայ կանանց ճակատի» անդամները բողոքի ցույց իրականացրեցին Մաշտոցի պողոտայում: Մաշտոցի պողոտայից բերման է ենթարկվել 14 քաղաքացի՝ ֆիզիակական ուժի գործադրմամբ: Նրանց մեջ էր վերջերս ծեծի ենթարկված՝ «Նոր Հայաստանի» համակիր Սյուզի Գևորգյանը, «Նոր Հայաստանի» անդամներ Կարո Եղնուկյանը, Գագիկ Եղիազարյանը, Հովհաննես Ղազարյանը²⁶⁴:</p>	
<p>Դեպք 5. Ապրիլի 22-ին դեպի նախագահական նստավայր երթի ժամանակ ոստիկանությունը բռնի ուժով բերման է ենթարկել 40 ակտիվիստի²⁶⁵:</p>	
<p>Դեպք 6. Հուլիսի 18-ին մի խումբ քաղաքացիներ հավաքվել էին Ազատության հրապարակում քննարկելու ինչպես կարելի է լուծել ստեղծված իրավիճակը: «Ոտքի Հայաստան» նախաձեռնության անդամ Դավիթ Սանասարյան խոսում էր բարձրախոսով, երբ նրան իր մոտ հրավիրեց Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը և հայտնեց, որ երթ դեպի Խորենացի փողոց չի կարող տեղի ունենալ: Դրանից հետո Դավիթ Սանասարյանին բերման ենթարկեցին: Այդ ժամանակ ևս մի քանի քաղաքացիներ բերման ենթարկվեցին, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի որդուն²⁶⁶:</p>	
<p>Դեպք 7. Հուլիսի 18-ին Ազատության հրապարակում «Ոչ թալանին» նախաձեռնության կազմակերպած հանրային քննարկման ժամանակ ոստիկանները բռնի ուժով ոստիկանական մեքենա են նստեցրել քաղաքացիներ Արտակ Գևորգյանին և Գարիկ Յավրուսյանին: Նրանց խոսքով՝ մեքենայում ոստիկաններն իրենց նկատմամբ կիրառել են բռնություն՝ հարվածելով մարմնի տարբեր մասերին²⁶⁷:</p>	
<p>Դեպք 8. Հուլիսի 18-ին գեղանկարիչ Արա Պետրոսյանը հայտնել է, որ Ազատության հրապարակից իրեն եւ մի քանի այլ քաղաքացիների բռնելով, քաշելով ոստիկանները տարել են Դավիթաշեն՝ Ներքին գորքերի գորամաս²⁶⁸:</p>	
<p>Դեպք 9. Հուլիսի 18-ին Ազատության հրապարակից բերման ենթարկվածների թվում էր նաև Տիգրան Ավագյանը: ArmLur.am-ի ֆիքսած կադրերում երևում է, թե ինչպես են ոստիկանները փորձում նրան պոկել պունից, որին վերջինս փաթաթված էր: Նա ArmLur.am-ի հետ զրույցում նշեց, որ կուսակցական չէ, ոչ էլ որևէ շարժման մասնակից, այլ երեկ մասնակցում էր հանրային քննարկմանը,</p>	

²⁶³ Տե՛ս Վերաքննիչ դատարանի վրա ձվեր շարտեցին:

Հասանելի է <http://hrparak.am/?p=104887&l=am/veraqnich+datarani+vra+dzver+shprtec in>

²⁶⁴ Տե՛ս Բերման է ենթարկվել 1 տասնյակից ավել մարդ (Տե՛ս անյութ):

Հասանելի է <http://www.alplus.am/1443113.html>

²⁶⁵ Տե՛ս Բ26-ի առաջնագծում լարված էր. կանխվեց ցուցարարների նախահարձակ գործողությունները. ՖՈՏՈ:

Հասանելի է <http://armtimes.com/hy/read/84122>

²⁶⁶ Տե՛ս Լարված իրավիճակ Ազատության հրապարակում (Տե՛ս անյութ): Հասանելի է

<http://hetq.am/arm/news/69237/larvats-iravitchak-azatuyan-hraparakum-tesanyut.html>

²⁶⁷ Տե՛ս Լարված իրավիճակ Ազատության հրապարակում (Տե՛ս անյութ): Հասանելի է

<http://hetq.am/arm/news/69237/larvats-iravitchak-azatuyan-hraparakum-tesanyut.html>

²⁶⁸ Տե՛ս Դավիթ Սանասարյանին ոստիկաններն այնքան են ծեծել, նա 10 րոպե անգիտակից ընկած էր:

Հասանելի է <http://armtimes.com/hy/article/89859>

<p>որին էլ խոչընդոտել են ոստիկանները: «Անձամբ իմ հետ զրուցելուց հետո Հունան Պողոսյանը նշեց, որ մեր դեմ բռնություն կատարածները կպատժվեն և դրանից հինգ րոպե հետո ինձ ձեռում են մի քանի ոստիկան», – նշեց նա²⁶⁹:</p>	
<p>Դեպք 10. Հուլիսի 18-ին «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ֆելիքս Հայրապետյանը գրավոր դիմել է ՄԻ պաշտպանի գրասենյակ՝ նշելով, որ հուլիսի 18-ին ոստիկանական զորքերի վարչական շենք տանելիս իր նկատմամբ ոստիկանները բռնություն են կիրառել: ՄԻՊ գրասենյակում նրան հորդորել են դիմել դատաբժշկի: Սակայն քաղաքացին դատաբժշկական փորձաքննություն անցնել հրաժարվել է: «Նախկինում էլ ի պաշտպանություն քաղաքացիական ակցիաների ժամանակ իմ հանդեպ բռնություն են կիրառել, բայց քանի որ չեմ հավատում հայաստանյան դատարաններին, հրաժարվել եմ դիմել դատաբժշկի», – ասաց Ֆելիքս Հայրապետյանը՝ ցույց տալով ձեռքերի վնասվածքները²⁷⁰:</p>	
<p>Դեպք 11. Հուլիսի 24-ին Երևանի Խորենացի փողոցից քաղաքացիական հագուստով անձինք մի տղամարդու են բերման ենթարկել: Ականատեսները NEWS.am-ի թղթակցին հայտնել են, որ որպես ոստիկան ներկայացած անձինք ուժով մի ակտիվիստի 34 FA 660 համարանիշով արձաթագույն «Մերսեդես» մակնիշի մեքենան են նստեցրել և տարել անհայտ ուղղությամբ: Ականատեսները նաև մեր թղթակցին են փոխանցել հեռախոսով արված կարճ տեսանյութը: Բերման ենթարկվածը Տիգրան Ավագյանն է²⁷¹:</p>	
<p>Դեպք 12. Հուլիսի 25-ին Խորենացիում հանրահավաքը սկսվելուց առաջ ոստիկանները 3 քաղաքացու են բերման ենթարկել: Այդ մասին հանրահավաքին հայտարարեց Ժուռնալիստների Ասպարեզ ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը: Նա ասաց, որ տեսագրություններ կան, թե ինչպես են բռնի ուժով այդ քաղաքացիներին տարել. «Իբր թե սադրիչ են ու իբր թե ոստիկանները գործ են անում»²⁷²:</p>	
<p>Դեպք 13. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները ծեծելով, գետին զցելով, ուժասպառ եղած վիճակում բերման ենթարկեցին նաև երիտասարդներից մեկին՝ Վովա անունով²⁷³:</p>	
<p>Դեպք 14. Քաղաքացի Գոռ Ամիրյանը Ֆելսոփում հաղորդագրություն է տարածել իր ընկերոջ մասին, որին բերման են ենթարկել. «Հարգելի հատկապես ԼՐԱԳՐՈՂ ընկերներ, հուլիսի 28-ին «Ա1+»-ի ձեռք գործընկերների հետ, ձեռքակալել են նաև ընկերոջս՝ Արմեն Աշոտի Հովհաննիսյանին, ով այդ պահին գտնվում էր «Ա1+»-ի ավտոմեքենայում: Ստորև ներկայացված տեսանյութում երևում է, թե ինչպես են մեքենայից հանում Արմենին և տանում ոստիկանություն: Երեկ կեսգիշերից մինչև առավոտյան 9-ը առանց որևէ բան</p>	

²⁶⁹ Տե՛ս Ակտիվիստն ահազանգում է ոստիկանների կողմից ծեծի ենթարկվելու մասին (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://arm1ur.am/557930/>

²⁷⁰ Տե՛ս Ֆելիքս Հայրապետյանը ցույց տվեց ձեռքերի վնասվածքները: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69289/feliqs-hayrapetya-ny-cuyc-tvec-dzerqeri-v-nasvatsq-neri.html>

²⁷¹ Տե՛ս Խորենացի փողոցից քաղաքացիական հագուստով անձինք մարդ են բերման ենթարկել: Հասանելի է <http://news.am/arm/news/338772.html>

²⁷² Տե՛ս Հանրահավաքից առաջ 3 քաղաքացու թևերը ոլորել, տարել են առանց պետհամարանիշի մեքենայով».
Լևոն Բարսեղյան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/26/720207/>

²⁷³ Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել քաղաքացիներին (Ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

ասելու պահել են Մասիվի ոստիկանական բաժանմունքում, իսկ այժմ տեղափոխում են կալանավայր՝ նշելով, թե Արմենը հասարակական կարգ է խախտել ²⁷⁴ :	
Դեպք 15. Հուլիսի 29-ին բերման է ենթարկվել Անդրիաս Ղուկասյանը, ում դեմ հուլիսի 30-ին քրեական գործ է հարուցվել զանգվածային անկարգություններ հրահրելու մեղադրանքով և ձերբակալել : «Ծնկներն այնպես են ջնջիւել, որ քայլել չի կարողանում: Կոտրվածքների աստիճանը պարզելու համար հիվանդանոց է պետք տանել, բայց պահում են ՁՊՎ-ում ²⁷⁵ :	
Դեպք 16. Հուլիսի 29-ին Սարի թաղից բռնի ուժով բերման է ենթարկվել «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Հովսեփ Խուրշուրյանը ²⁷⁶	
քաղաքացու բռնության կիրառմամբ բերման ենթարկելու փորձ	1
Հուլիսի 18-ին Ազատության հրապարակում «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնությունը քննարկում էր կազմակերպել, որի ժամանակ էլ որոշում կայացրեցին քայլերի կազմակերպել դեպի Էրեբունի վարչական շրջան ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի տարածք: Ոստիկանները, խոչընդոտելով երթին երեք երիտասարդի բռնությամբ նստեցրել են ավտոմեքենաներ և փորձել են տանել բաժանմունք, սակայն ներկաների ճնշման տակ ստիպված են եղել ազատ արձակել: Ոստիկանական մեքենաներից դուրս գալուց հետո երիտասարդների դեմքերին նկատելի էին կապտուկներ: Լրագրողների հարցին նրանցից Արտակ Գևորգյանն ասաց, որ մեքենաների մեջ իրենց հարված էլ են ²⁷⁷ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	2
քաղաքացիներին բերման ենթարկելը	2
Դեպք 1. Հուլիսի 17-ին ոստիկանները երկրորդ անգամ բերման են ենթարկել Շահեն Հարությունյանին: Մինչ Aravot.am-ը փորձում էր Շահեն Հարությունյանից ճշտել, թե ինչու էին նրան բերման ենթարկել, նա ասաց, որ հիմա Ազատության հրապարակում է և ոստիկանները իրեն հետապնդում են: Տարան, անիմաստ ձգձգում և այլն, և այլն, մի կես ժամ պահեցին, բաց թողեցին, հիմա Ազատության հրապարակում եմ ու գալիս են մեր հետևից, ա տարան, ինձ էլ տարան», -ասաց Շահեն Հարությունյանը: Լսվում էր՝ «հանի հեռախոսը, չես հասկանում», իսկ Շահենը հարվածների ցավից՝ «ախ» էր ասում: Քիչ հետո լսվեց՝ «ախ, գլուխս»: Հետո ջուր բերեցին, որ Շահենը խմի: Շահեն ասում էր, որ նույն տեղին էին խփում ինչ 2015 թվականին: Այդ պահին լսվեց նրան բերման ենթարկելու ձայներ, պահանջ այն մասին, որ հեռախոսը հանձնի ոստիկաններին: Չայներից թվում էր, որ նրան ոստիկանական մեքենա են տարել	

²⁷⁴ Տե՛ս «Ընկերոջ տեղափոխում են կալանավայր». ահազանգ (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.1plus.am/1477451.html>

²⁷⁵ Տե՛ս Անդրիաս Ղուկասյանին մահակով ծեծի են ենթարկել. նա քայլել չի կարողանում: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/90645>

²⁷⁶ Տե՛ս Սարի թաղում խուճապ է. մարդկանց բնակարաններից բերման են ենթարկում: Հասանելի է <http://www.1in.am/1969499.html>

²⁷⁷ Տե՛ս Ազատության հրապարակում փորձել են ակտիվիստների բերման ենթարկել: Հասանելի է <http://hraparak.am/?p=117758&l=am/azatutyan+hraparakum+porzel+en+aktivistneri+berman+entarkel>

և հարվածում են, քանի որ Շահենը բղավում էր՝ ախ, նորից նույն տեղին են խիում, լավ էլի, շտապ օգնության մեքենա կանչեք: Ոստիկանական ճնշումները այնքան շարունակվեց մինչև հեռախոսը բռնի ուժով վերցրեցին և լավեց՝ «չես հասկանում կամ էս էֆիո ա գնում, ի՞...» (լավ չի հասկացվում), ու կապն րնդհատվեց ²⁷⁸ :	
Դեպք 2. Հուլիսի 31-ին Կապանում կայացած հանրահավաք-երթի ընթացքում քաղաքացիական հազուտով անձիք, Ռոբերտի խոսքով, Կապանի ոստիկանապետ Արայիկ Դավթյանի հրահանգով, բռնի ուժով, ակցիայի մասնակիցներից պատատները խլելով, տասից ավել կապանցիների նստեցրել են ոստիկանական մեքենան և տարել Կապանի ոստիկանական բաժանմունք ²⁷⁹ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Առողջության իրավունք 	4
պայթուցիկներ կիրառելը	4
Դեպք 1. Հուլիսի 20-ին Աիդա Սարգսյանը աշխատանքից հետո գնացել է Խորենացի փողոց, որտեղ ոստիկանության կիրառած հատուկ գործողության հետևանքով ստացել է բեկորային վնասվածքներ: Աիդայի ոտքերն ամբողջությամբ վնասված են, բժիշկները իրականացրել են վիրահատություն և նշում են, որ, մինչև նա է, կմնան սպիներ ²⁸⁰ :	
Դեպք 2. Հուլիսի 29-ին Ոստիկանների կողմից կիրառված պայթուցիկներից եւ լուսաձայնային նռնակներից խորը այրվածքներ է ստացել Թամարա Մանուկյանը: Նրան երեկ Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցից տեղափոխեցին այրվածքաբանության հիվանդանոց: Մանուկյանն Aravot.am-ին ասաց, որ ինքը մասնակցել է խաղաղ երթին, ապա Սարի թաղում տեղի ունեցած պայթյունների արդյունքում այրվել են ոտքերը, թեւերը, մեջքը ²⁸¹ :	
Դեպք 3. Միջազգային Համագործակցությունը Հանուն Մարդու Իրավունքների կազմակերպության զեկույցի համաձայն, Անի Հարությունյանն էլ, որը ցույցի է գնացել քրոջ և մորաքրոջ հետ, պատմել է, թե ինչպես է խլացել. «Ես խլացել էի, բան չէի լսում, ոտքս վիրավոր էր, ծուխ էր ամեն տեղ ու դժվար էր հասկանալ, թե ուր պետք է գնալ: Մենք վազում էինք՝ ոստիկանները մեր հետևից» ²⁸² :	
Դեպք 4. Մաշկի 16 տոկոսը, այդ թվում՝ դեմքը այրած Թամար Մանուկյանը պատմել է, որ հուլիսի 29-ին նռնակները սուլոցով վեր էին թռնում պարտաձև հետագծով ու հետո ընկնում: Մեկն ընկավ իմ ոտքին, մինչև հասկացա, որ ինձ է	

²⁷⁸ Տե՛ս Ոստիկանները ծեծի ենթարկելով և հեռախոսը խլելով՝ Շահեն Հարությունյանին դարձյալ բերման ենթարկեցին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/17/716295/>: «Ես նոկաուտի մեջ էի, գոռում էի՝ շտապօգնություն կանչեք»: Շահեն Հարությունյանը գլխի վնասվածք է ստացել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716636/>

²⁷⁹ Տե՛ս Երեկ տասից ավելի կապանցիներ ոստիկանական բաժին են բերման ենթարկվել: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69626/erek-tasic-aveli-kapanciner-ostikanakan-bazhin-en-berman-entarkvel.html>

²⁸⁰ Տե՛ս Ոստիկանության կիրառած հատուկ գործողության հետևանքով Աիդայի ոտքերն ամբողջությամբ վնասված են: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/136543>

²⁸¹ Տե՛ս Սարի թաղի պայթյուններից Թամարա Մանուկյանի ձեռքերն ու ոտքերն այրվել են (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/722018/>

²⁸² Տե՛ս «Այրված, ծեծված ու խաբված». Սարի թաղի և Խորենացու դեպքերի մասին զեկույց հրապարակվեց: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/08/733217/>

կալ, արդեն բոցերի մեջ էի: Երբ պայթյունը լսեցի, կարծեցի՝ կփախնեմ, բայց արդեն բոցերի մեջ էի ու չէի կարող շարժվել» ²⁸³ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	3
անգործություն (հավաքի մասնակիցների գույքը վնասելու հետ կապված գործողություններ չձեռնարկելը)	1
Մայիսի 12-ին Կառավարության շենքի մոտ բողոքի ակցիա էին անում «Նորաշեն-2007» սպառողական կոոպերատիվի բնակիչները: Հերմինե Նաղդալյանի ամուսինը, որը կառավարության գործերի կառավարիչ Դավիթ Բեգլարյանն է, կառավարության շենքից դուրս է եկել, մոտեցել ցուցարարներին եւ իլել պաստառը, եւ նկատելով մի պաստառի վրա պատկերված ավանակը, ասել է՝ էշը դուք եք ²⁸⁴ :	
թիրախ կառույցին մոտենալը խոչընդոտելը	2
Դեպք 1. Ապրիլի 21-ին Ռուսաստանի արտգործնախարարի երևանյան այցին ընդառաջ հերթական բողոքի ակցիան է անցկացվել Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան առջև: Ռուսաստանի դեսպանատան դիմաց ոստիկանությունը մեծ թվով ուժեր էր կենտրոնացրել ցուցարարներին այդպես էլ թույլ չտալով անցնել մայրն ու մոտենալ շենքին: Ակցիայի մասնակիցներից միայն մի քանիսը կարողացան դեսպանատան մուտքի մոտ թողնել խորհրդանշական «նվերը» մոլոտովյան կոկտեյլ և արյունոտ կոշիկ՝ որպես «ռուսական սապոգ»-ի խորհրդանիշ ²⁸⁵ :	
Դեպք 2. Մայիսի 13-ին «Մենք ենք տերը մեր երկրի» նախաձեռնությունն էր կազմակերպել: Հավաքավածների թիվը չէր գերազանցում 40-ը: Ոստիկանության ուժերը նկատելիորեն գերազանցում էին ցուցարարներին: Նախազահականի նստավայրի մոտ երթը հանդիպեց ոստիկանների դիմադրությանը: Օրինապահները ցույցի մասնակիցներին թույլ չէին տալիս անցնել փողոցն ու իրենց պահանջները ներկայացնել ²⁸⁶ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
ակցիան խոչընդոտելը	1
Հունվարի 13-ին «Նոր Հայաստան» նախաձեռնությունն ի համերաշխություն դեկտեմբերի 31-ի լույս հունվարի 1-ի գիշերը ոստիկանության կողմից կոտրված տոնածառների եւ դրանց պաշտպանած քաղաքացիների՝ Հին տարվա կապակցությամբ տոնածառներով էր կազմակերպել դեպի Ազատության հրապարակ: Հիմնադիր խորհրդարանի աջակից Սյուզան Սիմոնյանն տեղեկացրել էր, որ	

²⁸³ Տե՛ս «Այրված, ծեծված ու խաբված». Սարի թաղի և Խորենացու դեպքերի մասին զեկույց հրապարակվեց: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/08/733217/>

²⁸⁴ Տե՛ս Հերմինե Նաղդալյանի ամուսինը վիրավորել է ցուցարարներին (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://news.am/arm/news/326770.html>

²⁸⁵ Տե՛ս Ցուցարարներն արյունոտ կոշիկ և մոլոտովյան կոկտեյլ «նվիրեցին» Ռուսաստանի դեսպանատանը: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27689202.html>

²⁸⁶ Տե՛ս Ոստիկանները երթի մասնակից կնոջը վիրավորել են՝ բղավելով «հո-հո-հո» (լուսանկարներ, Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.hraparak.am/?p=111277&l=am/ostikanery+erti+masnakic+knojoy+viravorel+en%D5%9D+bxavelov+ho-ho+lusankarner+tesanyut>

Ազատության հրապարակ մուտք գործելիս ուստիկանները իլել են իրենց աջակիցներից մեկի տոնածառը եւ «ձերբակալել են» ²⁸⁷ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք 	1
հավաքի մասնակիցների պատաստները պատռելը	1
Հունիսի 25-ին Հռոմի Պապի հայաստանյան այցի շրջանակում Հանրապետության հրապարակում կազմակերպված էկոմենիկ արարողության ավարտին մի քանի ակտիվիստներ, այդ թվում՝ «Հիմնադիր խորհրդարանի» եւ «Նոր Հայաստանի» անդամներ, պարզել են «Ազատություն քաղբանտարկյալներին» գրությամբ պատաստ՝ այդ կերպ ցանկանալով Սրբազան քահանայապետի ուշադրությունը հրավիրել քաղբանտարկյալների խնդրի վրա: Ուստիկանները սակայն պատաստները իլել են եւ պատռել ²⁸⁸ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	5
հավաքի մասնակցի նկատմամբ բռնություն կիրառելը	5
Դեպք 1. 2015թ. դեկտեմբերի 31-ի լույս 2016թ. հունվարի 1-ի գիշերը ուստիկանները հրել և գետնին են գցել ընդդիմադիր «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ Սևակ Մանուկյանին: Ըստ ակտիվիստի, ուստիկանները հարվածել են իրեն, հայհոյանքներ հնչեցրել: Ծեծկոտուկի արդյունքում Սևակ Մանուկյանն ուշագնաց է եղել ²⁸⁹ :	
Դեպք 2. Մարտի 24-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի «Ընդդիմության միասնական շտաբ»-ը հաղորդագրություն է տարածել, որով ասվում է, որ 2016 թ. մարտի 24-ին, ժամը 14-ի սահմաններում «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի աջակիցները, «Հայ կանանց ճակատ» նախաձեռնության անդամները և մի խումբ այլ քաղաքացիներ Գևորգ Սաֆարյանին և մյուս քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջով խաղաղ անհնազանդության ակցիա են կատարել Մաշտոցի պողոտայի վրա (Մաշտոցի պուրակի դիմացի հատվածում): Ուստիկանության ծառայողները քաղաքացիների, այդ թվում՝ կանանց, նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժ են գործադրել առանց հաշվի առնելու, որ նրանց ձեռքերը շղթաներով կապած են, ինչի հետևանքով նրանք կարող էին մարմնական վնասվածքներ ստանալ: Ուստիկանները հարվածներ էին հասցնում նրանց և հայհոյանքներ տալիս ²⁹⁰ :	
Դեպք 3. Դավիթ Մանասարյանը և Անդրանիկ Ավանյանը հուլիսի 18-ին գտնվել են Հանրապետական բժշկական կենտրոնում և ենթարկվել են բուժզննության: Aravot.am-ը հետաքրքրվեց հիվանդների առողջական վիճակով, որին ի	

²⁸⁷ Տե՛ս Հայաստանում անհրաժեշտ է նույնիսկ տոնածառները պաշտպանել ուստիկաններից. (Տե՛ս անյուր, ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/01/13/647061/>

²⁸⁸ Տե՛ս «Ուստիկանները իլել ու պատռել են «Ազատություն քաղբանտարկյալներին» գրությամբ պատաստը»։ Դավիթ Մանասարյան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/06/25/708262/>

²⁸⁹ Տե՛ս Ձերբակալվել է «Նոր Հայաստան»-ի անդամ Գևորգ Սաֆարյանը: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27461850.html>

²⁹⁰ Տե՛ս Ռուզաննա Եղնուկյանը, որ պառկած էր ասֆալտին, գլխի շրջանում ստացել է մարմնական վնասվածք: Հասանելի է <http://www.aravot.am/2016/03/24/670948/>

<p>պատասխան Դավիթ Սանասարյանը ասաց, որ գլխի հատվածից մինչև ոտքերը կապտուկներ են: Նրա խոսքերով Անդրանիկին երկու անգամ ավելի են հարվածել ոստիկանները բերման ենթարկելուց հետո: Ոստիկանները նրանց նաև հայհոյել են:</p> <p>Անդրադառնալով Ազատության հրապարակից բերման ենթարկված Դավիթ Սանասարյանին ու Անդրանիկ Ալանյանին, Դանիել Իոաննիսյանն ասաց. «Դավիթին այնքան էին ծեծել, որ ուղեղի ցնցում էր ստացել: Դրանից բացի տղաների պատմելով իրենց ամեն կերպ փորձում էին ստորացնել, ստիպում էին, որ տղաները ոստիկանների կոշիկները համբուրեն, թքում էին տղաների վրա, հայհոյանքների մասին ուղղակի անիմաստ է խոսել, ու դա ողջ ճանապարհին՝ Ազատության հրապարակից մինչև Դավթաշեն»²⁹¹:</p>	
<p>Դեպք 4. Վահագն Ղումաշյանն ասում է. «Հուլիսի 18-ին կանգնած էինք, մասկեքով մտան տարբեր մասերով հրապարակ ու վայրենավարի, անմարդկային ձևերով, իրար վրա նստած, մեկը ոտքն էր դնում մերոնց վրա, այլանդակ ձևով տարան»: «Պառկեցրեցին, սկսեցին ոտքերով հարվածել, ձեռքերներս կապել էին հետևի վրա, այնպես որ շարժվելու հնարավորություն չունենանք, կարտոշկի մեշոնկի պես քացով բռթում էին մեքենաների մեջ: Ներսում խփում էին, ամենաայլանդակ հայոհոյանքները», - հիշում է Վահագնը: Վահագն Ղումաշյանը պատմում է. «Որևէ իրավական աջակցություն չի եղել, սկզբնական հատվածում շատ ագրեսիվ էին, պառկած տեղը բոլորին խփում էին: Արնահոսում էի, ոստիկանը խփելով գալիս էին, ինձ որ տեսավ արյունահոսում եմ ամբողջ հատակը արյուն է, չուզեցավ խփի... բարություն արեց»²⁹²:</p>	
<p>Դեպք 5. Հուլիսի 29-ին Սարի թաղում 15-ամյա դստեր հետ ցույցի գնացած դասախոս Մարատ Յավրումյանի վրա հինգ ոստիկան է հարձակվել, սկսել են կոշիկներով հարվածել գլխին, ինչի հետևանքով Մարատը գլխուղեղի, ոտքերի և ձեռքերի հատվածում վնասվածքներ է ստացել: Մարատի մտերիմներին ինքը պատմել է, որ ոստիկանները «կարծես հաճույք էին ստանում հարվածելուց, զուգահեռ հայհոյում էին»²⁹³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
<p>հավաքի մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելը</p>	1
<p>Հունվարի 27-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատն պաշտոնական հայտարարություն է տարածել, որով ասվում է, որ ոստիկանության կողմից հունվարի 26-ից լույս 27-ի գիշերվա ընթացքում Ազատության հրապարակում անցկացվող հավաքը (շուրջօրյա նստացույցը) խոչընդոտվել է և հավաքին մասնակցող քաղաքացիների նկատմամբ ոստիկանությունը գործադրել է բռնություն ու ապօրինություն և բռնությամբ առգրավել է հրապարակում տեղադրված հովանոցը և այլ իրերը, որոնց միջոցով</p>	

²⁹¹ Տե՛ս Դավիթ Սանասարյանը և Անդրանիկ Ալանյանը ոտքից գլուխ կապտուկների մեջ են: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716892/>; <http://www.aravot.am/2016/07/19/717381/>; <http://www.aravot.am/2016/07/18/716892/>

²⁹² Տե՛ս Պատմում են բռնության ենթարկված ակտիվիստները (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.alplus.am/1473462.html>

²⁹³ Տե՛ս Ոստիկանները կոշիկներով հարվածել են դասախոս, արաբագետ Մարատ Յավրումյանի գլխին: Հասանելի է <http://www.lin.am/1969696.html>

նստացույցի մասնակիցները պատասպարվում էին ծանր եղանակային պայմաններում ²⁹⁴ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	14
Երբը խոչընդոտելը	1
Հուլիսի 18-ին մի խումբ քաղաքացիներ հավաքվել էին Ազատության հրապարակում՝ քննարկելու ինչպես կարելի է լուծել ստեղծված իրավիճակը: «Ոտքի՛ Հայաստան» նախաձեռնության անդամ Դավիթ Սանասարյան խոսում էր բարձրախոսով, երբ նրան իր մոտ հրավիրեց Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը և հայտնեց, որ երթ դեպի Խորենացի փողոց չի կարող տեղի ունենալ: Այնուհետև անհասկանալի պատճառներով ոստիկանության և հավաքված քաղաքացիների միջև բախում տեղի ունեցավ: (տեսանյութ 39:00-ից) ²⁹⁵ :	
Թիրախ կառույցին մոտենալը խոչընդոտելը	1
Ապրիլի 13-ին մի խումբ քաղաքացիներ բողոքի երթ և ակցիա են անցկացրեցրել ընդդեմ Ադրբեյջանին ռուսական զենքի վաճառքի: Ցուցարարները երթով շարժվել են դեպի Հայաստանում Ռուսաստանի դեսպանատուն: Ոստիկանությունը մեծաթիվ ուժեր էր կուտակել օտարերկրյա դեսպանության առջև՝ տևական ժամանակ ցուցարարներին թույլ չտալով մոտենալ շենքին: Ի վերջո ակցիան կայացավ հենց դեսպանատան մայթին, թեև այստեղ էլ պարբերաբար հրմշտոց էր տեղի ունենում ոստիկանների հետ, որոնք պահանջում էին բացել շենքի մուտքը ²⁹⁶ :	
հավաքի մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելը	8
Դեպք 1. Դեպք1. 2015թ. դեկտեմբերի 31-ի լույս 2016թ. հունվարի 1-ի գիշերը ոստիկանները խոչընդոտել են «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի ակցիան, բռնություն գործադրել մասնակիցների նկատմամբ ²⁹⁷ :	
Դեպք 2. Փետրվարի 26-ին Մալաթիա տոնավաճառի մի քանի հարյուր աշխատակիցներ փակել էին «Մալաթիա» տոնավաճառի հարակից Բաֆֆու փողոցը. նրանք բողոքում էին տաղավարների բարձր վարձավճարների դեմ: Ոստիկանները ուժ կիրառելով՝ բացել են երթուղիների հատվածը ²⁹⁸ :	
Դեպք 3. Մարտի 24-ին Մաշտոցի պուրակի դիմաց տեղի ունեցած ակցիայի ժամանակ ականատեսները Hraparak.am-ի թղթակցին պատմել են, որ ոստիկաններից մեկն ակցիայի ժամանակ ոտքով հարվածել է «Հայ կանանց	

²⁹⁴ Տե՛ս Անցած գիշեր ոստիկանությունն Ազատության հրապարակից բերման է ենթարկել 7 քաղաքացու: Հասանելի է <http://galatv.am/hy/news/7-29/>

²⁹⁵ Տե՛ս Ինչ է կատարվում Ազատության հրապարակում (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://arm.lur.am/557701/>: Թե՛ժ բախումներ Ազատության հրապարակում. (Տե՛ս անյութ, ֆոտոռաբ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716808/>

²⁹⁶ Տե՛ս Ցուցարարները ձվեր նետեցին Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան ուղղությամբ: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27673851.html>

²⁹⁷ Տե՛ս Ձերբակալվել է «Նոր Հայաստան»-ի անդամ Գևորգ Սաֆարյանը: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27461850.html>

²⁹⁸ Տե՛ս «Մալաթիա»-ի աշխատակիցները պահանջում են նվազեցնել տաղավարների վարձավճարները: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27575708.html>

ճակատի» անդամ հանդիսացող Կարո Եղնուկյանի կնոջը՝ Ռուզաննա Եղնուկյանին ²⁹⁹ :	
Դեպք 4. Հուլիսի 18-ին Հյուսիսային պողոտայի մոտակայքում ոստիկանները մի երիտասարդ տղայի նկատմամբ այնպիսի ուժ էին գործադրել, որ տղան ուշագնաց վիճակում էր, աչքերը կուլ էին գնում, ընկնում էր ոստիկանների ձեռքերում, իսկ նրանք շարունակում էին քաշքշել: Մի քանի մայրեր սկսեցին անիծել ոստիկաններին ու տղային վերցրեցին ոստիկանների ձեռքից բուժօգնություն ցույց տալու ³⁰⁰ :	
Դեպք 5. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները քաշքշել էին Գյումրու «Ասպարեզ» ակումբի նախագահ Նադեժդա Հակոբյանին, նրա ձեռքերին կապտուկներ կային ³⁰¹ :	
Դեպք 6. Հուլիսի 29-ին Գյումրու թատերական հրապարակում տեղի ունեցող բազմամարդ խաղաղ հանրահավաքի ժամանակ ոստիկանները հարված էլ են անչափահաս աղջկա: Ծեծի ենթարկված աղջիկը Aravot.am-ին պատմել է, որ հանրահավաքի ժամանակ հնչեցրել են «ամոթ» բառը ու այնպիսի մի հարված է ստացել պարանոցին, որ քիչ է մնացել ուշագնաց լինել ³⁰² :	
Դեպք 7. Հուլիսի 29-ին Ոստիկանների բիրտ ու անմարդկային գործողությունների ընթացքում արմունկի ոսկրի վնասվածք էր ստացել Դավիթ Սանասարյանի հայրը ³⁰³ :	
Դեպք 8. Հուլիսի 29-ին Կոնդի, Ֆիրդուսի և Տիգրան Մեծի բնակիչները փորձում էին փակել Տիգրան Մեծ պողոտան: Ինչպես հայտնում է ArmLur.am-ի թղթակիցը, այնտեղ կային նաև մեծ թվով ոստիկաններ, ովքեր թույլ չտվեցին, որպեսզի ճանապարհը փակվի և բնակիչներին հրելով դուրս բերեցին պողոտայի երթևեկելի մասից: Այս ամենից հետո բնակիչները գնացին կառավարության շենքի մոտ, որտեղ նրանց հետ զրուցեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը ³⁰⁴ :	
հավաքի մասնակիցներին քաշքշելը	2
Դեպք 1. Ապրիլի 13-ին մի խումբ քաղաքացիներ ակցիա անցկացրեցին ընդդեմ Ադրբեջանին ռուսական զենքի վաճառքի: Ցուցարարները, այդ թվում Շահեն Հարությունյանը, Ռուսաստանի դեսպանատան մոտ ելույթներ կարդալուց հետո ձվեր նետեցին Դեսպանատան ուղղությամբ, ինչից հետո ոստիկանները	

²⁹⁹ Տե՛ս Ոստիկանը հարվածել է Կարո Եղնուկյանի կնոջը. Հասանելի է

<http://hraparak.am/?p=106134&l=am/ostikany+harvacele+karo+exnukyani+knojoy+tesanyut>

³⁰⁰ Տե՛ս Տղան ոստիկանների ձեռքում ուշագնաց էր լինում՝ ձեռքերն էին ոլորում. բիրտ ուժ՝ Ազատության

հրապարակում (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716879/>

³⁰¹ Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել

քաղաքացիներին (Ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

³⁰² Տե՛ս Լարված վիճակ Գյումրիում. ոստիկանները գողականների հրահրմամբ ծեծելով բերման են ենթարկել

քաղաքացիներին (Ֆոտոշարք): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721813/>

³⁰³ Տե՛ս Արդեն երկրորդ օրն է արգելում են Դավիթ Սանասարյանին սնունդ, հագուստ ու գիրք փոխանցել:

Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/31/722527/>

³⁰⁴ Տե՛ս Կոնդի բնակիչները փորձում էին փակել Տիգրան Մեծ պողոտան. Արման Թաթոյանը հանդիպեց նրանց

(Ֆոտո): Հասանելի է <http://armLur.am/588526/>: Ոստիկանները հրելով փողոցից դուրս բերեցին խաբված

բնակիչներին: Հասանելի է <http://news.am/arm/news/349006.html>

քաշքշելով փորձում էին դեսպանատան մոտից հեռացնել Շահեն Հարությունյանին ³⁰⁵ :	
Դեպք 2. Հունիսի 22-ին Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի մոտ ի պաշտպանություն ժիրայր Մեֆիլյանի բողոքի ակցիա էին անցկացնում մի խումբ մարդիկ: Ակցիայի ժամանակ քաշքշուկ տեղի ունեցավ ոստիկանների և ակցիայի մասնակիցների միջև ³⁰⁶ :	
քաղաքացիների խաղաղ ցույց կազմակերպելը խոչընդոտելը	1
Նոյեմբերի 11-ին կառավարության դիմաց կրկին հավաքվել էին նաիրիտցիները, նրանց միակ պահանջը «Նաիրիտի» վերագործարկումն է և աշխատավարձերի վճարումը: «Վար- չա -պետ», «Նա- ի- րիտ», «վար- չապ- ետ, հան- դի- պում» վանկարկումներով նաիրիտցիները որոշեցին փոքրիկ ակցիա իրականացնել հարակից կենտրոնական փողոցներով: Նրանք, անցնելով Ամիրյան փողոցը, հասնելով Տիգրան Մեծի պողոտա, մոտ 5 րոպե փակեցին պողոտայի երթևեկելի հատվածը: Տեղում էին մեծ թվով ոստիկաններ, նրանք թույլ չէին տալիս, որ նաիրիտցիներին միանան կառավարության դիմաց հավաքված այլ պահանջներ ունեցող քաղաքացիներ: Երբ ոստիկանները փորձում էին ուժով հեռացնել ցուցարարներին, բախում տեղի ունեցավ նրանց միջև, սակայն րոպեներ անց ոստիկաններին հաջողվեց բացել երթևեկելի հատվածը: Նաիրիտցիներն իրենց բողոքի ակցիան շարունակեցին կառավարության դիմաց ³⁰⁷ :	
քաղաքացու առողջությանը վնաս պատճառելը	1
Քանդակագործ Գևորգ Մնացականյանը հուլիսի 29-ին Սարի թաղում ոստիկանության և ցուցարարների միջև բախման զոհերից է՝ այրվել են նրա ոտքերը ³⁰⁸ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	3
քաղաքացիներին բերման ենթարկելը	1
Հուլիսի 21-ին ժամը երեքից սկսած ոստիկանները երկու անգամ զգուշացրեցին Խորենացի փողոցում հավաքվածներին, որ իրենց հավաքն անօրինական է. «Ձեր գործողություններով դուք խախտում եք հասարակական կարգը և բնակիչների անդորրը»: Կոչ էր արվում ազատել տարածքը, ու հավաքը դադարեցնելու համար տրվեց ժամանակ: Նախազգուշացումներից հետո, երբ ցուցարարները չցրվեցին՝ ոստիկանները սկսեցին բերման ենթարկել: Ընդ որում՝	

³⁰⁵ Տե՛ս Բողոքի երթ դեպի Ռուսաստանի դեսպանատուն (ուղիղ): Ըստ Տե՛ս անյութի (Տե՛ս անյութ 1:08-1-10): Հասանելի է <http://168.am/2016/04/13/623349.html>

³⁰⁶ Տե՛ս ժիրայր Մեֆիլյանը երկու ամսով կալանավորվեց (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.1plus.am/1465968.html>

³⁰⁷ Տե՛ս Բախում ոստիկանների և ցուցարարների միջև. նաիրիտցիները փակել էին մայրուղին (Տե՛ս անյութ, ֆոտո): Հասանելի է <http://hraparak.am/?p=128911&l=am/baxumvostikaner+ev+cucararneri+mijev+nairitcinery+pakel+ein+mayruxin+tesanyu+t+foto>

³⁰⁸ Տե՛ս Սարիթաղցի վիրավոր. «Էն որ 1-ին ալիքը չի աշխատում, մի հատ տոզոց ունի, է, այ տենց տոզոցի ձեն եր ընկել գլխիս մեջ»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/04/723571/>

<p>հավաքվածներին հետապնդում էին, բերման ենթարկում անգամ ավտոմեքենաների միջից: Գործողությունները ղեկավարում էր ՀՀ փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը:</p> <p>Բերման ենթարկելիս ոստիկանական պատնեշի ետևում հայհոյանքներ էին լսվում թե՛ ցուցարարների, թե՛ ոստիկանների կողմից: Ֆիզիկական ուժի կիրառման բերման են ենթարկվել նաև Տիգրան Մեծ պողոտան փակած քաղաքացիները³⁰⁹:</p>	
<p>քաղաքացու ն ուժի կիրառմամբ բերման ենթարկելը և սպառնալը</p>	<p>2</p>
<p>Դեպք 1. Հուլիսի 22-ին Գյուլբենկյան փողոցի մերձակայքում բնակվող երիտասարդ մի սղջիկ Մարիամ անունով, որն այս օրերին ակտիվորեն մասնակցել է Խորենացի փողոցում տեղի ունեցող հանրահավաքներին «Հայ կանանց ճակատի» անդամներին տեղեկացրել է, թե այս օրերին ինչպես է ոստիկանների կողմից ծեծի ենթարկվել հանրահավաքներին մասնակցելու համար: Աղջիկը պատմել է, որ ոստիկանները հայհոյանքների տարափի ներքո իրեն տարել են ոստիկանություն³¹⁰:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 28-ին ակտիվիստ Վարդգես Գասպարին Armtimes.com լրատվական կայքին պատմել է նախօրեին իրեն բերման ենթարկելու և ոստիկանական բաժնում պահելու մանրամասները: Նա մասնավորապես ասել է, որ իրեն զցել էին 40-50 ամ մի խուց հիշեցնող ոստիկանական մեքենայի մեջ և երկու տակ ծավառ վիճակում փակել, մինչդեռ նա ողնաշարի վնասվածք ունի: Ոստիկանական բաժնում նրան տարել ու թողել էին զուգարանի կողքը և լվացվելուց հետո ձեռքերները իր վրա էին թափ տալիս: Բաժնում 4 ժամ պահելուց հետո առաջարկեցին լքել ոստիկանության տարածքը, ինչին Վ.Գասպարին ասել է, «ոնց բերել եք, նենց էլ տարեք»: Իրենք տարան ոստիկանության շենքի հետնամասում գտնվող աղբանոցը, դրեցին էլ աղբանոցում:</p> <p>Վ.Գասպարին պատմել է նաև, որ լսել է, թե ինչպես էին այլ քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական բռնություններ կատարում, որ հատկապես տարեց մարդկանց ահաբեկում էին, թե ի՞նչ է, եկել եք ահաբեկիչների՞ն ես սատարում: «Ինձ թվաց, որ այդ զրույցների ընթացքում մի տարեց մարդու ապտակեցին, բայց դե ինչպես գիտեք էլ մարդիկ սովորաբար չեն արտահայտվում»³¹¹:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, ստանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արդար դատաքնության իրավունք 	<p>2</p>
<p>քաղաքացու բերման ենթարկելը</p>	<p>2</p>
<p>Դեպք 1. Հուլիսի 21-ին Ոստիկանության Նոր Նորքի բաժնից շտապ օգնության</p>	

³⁰⁹ Տե՛ս Ոստիկանությունը բերման ենթարկեց տասնյակ քաղաքացիների: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69302/ostikanutyuny-berman-entarkec-tasnyak-cucarar-neri-lusankarner-tesanyut.html> :

Հարյուրից ավելի ցուցարարներ բերման են ենթարկվել: Ոստիկանները բացել են Տիգրան Մեծի փողոցը (ֆոտոշարք էս Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/21/717891/>

³¹⁰ Տե՛ս Խորենացի փողոցում աղջիկ է ծեծվել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/24/719306/>

³¹¹ Տե՛ս Վարդգես Գասպարին բերման ենթարկելուց հետո աղբանոց են տարել (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://armtimes.com/hy/read/90519>

<p>մեքենայով Նոր Նորքի հիվանդանոց տեղափոխեցին երեկ գիշեր բերան ենթարկված մի երիտասարդի՝ Ահարոն Անտոնյանին: Նրան տեղափոխեցին պատգարակով, փորի վրա պառկած: Երիտասարդն անշարժ էր, կիսագիտակից, ուժասպառ վիճակում: Ոստիկանության բաժնի մոտ հավաքված մարդիկ վստահեցնում էին, որ երիտասարդին դաժան ծեծի են ենթարկել ոստիկանությունում: Նրա հարազատներն այնտեղ չէին եւ ամենայն հավանականությամբ տեղյակ չէին, թե ինչ է կատարվում իրենց որդու հետ³¹²:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 29-ին քաղաքացիական հազուստով անձինք գիշերը փորձում էին սբ Գրիգոր Լուսավորիչ բ/կ-ից տանել Դավիթ Սանասարյանին, եւ քաջքշուկի հետեւանքով Սանասարյանն ուշագնաց եղավ: Հայտարարվեց, որ նրան տեղափոխում են վերակենդանացման բաժանմունք: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ Դավիթ Սանասարյանին տեղափոխել են ոչ թե վերակենդանացման բաժանմունք, այլ ոստիկանություն³¹³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության իրավունք ● Արդար դատաքնության իրավունք 	1
<p>քաղաքացու և բռնի ուժի կիրառմամբ բերան ենթարկելը</p>	1
<p>Հայր ու որդի Հովակիմյանները հուլիսի 17-ից չեն կարողանում ոստիկանությունից հետ ստանալ իրենցից առգրավված իրերը՝ ավտոմեքենայի բանալիները, անձնագիրն և փանկային քարտն ու անգամ մոտի գումարը: Նրանք բերան են ենթարկվել էրեքուրու ոստիկանական բաժանմունքի մոտից: Ոստիկաններն իրեն ծեծի ենթարկել նրանց, պատառոտել էին տաբատը, մարմնին էլ դեռ կապտուկներ ու վերքեր կային: Որդու խոսքերով, ոստիկաններն իրենց ուրջ 12 ժամ ազատագրված պահել են, դաժանաբար ծեծել, առգրավել հեռախոսը, էլեկտրոնային կրիչը, տաբատի գոտին ու մեքենայի բանալիները: 35-ամյա Հայրը փորձել է ազատել որդուն ոստիկանների ձեռքից, բայց այդ ընթացքում իրեն էլ են ձեռնաշղթաներ հագցրել: Ոստիկանները նրան հայհոյել են, երբ նա փաստաբան է պահանջել: Սերյոժա Հովակիմյանը պատմեց, որ ոստիկանները ստիպել են գրել, որ դատապարտում է «Սասնա ծռեր» խմբի անդամների գործողությունները³¹⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Արտահայտվելու ազատության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
<p>հավաքի մասնակիցների նկատմամբ բռնություն կիրառելը</p>	1

³¹² Տե՛ս Կիսագիտակից վիճակում ակտիվիստին Ոստիկանության Նոր Նորքի բաժնից տեղափոխեցին հիվանդանոց: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/90023>

³¹³ Տե՛ս Ուշագնաց եղած Սանասարյանին տարել են ոչ թե վերակենդանացման բաժանմունք, այլ ոստիկանություն: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/90612>: Դավիթ Սանասարյանը հիվանդանոցում ուշագնաց եղավ, նրան ոստիկանները փորձում էին բռնի ուժով տանել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721912/>

³¹⁴ Տե՛ս Հայր ու որդի Հովակիմյանները «սխալմամբ» հայտնվել են գրավված ՊՊԾ գնդի տարածքի մոտակայքում: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27870213.html> : ՊՊԾ գունդը գրավելուց հետո ոստիկանները ծեծել են ակտիվիստին: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/90221>

<p>Ապրիլի 21-ին Ռուսաստանի արտգործնախարարի երևանյան այցին ընդառաջ հերթական բողոքի ակցիան է անցկացվել Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան առջև: Շահեն Հարությունյանը փորձել է այրել Պուտինի, Ալիևի և Սարգսյանի նկարները, բայց փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը սաստել է նրան ասելով Շահեն չանես, և նրա ձեռքից իլեց նկարները: Ոստիկանները այդ պահին հարձակվել են Շահենի և նրան շրջապատած մարդկանց վրա և սկսեցին հարվածել նրանց, ձեռքներից իլեց նկարները³¹⁵:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք 	1
<p>ցուցարարների նկատմամբ բռնություն և կիրառելը և առողջությանը վնաս պատճառելը</p>	1
<p>Հուլիսի 18-ին Հյուսիսային պողոտայում խաղաղ ակցիա իրականացող քաղաքացիների տեղաշարժը խոչընդոտելու հետևանքով բախում է տեղի ունեցել ոստիկանների և ցուցարարների միջև: Արդյունքում մի շարք քաղաքացիներ բերման են ենթարկվել ոստիկանություն: Բախման հետևանքով շտապօգնության մեքենայով թիվ մեկ Համալսարանական հիվանդանոց են տեղափոխվել ակցիայի մասնակիցներ Լևոն Զաքարյանը և Արտուշ Զիբուխյանը:</p> <p>Վերջիններիս կողքին գտնվող Արամ Մանուկյանը Lragir-ի հետ զրույցում փոխանցեց, որ Զիբուխյանն ու Զաքարյանը վնասվածքներ ունեն մարմնի տարբեր հատվածներում, ըստ որում Զիբուխյանը վնասվածք ունի նաև դեմքի շրջանում: Արամ Մանուկյանն ընդգծեց, որ արդեն տևական ժամանակ է, ինչ տղաները վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, բայց մինչև այս պահը ոստիկանության որևէ հետաքննիչ չի ժամանել այնտեղ պարզելու դեպքի հանգամանքները³¹⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	2
<p>քաղաքացիներին բերման ենթարկելը</p>	2
<p>«Հիմնադիր խորհրդարան»-ի համակիր Հովհաննես Ղազարյանը հուլիսի 17-ին Խորենացի փողոցից բերման ենթարկվելուց 72 ժամ հետո ազատ է արձակվել: Նա «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին ասել է, որ հուլիսի 17-ին իրեն բերման ենթարկող քաղաքացիական հազուստով ոստիկանները ասել են. «Արի այստեղ ասենք, այ տոնածած», որոնք, ըստ Հովհաննես Ղազարյանի, նկատի են ունեցել Ամանորին Ազատության հրապարակում նրա տոնածածի կերպարը:</p>	

³¹⁵ Տե՛ս Բողոքի ակցիան ընթացավ բազմաթիվ միջադեպերով և բախումներով (լուսանկարներ, Տե՛ս անյութ): Հասանելի է

<http://hraparak.am/?p=109110&l=am/boxoqi+akcian+yntacav+bazmativ+mijadepetrov+e%D6%82+baxumnerov+lusankarne+r+tesanyut+>

³¹⁶ Տե՛ս Հյուսիսային պողոտայում բախումից հետո երկու անձ տեղափոխվել է հիվանդանոց: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/country/view/136119>

<p>Նրա խոսքերով՝ ոստիկանները բերան ենթարկելուց և դրանից հետո ոստիկանները հարվածել են դեմքին, ողնաշարին:</p> <p>«Առավոտ 7:30-ի կողմերը մտա Ազատության հրապարակ, տեսա արդեն մի քանիսին մեքենայի մեջ են գցել: Հեռախոսս հանեցի, որ նկարեմ, մոտիկացավ մի միլիցա ասաց էդ ինձ ես նկարում, արա: Հետո հեռախոսս խփեց գցեց գետնին ջարդեց, մի քանի հարված հասցրեց, գցեցին գետնին էլի շարունակեցին խփել: Քարշ տալով տարան մեքենայի մեջ գցեցին, մի քանի հարված հասցրեցին այնտեղ արդեն ոտքով, ու հետո ամբողջ ճանապարհին հայհոյելով, հատկապես մեջն էլ աղջիկ կար մերոնցից, հասանք տեղ... Հանելուց էլ մի երկու անգամ տվին ակնոցս ընկավ ջարդվեց ու մտցրին ներս... Ասեմ որ ամբողջ ընթացքում ձեռքերներս ձեռնաշղթաներով է եղել».- պատմում է քաղաքացիական ակտիվիստ Հովհաննես Ղազարյանը³¹⁷:</p>	
<p>Հուլիսի 20-ին բերման են ենթարկվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները (Արայիկ Հարությունյանը, Վիլեն Գաբրիելյանը, Տիգրան Քիրիշյանը, Արթուր Ղուկասյանը, Արտաշես Զիլավյանը, Տրդատ Սարգսյանը, Արտյուշ Եղիազարյանը, Արմեն Գալջյանը և Սիրակ Սարգսյանը): Վիլեն Գաբրիելյանը պատմում է, որ հուլիսի 20-ին մոտ 30-40 ոստիկան Խորենացի փողոցից դեպի Փեթակի խաչմերուկի մոտ հարձակվել են իրենց վրա և քաշքշել. «Անձամբ ինձ ու գիտեմ էլի մի քանի հոգու շարքով են անցկացրել, երբ երկու կողմանի ոստիկանները շարվում են, բանակում օրինակ պատժի ժամանակ պետք է քայլել, բայց իմ ձեռքերը ծալած տանում էին, դրա համար հարվածների որոշ մասը չի հասել, բայց հարվածել են ու հիմնականում երիկամներիս: Աջ երիկամիս ցավեր ունեմ, դեռ ստուգման չեմ գնացել: Հետո մեզ այսպես ասած շարտեցին ոստիկականական մեքենան, այդ մեքենայի մեջ մոտ 10-12 մարդ կար, բոլորիս հեռախոսները բառիս բուն իմաստով ապօրինի գողացան»³¹⁸:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Արդար դատաքննության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Իրավաբանական օգնություն և ստանալու իրավունք 	1
<p>քաղաքացու ն բերման ենթարկվելը</p>	1
<p>Հուլիսի 27-ին բերման է ենթարկվել Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը:</p> <p>Գյումրու «Ասպարեզ» ակումբի աշխատակիցները Լևոն Բարսեղյանի ձերբակալության հետ խիստ անհանգստացած են, քանի որ ոչ մի կերպ չեն</p>	

³¹⁷ Տե՛ս Խորենացի փողոցում ոստիկանների կուտակումներ են նկատվում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/24/719329/>: Մեզ չձեռնցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս. քաղաքացիներին ձեռքի են ենթարկել: Հասանելի է <http://hraparak.am/?p=117717&l=am/mez+chcececin+sakay+n+koxqi+senyakic+dzayner+ein+galis+qaxaqacinerin+ceci+en+entarkel>

³¹⁸ Տե՛ս «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ մեկ տասնյակ անդամների բերման են ենթարկել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/21/717936/>: Այնքան գազազած էին ոստիկանները, որ անգամ վերադասների հրամաններին չէին էլ ենթարկվում. Վիլեն Գաբրիելյան: Հասանելի է <http://hraparak.am/?p=118123&l=am/aynqan+gazazac+ein+ostika+neryvor+angam+veradasneri+hramanerin+chein+el+entarkvum+vilen+gabrielyan>

կարողանում ճշտել, թե որ ոստիկանական բաժանմունքում է գտնվում կամ ուր է տեղափոխվել իրենց ղեկավարը: «Ասպարեզ»-ի աշխատակից Եղիշե Շարյանը hrparak.am-ին փոխանցեց, որ շատ են եղել դեպքեր, երբ Լևոն Բարսեղյանին բերման են ենթարկել, սակայն այս անգամ ուրիշ է. «Նա անգամ ոստիկանությունից լուրեր էր տալիս, կապ էր հաստատում մեզ հետ, գրառումներ էր անում ֆեյսբուքյան էջում, հիմա քար լռություն է, անջատված է նրա հեռախոսը, չգիտենք ինչպես, ումից ինֆորմացիա ստանանք», - ասաց նա: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ հաղորդում է ստացվել այն մասին, որ Լևոն Բարսեղյանը բերման է ենթարկվել և նրա դեմ հարուցվել է քրեական հետապնդում առանց օրինական հիմքերի, ինչպես նաև այն մասին, որ խոչընդոտվում է նրա տեսակցությունը փաստաբանի հետ: Լևոն Բարսեղյանին 16 ժամ ջուր չեն տվել խմելու, սննդից զրկել են, անգամ նրան արգելել են գուգարան գնալ, երբ ինքն է խնդրել, այս ամենը Երևանի Շենգավիթի ոստիկանությունում ³¹⁹ :	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	1
քաղաքացու ն բռնության ենթարկվելը	1
Օգոստոսի 12-ին ԳԱԼԱ-ի գրասենյակ էր դիմել գյումրեցի մի կին՝ տիկին Օվսաննա Առաքելյանը: Նա խնդրում էր օգնել իր քրոջ տղային, ով երկկողմանի ծնողազուրկ Արման Առաքելյանն է՝ ծնված 1992թ.-ին: Արման Առաքելյանը գյումրեցի է, վերջին տարին աշխատում էր Երևանում: Տիկին Օվսաննան ասաց, որ Արմանին օգոստոսի 12-ին աշխատանքի վայրից բերման են ենթարկել, քանի որ նա մասնակցել է հուլիսի 23-ին և 24-ին ի պաշտպանություն Մասնա ծոերին անցկացվող բողոքի ցույցերին: Տիկինը պատմեց, որ նախ քրոջ որդուն բերման էին ենթարկել Ազատության հրապարակից: Այդ ժամանակ ոստիկանությունում Արմանին ծեծի էին ենթարկել, պահել մի քանի ժամ, ապա ազատ են արձակել ³²⁰ :	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	2
հավաքի մասնակցին բռնության ենթարկվելը և հայհոյելը	1
Հիմնադիր խորհրդարանի անդամ Կարո Եղնուկյանն ասել է, որ հունիսի 22-ին Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի մոտից բերման ենթարկված Սյուզան Միմոնյանին ոստիկանական մեքենայում նրան վնասվածք պատճառած ոստիկանը հայհոյել է ³²¹ :	
քաղաքացու ուժի կիրառմամբ բերման ենթարկվելը	1
Ոստիկանության գործողություններից հուլիսի 20-ին տուժել է Հարություն	

³¹⁹ Տե՛ս Բերման ենթարկվեց նաև Լևոն Բարսեղյանը (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720302/>: «Լևոն Բարսեղյանին 16 ժամ ջուր չեն տվել, անգամ արգելել են գուգարան գնալ». պնդում են «ԳԱԼԱ» կուսակցությունից: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/29/721337/>

³²⁰ Տե՛ս Արմանին օգոստոսի 12-ին տարել են ոստիկանություն. հարազատները նրանից ոչ մի լուր չունեն: Հասանելի է <http://galatv.am/hy/news/12-23/>

³²¹ Տե՛ս Ոստիկանը վնասել է Սյուզան Միմոնյանի դատարանը. հայհոյել է նրան: Հասանելի է <http://hrparak.am/?p=115347&l=am/ostikany+vna+e+syuzan+simonyani+da+staky+hay+hoyel+e+nran%20%D5%A1%D5%BC%2024.06.2016>

<p>Աղլամազյանը: Ասում է՝ ոստիկաններն այնպես են ծեծել, որ տնից դուրս գալ չի կարողանում, հանցագործության մասին թեև հաղորդում ներկայացրել է, սակայն հույս չունի որ մեղավորները պատասխանատվության կկանչվեն:</p> <p>«Ես Արաբկիրի բաժնում եղել եմ երեկ 4:30-ից 5-ի կողմերը և մինչև երեկոյան 8-ը այնտեղ եմ եղել: Այնտեղ է պահանջում էի, որպեսզի բժիշկ գա, որովհետև չէի կարողանում քայլել: Հետո եկա տուն՝ նոր գանգեցի շտապօգնության մեքենային եկան- նայեցին, ասացին՝ սայջարդ է եղել», - պատմում է Աղլամազյանը³²²:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Բնակարանի անձեռնմխելիության իրավունք 	1
<p>քաղաքացու նկատմամբ բռնություն և կիրառելը</p>	1
<p>Միջազգային Համագործակցությունը Հանուն Մարդու Իրավունքների կազմակերպության զեկույցում տեղ են գտել Սարի թաղի բնակիչների նկատմամբ բռնությունները, թե ինչպես են մտել տները և ահաբեկել, երեխաների ներկայությամբ ինչպես են ոստիկանները հորը ծեծել նրանց աչքի առաջ. «Մի երեխա այնքան է վախեցել ու այնքան խորն է թաքնվել, որ չէին կարողանում գտնել»³²³:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք ● Իրավական պաշտպանություն արդյունավետ միջոցների իրավունք 	1
<p>քաղաքացու և բռնության ենթարկելը</p>	1
<p>Դվին Իսանյանսը հուլիսյան բողոքի ակցիաների ոչ շատ ակտիվ մասնակից էր, պատմում է, որ հուլիսի 29-ին իրեն ծեծի են ենթարկել, ոստիկանները և հրամայել են հանձնել հեռախոսը: iphone 6 մակնիշի թանկարժեք հեռախոսը Դվինը մինչև օրս չի գտնում: Նրան խոստացել են, որ Արաբկիրի ոստիկանությունում այն կտրամադրվի, սակայն այդպես էլ չեն վերադարձրել: Ոստիկանությունն ընդունում է, որ կորել է հեռախոսը, սակայն քայլեր չի ձեռնարկում գործը բացահայտելու համար՝ նշելով, որ ոստիկանությունը չի կրում պատասխանատվություն, մեղավորը ոստիկանն է, ոչ ամբողջ ոստիկանությունը, երբ գտնեն ոստիկանին, այդ ժամանակ կամ կփոխհատուցեն, կամ կվերադարձնեն հեռախոսը³²⁴:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
<p>լրագրողի նկատմամբ բռնություն և կիրառելը</p>	1
<p>Հուլիսի 17-ին, Ազատության հրապարակում ընթացող հավաքը լուսաբանող «4news.am» կայքի թղթակից Արթուր Հայրապետյանին լկտիաբար հայհոյող և</p>	

³²² Տե՛ս Քաղաքացիների և կատմամբ ոստիկանների բռնությունների առնչությամբ առայժմ քրեական գործ չի հարուցվել: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27873706.html>

³²³ Տե՛ս «Այրված, ծեծված ու խաբված». Մարի թաղի և Խորենացու դեպքերի մասին զեկույց հրապարակվեց: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/08/733217/>

³²⁴ Տե՛ս Ինչ գին ունի ոստիկանի օրինական պահանջին չենթարկվելը: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/right/view/142685>

<p>նսքով հարվածող ոստիկանը հերքում էր, որ ապօրինի ուժ չի կիրառում լրագրողի նկատմամբ՝ զուգահեռ շարունակելով բռնությունը: Առգրավվում է լրագրողի հեռախոսը, որում առկա է տեսանյութ՝ «թե ինչպես են ոստիկանները մի տարեց մարդու թևերը ոլորելով նստեցնում մեքենան»: Այնուհետև ոստիկանության բաժնում հեռախոսի մեջի ողջ ինֆորմացիան ջնջում և վնասված վիճակում այն վերադարձնում են լրագրողին³²⁵:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից գերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք ● Առողջության իրավունք 	1
<p>Լրագրողի առողջությանը վնաս պատճառելը</p>	1
<p>Հուլիսի 29-ին տուժել են Ա1+-ի լրագրող Ռոբերտ Անանյանը և օպերատոր Տիգրան Բադայանը: Նրանք տուժել են պայթուցիկներից: Այնուհետև Սարի թաղի բնակիչներից մեկն առաջարկել է տեղափոխել հիվանդանոց: «Ճանապարհին ոստիկանները կանգնեցրին քաղաքացու մեքենան, թույլ չտվեցին առաջանալ, չնայած հայտարարեցինք, որ լրագրողներ ենք, հիվանդանոց ենք գնում: Բռնի ուժի կիրառմամբ, մահակների գործադրմամբ նրանց հանել են մեքենայից, պոկել լրագրողական բեյջերը³²⁶:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից գերծ մնալու իրավունք ● Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն և իրականացնելու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	8
<p>Լրագրողին բռնության ենթարկելը և գույքը վնասելը</p>	8
<p>Դեպք 1. Հուլիսի 19-ին ժամը 21:00-ի սահմաններում Սարի թաղի տարածքում ծեծի է ենթարկվել Միքայել Նազարյանը: Միքայելը նշում է, որ այնտեղ էր գնացել որպես լրագրող, քանի որ 10 օր փորձաշրջան է անցնում lurer.com կայքում: Ոստիկանները հարձակվեցին մեզ վրա: Սկսեցին ծեծել՝ առանց որևէ բան ասելու: Քիչ հեռվից մի վիրավոր ոստիկան սկսեց գոռալ, որ մենք կապ չունենք էդ բախումների հետ և որ մեզ չծեծեն: Ինձ էդպես ծեծված թողեցին ու գնացին», - պատմում է Միքայելը: Ծեծի ընթացքում կորել է Միքայել Նազարյանի հեռախոսը, որում առկա էին Սարի թաղի դեպքերից տեսանյութեր ու լուսանկարներ: Լրագրողը համոզված է, որ ծեծի ընթացքում հեռախոսը վերցրել է ոստիկաններից մեկը³²⁷:</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 21-ին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում, օրինական մասնագիտական գործունեությունն իրականացնելիս մի քանի անձանց կողմից ծեծի է ենթարկվել «Iravaban.net» կայքի լրագրող Գեորգ Թոսունյանը: Մասնավորապես, լրագրողը նկարահանել է դրվագ, երբ միմյանց վրա քարեր են նետել ակտիվիստները եւ մի խումբ քաղաքացիական հազուստով անձինք, Գեորգ Թոսունյանի ենթադրությամբ՝ ոստիկաններ: Վերջիններս, նկատելով, որ</p>	

³²⁵ Տե՛ս Այն մասին թե ինչպես լրագրող Արթուր Հայրապետյանը ոստիկանների կողմից ենթարկվեց բռնության: Հասանելի է <http://4news.am/2016/07/այն-մասին-թե-ինչպես-լրագրող-արթուր-հա/>

³²⁶ Տե՛ս Ոստիկանական մահակը գործադրվեց լրագրողների նկատմամբ (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1477321.html>: Ուղիղ. Սարիթաղում պայթյուններ են. ծեծել են լրագրողների (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1477119.html>

³²⁷ Տե՛ս Միքայել Նազարյան. «Ոստիկանները վերադարձան ու հարձակվեցին մեզ վրա»: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69281/miqayel-nazaryan-ostikannery-veradardzan-u-hardzakvecin-mez-vra.html>

<p>իրենց նկարահանում են, հարձակվել են լրագրողի վրա, քաշքշել են նրան, բազմաթիվ հարվածներ հասցրել, այնուհետև բռնությամբ վերցրել տեսախցիկի հիշողության քարտը: Ու կարեւորը՝ իրենք ասացին՝ չգաս ակցիաներ լուսաբանելու, թե չէ էլի քեզ կծեծենք. ակտիվիստը նման բան չէր ասի: Իմ կարծիքով՝ նման բան միայն ոստիկանը կասեր³²⁸:</p>	
<p>Դեպք 3. Հուլիսի 29-ին Դավիթ Հարությունյանին ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել, ջարդել նրա տեսախցիկը, նա պայթուցիկի պայթյունից ստացել է ոտքի վնասվածք³²⁹:</p>	
<p>Դեպք 4. Հուլիսի 29-ին Սարի թաղում ոստիկանության և ցուցարարների բախումը լուսաբանող լրագրողներ Կարլեն Ավանյանը և Հովհաննես Մովսիսյանը և օպերատոր Գարիկ Հարությունյանը հարձակման են ենթարկվել քաղաքացիական հագուստով անձանց կողմից: Տեղի ունեցածի հետևանքով խոչընդոտվել է «Ազատության» աշխատանքը, Սարի թաղից ուղիղ հեռարձակումը դադարեցվել է³³⁰:</p>	
<p>Դեպք 5. Հուլիսի 29-ին Lragir.am-ի օպերատոր Մարութ Վանյանի ոտքին հարվածել են ոստիկանական դուբինկայով: Նրա տեսախցիկը քաղաքացիական հագուստով ոստիկանները կոտրել են³³¹:</p>	
<p>Դեպք 6. Հուլիսի 29-ին Սարի թաղում ցուցարարներին ցրելիս կոտրել, ապա հափշտակել են NEWS.am-ի թղթակցի տեսախցիկը: Քաղաքացիական հագուստով անձինք, որոնք դուրս են եկել ոստիկանների թիկունքից եւ զինված էին ոստիկանական մահակներով, նաեւ փորձել են ուժ կիրառել NEWS.am-ի թղթակցի նկատմամբ³³²:</p>	
<p>Դեպք 7. Հուլիսի 29-ին Սարի թաղում իրադարձությունները լուսաբանելու ժամանակ քաղաքացիական հագուստով անհայտ անձանց կողմից ծեծի են ենթարկվել «Արմենիա» հեռուստաընկերության ԺԱՄԸ լրատվականի թղթակից Ադվան Ասոյանը և օպերատոր Ալբերտ Գալստյանը: Անհայտ անձինք իլել են նաև տեսախցիկն ու միկրոֆոնը և կոտրել³³³:</p>	
<p>Դեպք 8. Հուլիսի 29-ին ոստիկանները հետապնդել են լրագրողներին: ArmLur.am-ի լրագրողները Սարի թաղից հայտնեցին, որ իրենց ինչ-որ անհայտ մարդիկ են հետապնդում: Մեր թղթակիցների՝ լրագրող Նաիրա Հովհաննիսյանի, օպերատորներ Հովսեփ Հովսեփյանի և Նարեկ Սարգսյանի փոխանցմամբ՝</p>	

³²⁸ Տե՛ս Գեորգ Թոմունյան. «Ասացին՝ չգաս ակցիաներ լուսաբանելու, թե չէ էլի քեզ կծեծենք»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/21/718115/>

³²⁹ Տե՛ս Սարի թաղում վիրավորվել են «Առաջին լրատվական»-ի լրագրող Մարիամ Գրիգորյանն ու օպերատոր Դավիթ Հարությունյանը: Հասանելի է <http://www.1in.am/1969400.html>

³³⁰ Տե՛ս Սարի թաղում հարձակման են ենթարկվել «Ազատության» լրագրողները: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27888947.html>

³³¹ Տե՛ս Ոստիկանական մահակը գործադրվեց լրագրողների նկատմամբ (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.a1plus.am/1477321.html>: Lragir.am-ի և A1+-ի լրագրողները պատմում են իրենց հանդեպ բռնությունների մասին: Հասանելի է <http://www.lragir.am/index/arm/0/country/view/137039>

³³² Տե՛ս Սարի թաղում կոտրել եւ հափշտակել են NEWS.am-ի թղթակցի Տե՛ս ախցիկը: Հասանելի է <http://news.am/arm/news/339649.html>

³³³ Տե՛ս Սարի թաղում իրադարձությունները լուսաբանելիս անհայտ անձանց կողմից ծեծի են ենթարկվել «Արմենիա» չԸ թղթակիցն ու օպերատորը: Հասանելի է <http://168.am/2016/07/30/668427.html>

նրանք զինված են և փորձում են վերցնել նկարահանող սարքերը: Լրագրողների հետ էր նաև պատգամավոր Զարուհի Փոստանջյանը ³³⁴ :	
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	5
քաղաքացիներին բերման ենթարկելը	5
Դեպք 1. Ըստ ոստիկանության հաղորդագրության, հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը բերման է ենթարկվել 136 քաղաքացի ³³⁵ :	
Դեպք 2. Փաստաբանների պալատի անդամ Հայարփի Սարգսյանը հուլիսի 21-ին գրեթե ողջ օրը եղել է Շենգավիթի ոստիկանական բաժանմունքում: Նա հայտնում է, որ բազմաթիվ քաղաքացիներ, որոնց բերման էին ենթարկել Խորենացի փողոցից հուլիսի 21-ին առավոտյան 04:50-ին (այդպես է արձանագրվել ոստիկանական բաժանմունքում-Հ. Սարգսյան) պահվել են երեք ժամից ավել: Փաստաբանի տեղեկություններով՝ Շենգավիթի ոստիկանական բաժանմունքում բերման ենթարկված 24 մարդ է եղել: «Ըստ էության, երբ նրանց բերման են ենթարկել 04:50 րոպե, քրեադատավարական կարգ գոյություն ունի՝ եթե բերման ենթարկելուց երեք ժամն անցնում է, կամ պետք է ձերբակալվի կամ ազատ արձակվի: Սակայն այս պարագայում նման կերպ չեն վարվել՝ պահել են ավելի, քան պետք է պահեին և հետո են ձերբակալման մասին որոշում կայացրել: Այսինքն՝ ձերբակալման որոշումն ապօրինի է», - ասում է փաստաբանը: Փաստաբանների պալատի անդամ Հայարփի Սարգսյանի տեղեկություններով՝ Շենգավիթի ոստիկանական բաժանմունքում բերման ենթարկված 24 մարդ է եղել ³³⁶ :	
Դեպք 3. Հուլիսի 27-ին մի քաղաքացի բարձրախոսը վերցրեց ու հայտարարեց, որ «Երեկ ինձ իմ 4 երեխաների հետ բերման են ենթարկել ոստիկանություն» ³³⁷ :	
Դեպք 4. Հուլիսի 27-ին բերման է ենթարկվել «Նոր քաղաքական մշակույթ» կուսակցության նախագահ Անի Զախարյանը ³³⁸ :	
Դեպք 5. Ազատության հրապարակում ի աջակցություն «Սասնա ծռեր»-ի հանրահավաքներից մեկի ժամանակ ելույթ ունեցած ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագիտության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող Վարդիթեր Մաղաթյանին օգոստոսի 13-ին տեղափոխել են Ավանի հոգեկան առողջության կենտրոն, որտեղից օգոստոսի 19-ին դուրս է եկել դատավորի թույլտվությամբ ³³⁹ :	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ	1

³³⁴ Տե՛ս ArmLur.am-ի լրագրողներին Սարի թաղում զինված անհայտ մարդիկ են հետապնդում: Հասանելի է <http://armlur.am/562192/>

³³⁵ Տե՛ս Պարզաբանում: Հասանելի է <http://www.police.am/news/view/%D5%BA%D5%A1%D6%80%D5%A6%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4210716.html>

³³⁶ Տե՛ս Փաստաբան Հ. Սարգսյան. «Քաղաքացիների ձերբակալման որոշումն ապօրինի է»: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69340/pastaban-h-sargsyan-qa-xaqacineri-dzerbaka-lman-oro-shum-n-aporini-e.html>

³³⁷ Տե՛ս Քաղաքացուն իր 4 երեխաների հետ բերման են ենթարկել ոստիկանություն: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720801/>

³³⁸ Տե՛ս Մի աղջիկ ոստիկաններին՝ «Զգվում եմ ձեզնից, ինձ մի՛ կպեք»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/27/720736/>

³³⁹ Տե՛ս Ազատության հրապարակում ելույթ ունեցողներից մեկին տեղափոխել էին հոգեկան առողջության կենտրոն: Հասանելի է <http://hraparak.am/?p=123920&l=am/azatutyam+hraparakum+eluytvoinecoxnernic+mekin+te-xapoxel+ein+hogekan+aroxjutyam+kentron>

մնալու իրավունք	
պատգամավորին հայ հոյեղը	1
Խորենացի փողոցում, մինչև ոստիկանների հետ բախումը փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը սեռական բնույթի հայ հոյեղներ էր տեղացել Ժառանգության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի հասցեին ³⁴⁰ :	
Առողջության իրավունք	1
քաղաքացու առողջությանը վնաս պատճառելը	1
«Որդան կարմիր» խումբն իր ՖԲ էջով տարածել է հետևյալ տեղեկությունը. Հուլիսի 20-ի երեկոյան Խորենացու փողոցի վրա ոստիկանների անհամաչափ ուժ կիրառելու ժամանակ Որդան Կարմիրի վոկալիստ Վահան Պողոսյանը լուսաձայնային նոնակի պայթյունի հետևանքով լուրջ լսողական վնասվածք է ստացել ³⁴¹ :	
Արտահայտվելու ազատության իրավունք	1
քաղաքացու առջև պատ կազմելը	1
Հունիսի 23-ին քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարին նստել է Դեմիրճյան-Բաղրամյան խաչմերուկին 2008 թվականի Մարտի 1-ին սպանվածների նկարներով պաստառը ձեռքին: Ակցիայի ընթացքում 4 ոստիկաններ կանգնել էին Գասպարիի դիմաց: Երբ Մերժ Սարգսյանի մեքենաների շարայունն անցել է Դեմիրճյան փողոցով, ոստիկաններն անմիջապես հեռացել են Գասպարիի դիմացից՝ նրան մենակ թողնելով ³⁴² :	
Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք	1
հավաքի մասնակիցների կողմից տոնածառ տեղադրելու և խոչընդոտելը	1
2015թ. դեկտեմբերի 31-ի լույս 2016թ. հունվարի 1-ի գիշերը «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատը ակցիա էր անցկացնում Ազատության հրապարակում և ցանկանում էր տոնածառ բերել հրապարակ, սակայն ոստիկանությունը թույլ չէր տալիս և արդյունքում, ինչպես տեղեկացնում է «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ, «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը, ոստիկանները կտորկտոր են արել ակցիայի մասնակիցների տոնածառը: (Հարկ է արձանագրել, որ թեև ոստիկանությունը կատարում էր քաղաքապետարանի որոշումը, այնուամենայնիվ քաղաքապետարանի որոշումն իրավափ չէ, հետևաբար ոստիկանության գործողությունները դատում են ոչ օրինաչափ) ³⁴³ :	
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	3
լրագրողի գործունեությունը խոչընդոտելը	3

³⁴⁰ Տե՛ս «Լևոն Երանոսյանը հայիոյեց ու ասեց՝ մի նոնակ նետեք լրագրողների վրա, մի նոնակ էլ իմ կողմը նետեցին» Փոստանջյան: Հասանելի է <http://www.aravot.am/2016/08/08/724582/>

³⁴¹ Տե՛ս «Որդան կարմիր» վոկալիստը լուրջ լսողական վնասվածք է ստացել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/22/718417/>

³⁴² Տե՛ս Մերժ Սարգսյանը չՏե՛ս ա՛վ իրեն մարդասպան անվանողին (Տե՛ս ԱՆՅՈՒԹ): Հասանելի է <http://www.epress.am/2016/06/24/%D5%BD%D5%A5%D6%80%D5%AA-%D5%BD%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B9%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%9E%D5%BE-%D5%AB%D6%80%D5%A5%D5%B6-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1.html>

³⁴³ Տե՛ս Տոնածառը՝ Ազատության հրապարակում բախումների և ձերբակալությունների պատճառ: <http://www.aravot.am/2016/01/01/644455/>

Դեպք 1. Փետրվարի 1-ին տասնյակ ակտիվիստներ Գլխավոր դատախազության դիմաց պահանջում էին ազատ արձակել տոնածառ տեղադրելու ակցիայից հետո ազատագրված Գևորգ Սաֆարյանին: Ակցիայի ընթացքում մասնակիցները հորդորում էին, որ իրենց մոտենա եւ պահանջագիրը վերցնի դատախազության լիազոր ներկայացուցիչը, սակայն որեւէ մեկը նրանց այդպես էլ չմոտեցավ: Մոտ մեկ ժամ սպասելուց հետո «Նոր Հայաստանի» ներկայացուցիչ Գագիկ Եղիազարյանն անձամբ որոշեց հանձնել փաստաթուղթը: Նրան թույլ տվեցին ներս մտնել, սակայն առանց լրագրողների ³⁴⁴ :	
Դեպք 2. Մարտի 13-ին ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատան մոտ ընդդեմ Ադրբեյջանին ռուսական զենքի վաճառքի անցկացվող ակցիայի ժամանակ ոստիկանները պատ էին կազմել և թույլ չէին տալիս լրագրողների նկարահանել ցուցարարների գործողությունները ³⁴⁵ :	
Դեպք 3. Հուլիսի 29-ին «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցում հավաքված լրագրողներին թույլ չեն տվել մոտենալ Խորենացի եւ Սարի թաղ փողոցներում ոստիկանների իրականացրած հատուկ գործողությունների արդյունքում տուժած քաղաքացիներին եւ զրուցել նրանց հետ ³⁴⁶ :	
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	17
Թիրախ կառույցին մոտենալը խոչընդոտելը	8
Դեպք 1. Հունվարի 21-ին նախագահականի մոտ ծառայություն իրականացնող ոստիկանները թույլ չեն տվել Հյուսիսային պողոտայի խաբված բնակիչներին բողոքի ակցիա անցկացնել Նախագահական նստավայրի դիմաց ³⁴⁷ : (տեսանյութ 13:35)	
Դեպք 2. Փետրվարի 1-ին տասնյակ ակտիվիստներ Գլխավոր դատախազության դիմաց պահանջում էին ազատ արձակել տոնածառ տեղադրելու ակցիայից հետո ազատագրված Գևորգ Սաֆարյանին: Ոստիկանները, որ թվով ցուցարարներից մի քանի անգամ ավելի էին, պատնեշ էին կազմել և թույլ չէին տալիս անցնել դատախազության մայր ³⁴⁸ :	
Դեպք 3. Փետրվարի 22-ին մի խումբ ակտիվիստներ «Գնում ենք Բ-26» անունով ակցիա են կազմակերպել նախագահական նստավայրի դիմաց: Նրանք պահանջում են ազատ արձակել Գևորգ Սաֆարյանին եւ Վարդգես Գասպարիին: Ակցիայի մասնակիցները Բաղրամյան-Պռոշյան խաչմերուկով անցել են նախագահականի մայր, սակայն ոստիկանությունը թույլ չի տվել նրանց Մեծ Բրիտանիայի դեսպանատանի առջեւից շարժվել դեպի նախագահական նստավայր: Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանն	

³⁴⁴ Տե՛ս «Նոր Հայաստանի» անդամները պահանջագիր հանձնեցին դատախազությանը (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.a1plus.am/1432626.html>

³⁴⁵ Տե՛ս «Թույլ չենք տա ոչ մի տարածքի հանձնում, թույլ չենք տա ռուսական խաղաղապահ ուժեր, դրանք պերմյակովներ են: Թաթերդ հեռու Արցախից». բողոքի երթ՝ ընդդեմ ՌԴ վարած քաղաքականության: Դեպքն արձանագրվել է ըստ Տե՛ս անյութի (Տե՛ս անյութ 6¹⁸-6⁴⁰)
Հասանելի է <http://168.am/2016/04/13/623405.html>:

³⁴⁶ Տե՛ս «Գրիգոր Լուսավորիչում» երեխա չկա. վնասվողը նրանց հայրն է եղել (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/30/721956/>

³⁴⁷ Տե՛ս Զոհված զինծառայողների ծնողներին թույլ չեն տվել կանգնել Բաղրամյան 26-ի մայրին (Տե՛ս անյութ): Դեպքն արձանագրվել է ըստ Տե՛ս անյութի (Տե՛ս անյութ 13:35): Հասանելի է <http://www.a1plus.am/1430433.html>

³⁴⁸ Տե՛ս Գևորգ Սաֆարյանի աջակիցները ակցիա անցկացրին դատախազության դիմաց: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27525103.html>

առաջարկել է մի քանի հոգով գնալ նախագահականի նամակների բաժին: Ակտիվիստները չեն ընդունել այդ առաջարկը ³⁴⁹ :	
Դեպք 4. Փետրվարի 25-ին մի խումբ ակտիվիստներ Նախագահական նստավայրի դիմաց բողոքի ակցիա էին կազմակերպել՝ ի պաշտպանություն քաղբանտարկյալների: Ակցիայի մասնակիցներից մեկը Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանին ասել է, որ ցանկանում են իջնել նախագահականի դիմացով, սակայն ոստիկանները թույլ չեն տվել ³⁵⁰ :	
Դեպք 5. Հունիսի 9-ին 2010 թվականին խաղաղ պայմաններում զոհված զինվորների՝ Արթուր Ղազարյանի և Վալերի Մուրադյանի մայրերը՝ Իրինա Ղազարյանը և Նանա Մուրադյանը և մահացած Արման Մուրադյանի հայրը՝ Հովսեփ Մուրադյանը բողոքի ակցիա են անցկացրել նախագահականի դարպասներից քիչ վերև: Ոստիկաններն 10:00-ից մոտ երկու ժամ կիսով չափ փակած են պահել Բաղրամյան պողոտան և նախագահականին հարող մայթը ու թույլ չեն տվել զոհված զինվորների ծնողներին կանգնել նախագահականի դարպասների մոտ: Ոստիկանները պատճառաբանել են, թե ՀՀ նախագահի նստավայր է ժամանել հունիսի 7-ին պաշտոնական այցով Հայաստան եկած Չեխիայի նախագահ Միլոշ Ջեմանը: Ծնողների բողոքներն արդյունք չեն տվել. երբ նրանք անցել են նախագահականի դիմացի մայթ, ոստիկանները նրանց առջև պատ են կազմել՝ թույլ չտալով նայել, թե ինչ է կատարվում նախագահականի դարպասներից այն կողմ ³⁵¹ :	
Դեպք 6. Հունիսի 30-ին ՀՀ նախագահի նստավայրի մոտ խաղաղ պայմաններում մահացած զինվորների ծնողներին իրավապահները կրկին թույլ չեն տվել մոտենալ նախագահականի դարպասին, չնայած, օրինակ, նախորդ երկու դեպքերում ծնողներին թույլ էին տվել պաստառներով կանգնել դարպասների դիմաց ³⁵² :	
Դեպք 7. Երևանում ընթացող եռագույններով երթի մասնակիցներին սեպտեմբերի 21-ին ոստիկանները թույլ չտվեցին մոտենալ ՀՀ-ում ՌԴ դեսպանատան շենքին ³⁵³ :	
Դեպք 8. Դեկտեմբերի 10-ին «Հիմնադիր խորհրդարանի» անդամները Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը նշեցին Պահանջատիրական երթով: Երբ քայլերթի մասնակիցները անցան Մաշտոցի պողոտայով և մտան	

³⁴⁹ Տե՛ս «Մարգարյան Սերժը շարունակում է իր քաղաքականությունը». ակցիա նախագահականի դիմաց: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/80057>

³⁵⁰ Տե՛ս Օսիպյանը՝ ակտիվիստին. «Արտառոցը»-ը դուք եք ուզում ստեղծել»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/02/25/661461/>

³⁵¹ Տե՛ս Չեխիայի նախագահը չպետք է Տե՛ս նի զոհված զինվորների ծնողներին: Հասանելի է <http://www.epress.am/2016/06/09/%D5%B9%D5%A5%D5%AD%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0%D5%A8-%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BF%D6%84-%D5%A7-%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B6%D5%AB-%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE.html>

³⁵² Տե՛ս Սերժ Մարգարյանի ծննդյան օրը սևազգեստ մայրերին արգելեցին մոտենալ նախագահականի դարպասին: Հասանելի է <http://www.epress.am/2016/06/30/%D5%BD%D5%A5%D6%80%D5%AA-%D5%BD%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AE%D5%B6%D5%B6%D5%A4%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%85%D6%80%D5%A8-%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4.html>

³⁵³ Տե՛ս Ոստիկանները ցուցարարներին թույլ չտվեցին մոտենալ ՀՀ-ում ՌԴ դեսպանատան շենքին: Հասանելի է <http://news.am/arm/news/347560.html>

<p>Գրիգոր Լուսավորիչ փողոց, ոստիկանները նրանց արգելեցին անցնել Ռուսաստանի դեսպանատան կողքով: Իսկ արդեն «Դատապարտյալների հիվանդանոցի» մոտ կենդանի պատ կազմած ոստիկանները նրանց թույլ չտվեցին մոտենալ շենքին: Երբը կանգ առավ, հերթով հնչեցին «Սասնա ծռերի» այն տղաների անուները, որոնք այդ պահին գտնվում էին հիվանդանոցում³⁵⁴:</p>	
<p>հավաքի մասնակիցներին ակցիա իրականացնելը խոչընդոտելը</p>	7
<p>Դեպք 1. Փետրվարի 22-ին Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի դիմաց հավաքված «Նոր Հայաստան» ճակատի անդամներին ոստիկանները թույլ չեն տվել բողոքի ակցիա անցկացնել: Ցուցարարները քրեակատարողական հիմնարկի մոտ հավաքվել էին ի պաշտպանություն հունվարի մեկից անազատության մեջ գտնվող քաղաքացիական ակտիվիստ Գեորգ Սաֆարյանի³⁵⁵:</p> <p>(Հարկ է արձանագրել, որ ոստիկանությունը չի հիմնավորել ակցիան թույլ չտալու իր գործողությունները)</p>	
<p>Դեպք 2. Հուլիսի 28-ին ոստիկանությունը արգելում էր Ազատության հրապարակում հավաքված ցուցարարներին երթով շարժվել Բաղրամյան՝ պատճառաբանելով, ար այն անօրինական է: Ցուցարարները, այնուամենայնիվ, երթով շարժվեցին դեպի Բաղրամյան պողոտա, սակայն ոստիկանական պատնեշին հանդիպելով, կանգ առան Ֆրանսիայի հրապարակում, այնուհետև վերադարձան Ազատության հրապարակ³⁵⁶:</p>	
<p>Դեպք 3. Օգոստոսի 23-ին «Սասնա ծռեր» խմբի աջակիցները ՄԻՊ գրասենյակից մոտից երթով շարժվելով հասան «Դատապարտյալների հիվանդանոցի» մոտ: NEWS.am-ի թղթակիցն հաղորդում է, որ դեպի «Դատապարտյալների հիվանդանոցի» շենք տանող ճանապարհին ոստիկանական պատնեշ է և երթի մասնակիցներին թույլ չեն տալիս մոտենալ «Դատապարտյալների հիվանդանոցի» շենքին: Երթի մասնակիցների մեջ են նաև «Սասնա ծռերի» անդամ Հովհաննես Հարությունյանի փաստաբաններ Արա Ղարազյոզյանը և Հայարիի Սարգսյանը, որոնց նույնպես թույլ չեն տալիս անցնել ոստիկանական պատնեշից այն կողմ³⁵⁷:</p>	
<p>Դեպք 4. Ոստիկաններն սեպտեմբերի 8-ին ոչ մարտական պայմաններում մահացած զինվորների մայրերին թույլ չեն տվել մոտենալ ՀՀ նախագահի նստավայրի դարպասներին: 2010 թվականին մահացած Վալերի Մուրադյանի մայրը՝ Նանա Մուրադյանը, նախագահականի դարպասներին հասնելու համար դուրս է եկել փողոցի երթուղիների հատված: Ոստիկաններից մեկը, նույնպես դուրս գալով փողոցի երթուղիների հատված, Մուրադյանին հորդորել է բարձրանալ մայթ՝ ասելով. «Ես իմ կյանքը թանկ եմ գնահատում, կարող ես պատահարի</p>	

³⁵⁴ Տե՛ս «Սասնա ծռեր» զինված խմբի աջակիցները երթ անցկացրեցին: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/28168626.html>

³⁵⁵ Տե՛ս Ակտիվիստներին խոչընդոտում էին քրեակատարողական հիմնարկի դիմաց ակցիա անցկացնել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/02/22/660114/>

³⁵⁶ Տե՛ս Ազատության հրապարակում որոշեցին երթ անել դեպի Բաղրամյան պողոտա. Ոստիկանությունն արգելում է (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/339442.html>: Ցույց Ազատության և Ֆրանսիայի հրապարակներում: Հասանելի է <http://hetq.am/arm/news/69530/cuyc-azatutyun-ev-fransiayi-hraparaknerum.html>

³⁵⁷ Տե՛ս «Սասնա ծռեր» խմբի աջակիցներին թույլ չեն տալիս մոտենալ «Դատապարտյալների հիվանդանոցի» շենքին (ֆոտո): Հասանելի է <http://news.am/arm/news/343005.html>

<p>ենթարկվեմ»: Ոստիկաններն իրենց որդիների մահվան հանգամանքների բացահայտումը պահանջող մայրերին ասել են, որ նախագահականի մոտ արգելված է ակցիա անել³⁵⁸:</p>	
<p>Դեպք 5. Սեպտեմբերի 19-ին աղավնաձորցիներն առավոտից պետք է փակեին միջմարզային գլխավոր ճանապարհը, սակայն ոստիկանությունը գյուղացիներից առաջ է ընկել: Աղավնաձորի բնակիչ Հայկազ Ասատրյանն Aravot.am-ին ասաց, որ իրենց խնդիրը լուծելու համար պատրաստ են կտրուկ քայլերի, և այս անգամ մտադրվել էին փակել գլխավոր ճանապարհը, սակայն ոստիկանները խոչընդոտել են, նրանք աղավնաձորցիներից շուտ են տեղում եղել և հիմա կանգնած են ճանապարհի երկայնքով և թույլ չեն տալիս գյուղացիներին իրենց բողոքի ակցիան անել՝ փակել ճանապարհը³⁵⁹:</p>	
<p>Դեպք 6. Սեպտեմբերի 22-ին Կառավարության շենքի դիմաց էին հավաքվել մշտական բողոքավորները՝ նույն պահանջով: Այստեղ էին Կոնդի, Ֆիրդուսի, Հյուսիսային պողոտայի, Նորք Մարաշի բնակիչները: Նրանց բնակարանները ժամանակին ճանաչվել է պետական գերակա շահը, մնացել ենք դրսում, ինչպես իրենք են նշում, անգամ վարձի գումարը պետությունը մշտապես չի հատկացնում, մեկ ամիս տվել է, մի քանի ամիս չի մուծել: Թեև հավաքվածներից և ոչ մեկի խնդիրն ու ձայնը ցած չբերեցին վարչապետին, սակայն նրանք գտան բողոքը արտահայտելու լուծումներից մեկը՝ փակել ճանապարհը, ինչը, սակայն կանխվեց ոստիկանների ջանքերով³⁶⁰:</p>	
<p>Դեպք 7. Հոկտեմբերի 14-ին Կարո Եղևուկյանի ընտանիքի անդամները, համակիրները և մտերիմները իրականացրին իրազեկման երթ: Կառավարության շենքի մոտ ոստիկանները խոչընդոտեցին երթը և հորդորեցին երթի մասնակիցներին այլ ճանապարհով գնալ³⁶¹:</p>	
<p>հավաքի մասնակիցներին իրենց անհրաժեշտ իրերը հավաքի վայր տանելը խոչընդոտելը</p>	1
<p>Հունվարի 27-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի Ազատության հրապարակում անցկացվող շուրջօրյա նստացույցի մի քանի մասնակիցներ փորձել են նոր ծածկով (հովանոց) մտնել Ազատության հրապարակ, սակայն նրանց մուտքը ոստիկանության կողմից խոչընդոտվեց: Ոստիկանությունը պատ էր կազմել եւ չէր թողնում նրանց առաջանալ: Տարածք ժամանած Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանի եւ Անդրիաս Ղուկասյանի մի քանի բռնի</p>	

³⁵⁸ Տե՛ս Ոստիկանն իր կյանքը թանկ է գնահատում. սևագգեստ մայրերին արգելեցին մոտենալ նախագահականին: Հասանելի է <http://www.epress.am/2016/09/08/ոստիկանն-իր-կյանքը-թանկ-է-գնահատում-.html>

³⁵⁹ Տե՛ս Աղավնաձորցիները փորձել են փակել գլխավոր ճանապարհը, սակայն ոստիկանները նրանցից առաջ են ընկել: Հասանելի է <http://www.aravot.am/2016/09/19/736853/>

³⁶⁰ Տե՛ս Կառավարության դիմաց հավաքվածները փորձեցին փակել ճանապարհը (Տե՛ս անյութ, ֆոտոնշարք): Հասանելի է

<http://hraparak.am/?p=124142&l=am/karavarutyun+dima+c+havaqvacnery+pordzecin+pakel+chanaparhy+tesanyut+fotosha>

³⁶¹ Տե՛ս Դատարանից՝ կառավարություն, այնտեղից էլ՝ Գլխավոր դատախազություն (Ֆոտո, վիդեո): Հասանելի է <http://hraparak.am/?p=126432&l=am/dataranic+karavarutyun+ayntexic+el+glxavor+dataxazutyun+fotovideo>

տեւած քննարկումից հետո թույլատրեց նստացույցի մասնակիցներին վրանատախիպ ծածկ տեղադրել Ազատության հրապարակում ³⁶² : (Հարկ է արձանագրել, որ թեև ոստիկանությունը կատարում էր քաղաքապետարանի որոշումը, այնուամենայնիվ քաղաքապետարանի որոշումն իրավափ չէ, հետևաբար ոստիկանության գործողությունները դառնում են ոչ օրինաչափ)	
քաղաքացիների երթի ճանապարհը խոչընդոտելը	1
Հուլիսի 31-ին Ազատության հրապարակում «Հիմնադիր խորհրդարանի» և «Մասնա ծոեր» գինյալ խմբի համախոհների հանրահավաքից հետո «Մասնա ծոերի» ձեռքակալված անդամների պաշտպանությանն ուղղված երթի մասնակիցները Հյուսիսային պողոտայով շարժվեցին դեպի Հանրապետության հրապարակ, ապա՝ Ամիրյան փողոցով ուղղվեցին Մաշտոցի պողոտա, այնուհետև՝ Ազատության հրապարակ: Երբ երթի մասնակիցները հասան Թումանյան-Մաշտոց խաչմերուկ, ոստիկանները շղթա կազմեցին և փակեցին Մաշտոցի պողոտայով նրանց ճանապարհը՝ պահանջելով մտնել Ազատության հրապարակ և սպառնալով, որ հակառակ դեպքում չենթարկվողներին բերման կենթարկեն ³⁶³ :	
Խտրականությունից զերծ մնալու իրավունք	1
հավաքի մասնակիցների հետ ոչ պատշաճ հաղորդակցվելը	1
Մարտի 21-ին «Հայ կանանց ճակատ» նախաձեռնությունը բողոքի ակցիա էր կազմակերպել Հանրապետության հրապարակում «Ոչ բռնապետությանը» և «Ազատություն քաղաքանտարկյալներին» կարգախոսներով: Երբ ոստիկանները փորձել են կանանց բերման ենթարկել, նրանք շղթա կազմած պառկեցին գետնին: Ոստիկանը պառկած կանանց ասում էր՝ կանայք, խայտառակ եք անում ձեզ, ձեր պատվի հետ եք խաղում: Դա հերիք չի, որ ասաց, դեռ մի հատ էլ ասում էր կանայք, մի ընդդիմացեք, կանայք տղամարդկանց չպետք է ընդդիմանան», - պատմել է նախաձեռնության անդամ Սյուզի Սիմոնյանը ³⁶⁴ :	
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	4
քաղաքացիների նկատմամբ բռնություն կիրառելը	4
Դեպք 1. Մարտի 11-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամները հավաքվել էին ՀՀ Վերաքննիչ դատարանի մոտ: Երբ դատարանը մերժեց ազատ արձակել Գևորգ Սաֆարյանին, անդամները ձվեր նետեցին դատարանի ուղղությամբ: Ոստիկանները բերման են ենթարկել «Նոր Հայաստանի» անդամ Գագիկ Եղիազարյանին: Քաղաքացիական մի քանի ակտիվիստներ կանգնել էին ոստիկանների մեքենայի առաջ, որպեսզի նրան չտանեն, սակայն ակտիվիստներին քաշքշելով դուրս բերեցին մեքենայի մոտից ³⁶⁵ :	
Դեպք 2. Հուլիսի 23-ին ձեռքակալվել է քաղաքացիական ակտիվիստ Անի	

³⁶² Տե՛ս Մենք օրենքն անՏե՛ս եցինք, ինչի իրավունքը չունենինք. Աշոտ Կարապետյանը՝ «Նոր Հայաստան»-ին: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/78418>

³⁶³ Տե՛ս Ոստիկանությունը սպառնում է բերման ենթարկել երթի մասնակիցներին: Հասանելի է <http://168.am/2016/07/31/669349.html>

³⁶⁴ Տե՛ս Սյուզիան Սիմոնյան. «Ոստիկանը պառկած կանանց ասում էր՝ կանայք, խայտառակ եք անում ձեզ»: Հասանելի է <http://www.aravot.am/2016/03/21/669745/>

³⁶⁵ Տե՛ս Չվեր՝ Վերաքննիչ քրեական դատարանի ուղղությամբ. ակցիա (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.alplus.am/1440127.html>

<p>Նավասարդյանը: Նա այժմ ժամանակավոր պահման մեկուսարանում է: Իրավաբան.net-ի հետ զրույցում նրա պաշտպան Ստեփան Ոսկանյանը հայտնել է, որ Անի Նավասարդյանը ձերբակալվել է՝ զանգվածային անկարգություններ հրահրելու կասկածանքով: Պաշտպանը նաև ասել է, որ Անին հրաժարվել է ցուցմունք տալ, միայն ներկայացրել է մարմնի վնասվածքներն ու դրանց պատճառները: Չախ ուսին ֆիքսված վնասվածքը, նրա պնդմամբ, ստացել է, իրեն բերման ենթարկելու պահին³⁶⁶:</p>	
<p>Դեպք 3. «Մասնա ծոերի» կողմից գրավված ՊՊԾ գնդի հարակից տարածքում էր Վիկտոր Գրիգորի Բենինչյանը: Նա ներկայացավ իբրև մարշալ Բաբաջանյանի քրոջ թոռ և «Մեծն Տիգրան» ջոկատի հրամանատար Արմենակ Արմենակյանի տեղակալ: Ըստ ազատամարտիկի, իրեն հուլիսի 24-ի 17.20-ի սահմաններում ոստիկանները ծեծել են այն բանի համար, որ նա ցանկացել է մտնել ՊՊԾ գնդի տարածք և հորդորել Պավլիկ Մանուկյանին՝ վայր դնել զենքերը, քանի որ «հայր հայի դեմ չպիտի դուրս գա»: Ըստ մեր գրուցակցի, ինքը փորձել է ձեռքել ոստիկանական պատնեշը և ներս մտնել, այդ պատճառով էլ իրեն քաշքշել են, հետո հետևից խփել: Նրան տեղափոխել են Էրեբունի հիվանդանոց: Գիշերն այնտեղ է անցկացրել, առավոտյան տեսել է, որ իրեն լավ է զգում, կրկին եկել է³⁶⁷:</p>	
<p>Դեպք 4. Դեկտեմբերի 12-ին «Նաիրիտ» գործարանի աշխատակիցները կրկին փակել են գործարանի դիմացի Բագրատուկյաց պողոտան պահանջելով վճարել իրենց 6 ամսվա աշխատավարձը: Ոստիկանները ուժ կիրառելով, հրելով «Նաիրիտ» գործարանի աշխատակիցներին հեռացրին ճանապարհից եւ բացեցին մոտ 50 բուստ փակ մնացած Բագրատուկյաց պողոտան: Ոստիկանները պատ կազմած հետեւում էին, որպեսզի ճանապարհը չփակվի³⁶⁸:</p>	
<p>ԸՆԴԱՄԵՆԸ</p>	<p>163</p>

2016 թ.-ին ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերի վերաբերյալ ահազանգերի ամփոփում

2016 թ.-ին մենք բացի անհատական բնույթի և հավաքների և դրանց մասնակցելու արդյունքում խախտված իրավունքների, խախտման դեպքերն առանձնացրել ենք նաև ըստ ահազանգերի: Դրանք այն դեպքերն են, որոնք ներկայացնում են ականատեսների վկայությունները երրորդ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ: Այսպիսով, 2016 թ.-ին արձանագրվել է 7 նման դեպք, որոնք տեղի են ունեցել Երևանում հուլիսի 17-27-ն ընկած ժամանակահատվածում:

³⁶⁶ Տե՛ս Անի Նավասարդյանին ձերբակալել են. կասկածում են զանգվածային անկարգություններ հրահրելու մեջ: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/23/719065/>: Քննիչը բերման ենթարկված Անիի հագուստն էր պահանջում: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/25/719446/>

³⁶⁷ Տե՛ս Խորենացի փողոցում ծեծված ազատամարտիկը «Մասնա ծոերին» հորդորում է՝ վայր դնել զենքը (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/26/720057/>

³⁶⁸ Տե՛ս Ոստիկանները նաիրիտցիներին հեռացրին ճանապարհից. թարմացված (Տե՛ս անյուր): Հասանելի է <http://www.a1plus.am/1508017.html>

Ահագանգերի համաձայն, միայն հուլիսի 17-ին խախտվել է ամենալավատեսական գնահատականով միջինը 150 անձի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները և միջինը 75 հոգու՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, արդար դատաքնության, իրավաբանական օգնություն ստանալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու և գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունքները, մի դեպքում խախտվել է 100-ից ավել անձանց խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները, իսկ 4 դեպքում հնարավոր չի եղել որոշել, թե քանի անձի իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում ահագանգերի արդյունքում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության)

Խախտված իրավունքը և դեպքի նկարագրությունը	Դեպքերի թիվը
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	2
բերման ենթարկելը	2
Դեպք 1. Իրավապաշտպանների գնահատականներով՝ հուլիսի 17-ին բերման ենթարկված անձանց թիվն անցնում է 200-ից: Նրանք հայտնել նաև, որ բազմաթիվ քաղաքացիների ոստիկանները պարզապես տարել են անհայտ ուղղությամբ և նրանց հարազատները մինչ այս պահը տեղեկություն չունեն իրենց բարեկամներից ³⁶⁹ :	
Դեպք 2. Հուլիսի 27-ի առավոտվանից բերման ենթարկվածների թիվը անցնում է 100-ից ³⁷⁰ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացիներին բռնության ենթարկելը	1
«Ազատության» լրագրողը հայտնել է, որ քաղաքացիներից մեկն ասել է՝ տեսել է, թե ինչպես է դիմակավորված ոստիկաններից մեկը հարվածներ հասցնում քաղաքացիներին ³⁷¹ :	
<ul style="list-style-type: none"> ● Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	1
քաղաքացուն ուժի կիրառմամբ բերման ենթարկելը	1
«Գագանաբար մարդկանց ծեծում էին, վիրավորում, անձնական	

³⁶⁹ Տե՛ս Բերման ենթարկվածների թիվն անցնում 200-ից: Հասանելի է <http://armtimes.com/hy/read/89781>

³⁷⁰ Տե՛ս Առավոտից Խորենացի փողոցից բերման ենթարկվածների թիվն անցնում է 100-ից: Հասանելի է <http://www.azatutyun.am/a/27884664.html>

³⁷¹ Տե՛ս Ըստ քաղաքացու՝ դիմակավորված մի ոստիկան հարվածել է Սարի թաղի բնակիչներին: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/20/717417/>

<p>վիրավորանքներ էին ասում տարբեր կարգի, թքում էին մարդկանց վրա, 7-8 հոգով հարվածում էին մարմնի տարբեր մասերին».- պատմում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Վիլեն Գաբրիելյանը, ով առավել հայտնի է որպես ֆեյսբուքյան Նավակ Ճոճոդ: Նրա խոսքերով՝ այնտեղ գտնվող անձանց ևս դաժան ծեծի են ենթարկել, առանց հաշվի առնելու տարիքը, և մինչ մեքենան կշարժվեր, ծեծված անձինք ականատես են եղել այլ բռնության տեսարանների. «Դուրսը տեսել ենք էլի բազմաթիվ միջադեպեր, երբ 7-8 հոգով հասնում էին, քաղաքացիներին տապալում էին գետինը, ոտքերով ձեռքերով հարվածում էին, այն աստիճանի զազազած էին ոստիկանները, որ անգամ որոշ վերադասների հրամաններին չէին էլ ենթարկվում³⁷²:</p>	
<ul style="list-style-type: none"> ● Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք ● Արդար դատաքնության իրավունք ● Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ● Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք ● Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	1
<p>քաղաքացիներին բերման ենթարկելը, ֆիզիկական բռնություն կիրառելը, բժշկական օգնություն չտրամադրելու</p>	1
<p>«Իրագեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության համակարգող Դանիել Իոաննիսյանը տեղեկացրել է, որ քաղաքացիների պատմածով հուլիսի 17-ին ոստիկանության զորքերի 1033 զորամասում մի քանի տասնյակի ներսում բռնության են ենթարկել, ծեծել են: Կոնկրետ կար մարդ, որը պատմում էր, թե ինչպես են իրեն ծեծել, կար քաղաքացի, որը բանավոր վկայություն էր տալիս, որ քաղաքացուն ծեծել են: քաղաքացիների մեծ մասի հեռախոսները ոստիկանները վերցրել են, սակայն մի մասին հաջողվել է պահել իրենց հեռախոսները և կարճ հաղորդագրությունների միջոցով կապ հաստատել: Նա հայտնեց, որ մարդիկ ասում էին՝ հաշվել են ներսում 102-106 մարդ է պահվում: Նիկոլ Փաշինյանի նկատառմանը, որ դուրս եկած կանանցից մեկն ասում էր, որ մոտ երեք հարյուր հոգի կան ներսում, Դանիել Իոաննիսյանը պատասխանեց, որ չի կարող ասել՝ հնարավոր է, որ քաղաքացիներին տարբեր վայրերում են պահում: ոմանց մինչև 13 ժամ ներսում պահել էին, մարդկանց սնունդ չէին տալիս և պատշաճ բուժօգնություն և չէին տրամադրում, իսկ դրա կարիքը հիմնականում ծեծվածներն ունեին», - ասաց Դանիել Իոաննիսյանը:</p> <p>«Ժողովրդավարական ուղի» կուսակցության անդամ Վիգեն Դավթյանը պատմել է, որ ականատես է եղել բազմաթիվ ծեծված քաղաքացիների: «Այդտեղ այն կարգի սարսափելի ձևով մարդիկ էին գալիս,</p>	

³⁷² Տե՛ս Այնքան զազազած էին ոստիկանները, որ անգամ վերադասների հրամաններին չէին էլ ենթարկվում. Վիլեն Գաբրիելյան: Հասանելի է <http://hraparak.am/?p=118123&l=am/aynqan+gazazac+einvostika+neryvor+angam+veradasneri+hramanerin+chein+el+entarkvum+vilen+gabrielyan>

արյունաշաղախի ձևով, որ այդ մարդկանց ուղղակի որս անելով, հայհոյելով բերել են ³⁷³ :	
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	1
քաղաքացու բնակարան ներխուժելը	1
Սարի թաղի բնակիչներն հուլիսի 24-ին Խորենացի փողոց էին եկել պաստառներով: Նրանք պահանջում էին ազատ արձակել իրենց թաղամասի բնակիչներին, որոնք ձերբակալվել են օրեր առաջ՝ Սարի թաղում տեղի ունեցած իրադարձություններից հետո: Մինչև Խորենացի փողոց հասնելը, նրանք ակցիա են կազմակերպել նաև Սարի թաղում. «Մենք կանանցով մոտեցանք ոստիկաններին և պահանջեցինք ազատ արձակել և այլևս չհետապնդել մեր տղաներին: Նախ, ընդհանրապես չպատասխանեցին մեր հարցերին, հետո ծիծաղում էին մեզ վրա, իրենք իրար հետ զրուցելով ծիծաղում էին, երբ խոսում էր կալանավորի մայրը»: Բնակիչները պատմեցին նաև, որ ամեն օր ոստիկանները անհանգստացնում են իրենց. «Գալիս են տները, դարակներն են բացում, սանհանգույցից են անգամ մարդ տանում» ³⁷⁴ :	
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	1
անգործություն	1
Հուլիսի 24-ին «Հայ կանանց ճակատի» անդամ Սյուզան Սիմոնյանը տեղեկացրել է, որ անցած օրերին Սարի թաղից վեց տղայի առևանգել են և տարել Թոխմախու հենց Թոխմախի Միերի աչքի առջև ծեծի և խոշտանգման ենթարկել: Հետո երբ բաց են թողել, ասել են, եթե որևէ մեկին բողոքեք, կսպանենք»: Արձանագրենք, որ ոստիկանությունը որևէ կերպ չի արձագանքել այս հայտարարությանը և ոստիկանության կողմից որևէ գործողություն ձեռնարկելու մասին տեղեկություններ չկան ³⁷⁵ :	
ԸՆԴԱՄԵՆԸ	7

³⁷³ Տե՛ս Դանիել Իռաննիսյան. Ոստիկանները ծեծել են բերման ենթարկված մի քանի տասնյակ քաղաքացիների: Հասանելի է <http://www.aravot.am/2016/07/18/716418/> և Սերժիկ Սարգսյան և Վլադիմիր Գասպարյան, ձեր շներին դաստիարակեք. բերման ենթարկված: Հասանելի է <http://armtimes.com/hy/article/89818>

³⁷⁴ Տե՛ս «Սանհանգույցից են անգամ մարդ տանում». Սարի թաղի կանանց բողոքը (Տե՛ս անյութ): Հասանելի է <http://www.a1plus.am/1475161.html>

³⁷⁵ Տե՛ս Հանրահավաքից տեղեկացրեցին, որ Սարի թաղից վեց տղայի առևանգել են և տարել Թոխմախու. Սյուզան Սիմոնյան: Հասանելի է <http://galatv.am/hy/news/158349/>

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1

2015 և 2016 թթ.-ին գրանցված մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերը

Խախտված իրավունք	Խախտումների թիվն ըստ տարիների	
	2015 թ.	2016 թ.
Ազատ տեղաշարժվելու իրավունք	4	5
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	0	5
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք • Արտահայտվելու ազատության իրավունք 	0	1
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Արտահայտվելու ազատության իրավունք • Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք 	0	1
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Արտահայտվելու ազատության իրավունք • Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք • Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք • Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք 	0	2
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք 	0	1
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք • Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 	0	1
<ul style="list-style-type: none"> • Ազատ տեղաշարժվելու իրավունք • Գույքի անձեռնմխելիության և սեփականության իրավունք • Արտահայտվելու ազատության իրավունք 	0	1
